# ԷՋՄԻԱԾԻՆ



Ժ
2000

ԾԶ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Հոկտեմբեր
2000

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Տեղեկագրություն Վեհափառ Հայրապետի Եգիպտոս և Եթովպիա այցելությունների մասին . . . 3
Վեհափառ Հայրապետի այցելությունը Եգիպտոս և Եթովպիա (Զետեղված է նաև «Համատեղ հայտարարություն Շնուդա Գ Պատրիարքի և Գարեգին Բ Կաթողիկոսի միջև») . . . 4
Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր փնօրհնությամբ նշանակվել է Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմ . . . 25

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արժանապատիվ Տ. Գառնիկ ավագ քահանա Հալաջյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . 26
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արմեն Ջիգարխանյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին . . . 28
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սանդրո Բեհբուդյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին . . . 30
Վեհափառ Հայրապետի Օրհնության և գնահատանքի գիրը Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին՝ քահանայական գործունեության քսան և Կանադայի հայոց թեմի առաջնորդության փասնամյակների առիթով . . . 32
Հայրապետական պարգևաբաշխություններ . . . 34
Գարեգին Բ Կաթողիկոսի ուղերձը հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունների տարելիցի առիթով . . . 35
Գարեգին Բ Կաթողիկոս. «Երանի նրանց, ովքեր թողնում են արժանի գործեր» . . . 37
Նոր նշանակումներ Հայ Առաքելական Եկեղեցու թեմերում . . . 39
Ձեռամբ Գարեգին Բ Կաթողիկոսի օծվեց Տավուշի Ս. Սարգիս եկեղեցին . . . 40
Վերաօծվեց Մուղնու Ս. Գևորգ եկեղեցին . . . 41

«Քրիստոնեություն և իրավունք» խորագրով միջազգային խորհրդաժողով Մայր Աթոռում . . . 42
Ծառատունկ՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակի . . . 43
Ցնծության օր Արագածոտնի թեմում . . . 44
Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց բժշկական համալսարանում ախտորոշիչ կենտրոնի բացմանը . . . 44
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց ՄՄԿ-ի գլխավոր տնօրեն Բրանտոն Մաք-Քինլիին . . . 45
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց ՀՕՖ-ի տնօրեն-խորհրդի անդամներին . . . 46

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

**ԱՆՈՒՇԱՒԱՆ ԱԲԵՂԱՅ ԺԱՄԿՈՉԵԱՆ** - Ազգային հոգեւոր գանձերը անաղարտ պիտի մնան . . . 47
**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** - Աստվածաշնչի էկումենիկ մեկնաբանության շավիղներով . . . 52
**ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆ** - Ս. Մեսրոպ Մաշտոցի Ապաշխարության երգերը . . . 73

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

**ՎՐԵԺ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - Հայ հոգևորականները 450-451 թթ. ժողովրդա-ազատագրական պատերազմի հորձանուտներում . . . 79
**ԵՐԱՆՈՒՀԻ ՄԵԼԻՔ-ՄՈՒՐԱԴՅԱՆ** - Աստղիկ դիցուհու պաշտամունքի վայրերը . . . 88
**ՔՆԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ** - Հայոց եկեղեցու Ավագ խորանի վարագույրների պատկերագրությունը . . . 93

## ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ** - Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի Կլոր Սեղանը և միջեկեղեցական էկումենիկ համագործակցությունը ընկերային ծրագրերի ոլորտում . . . 103

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ** - «Լուսավորչի լույս նշխարները» . . . 113

**ՍՏԵՓԱՆ ԿԵՐՏՈՂ** - Ս. Էջմիածնի Մայր Տաճարը կդառնա ավելի գեղեցիկ . . . 115
Եկեղեցական բեմ. լուրեր . . . 118

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ԱՆԴՐԱՆԻԿ ՁԵՅԹՈՒՆՅԱՆ** - «Լույս» շաբաթաթերթի մատենագիտություն (1905-1906) . . . 120

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . 130
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . 133
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . 136

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Հոկտեմբերի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Շնուդա Գ Պատրիարքի հրավերով մեկնեց Եգիպտոս:

Վեհափառ Հայրապետը մի շարք հանդիպումներ ունեցավ Ղպտի Եկեղեցու հոգևոր պետ Շնուդա Գ-ի, Հույն Եկեղեցու պետ Պետրոս Է Պատրիարքի, Ալ Ազհարի Շեյխ Մեծ իմամ Ալ Թանտաուի հետ:

Հոկտեմբերի 18-21-ը Վեհափառ Հայրապետը Եթովպիայի Թևահեդո Ուղղափառ Եկեղեցու պետ Աբունա Պաուլոս Պատրիարքի հրավերով այցելեց նաև Եթովպիա:

Օգտվելով Եգիպտոս և Եթովպիա գտնվելու բարեպատեհ առիթից, Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ նաև այդ երկրների հայկական համայնքների ներկայացուցիչների հետ:

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍ ԵՎ ԵԹՈՎՊԻԱ

Սույն թվականի նոյեմբերի 12-ին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Հովվապետ Նորին Սրբություն Շնուդա Գ Պատրիարքի հրավերով մեկնեց Եգիպտոս ու Եթովպիա հովվապետական անդրանիկ այցելությամբ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ, Գերշ. Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Գերշ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Կոտայքի թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Առաքել եպս. Քարամյանը, ՀՀ զինված ուժերի Հոգևոր ծառայության առաջնորդ, Հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը՝ որպես գավազանակիր, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ պրն Ֆադեյ Սարգսյանը:

Փարիզի Շառլ դը Գոլ օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ, Գերշ. Տ. Գյուտ արքեպս. Նազգաշյանը, հոգևորականաց դասը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան պրն Էդվարդ Նալբանդյանը, ինչպես նաև ազգային իշխանությանց ներկայացուցիչներ: Հյուրանոցում կարճատև հանգստից հետո Վեհափառ Հայրապետը և իր շքախումբը Փարիզից մեկնեցին Կահիրե:

## ԵԳԻՊՏՈՍ

Կահիրեի Ազգային օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Ղպտի Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, Եգիպտոսում ՀՀ լիազոր դեսպան պրն Սերգեյ Մանասարյանը, թեմական խորհրդի անդամներ:

Վեհափառ Հայրապետն իր շքախմբով առաջնորդվեց դեպի Ղպտի Եկեղեցու Ս. Մարկոս Մայր Տաճար, ուր շուրջ յոթ հազար հավատացյալներ հավաքվել էին դիմավորելու Ամենայն Հայոց Հայրապետին: Եկեղեցին զարդարված էր փոնականորեն: Եկեղեցու բակում Վեհափառ Հայրապետին դիմավորեց Նորին Սրբություն Շնուդա Գ Պատրիարքը և առաջնորդեց փաճարից ներս: Նորին Սրբություն Շնուդա Գ Պատրիարքը բարի գալուստի և ողջույնի խոսք ասաց Վեհափառ Հայրապետին և հանգամանալից ներկայացրեց Ղպտի Եկեղեցու աշխատանքները՝ հատկապես երիտասարդության շրջանակներում: Նա պատմեց Կիրակնօրյա դպրոցների առաքելության մասին: Խոսքի վերջում Նորին Սրբությունը հրավիրեց Վեհափառ Հայրապե-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ.
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱՄԲԱ ՇՆՈՒԴԱ Գ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ

պին՝ իր Հայրապետական օրհնությունը բաշխելու Ղպտի Եկեղեցու հավատացյալներին:

Վեհափառ Հայրապետը գոհություն հայտնեց Բարձրյալ Աստծուն, որ առիթ է ընծայել իրեն Եգիպտոսի օրհնյալ հողում հայրական օրհնություն տալու ղպտի հավատացյալներին, և շարունակեց.

*«Սիրելի եղբայր Մեր ի Քրիստոս.*

*Մեր այցը Եգիպտոս, որ իրական դարձավ Ձերդ Սրբության բարեհաճ ու սիրալիր հրավերքով, հնագույն մեր Եկեղեցիների դարավոր եղբայրության նոր հավաստումն է: Որպես նորընտիր Հայրապետ Ամենայն Հայոց, եկել ենք հաստատելու ի Քրիստոս եղբայրության մեր սրբազան ուխտը: Այսօր մեր հանդիպման երջանիկ առիթով բերկրությամբ է համակված Մեր հոգին, ու Մեր շուրթերից գոհունակության ու փառաբանության աղոթքն է բարձրանում առ Աստված: Մեզ համար սրտի մեծ հրճվանք է ողջունել Ս. Մարկոս առաքյալի և ավետարանչի հիմնած եկեղեցու Պետին և կրկնակի հրճվանք է հանձին Ձերդ Սրբության ողջունել Ղպտի Եկեղեցու եպիսկոպոսական դասը, բոլոր եկեղեցականներին և առանձնապես՝ անապատական վանականությանը:*

*Մենք խորին հուզմունքով ենք ոտք դնում Եգիպտոսի հինավուրց հողին, որ կնիքն է կրում ժամանակների ու քաղաքակրթությունների, և որտեղ առաքելական օրերից արգասավոր հող գտավ Քրիստոսի Ավետարանի կենսատու խոսքը:*

*Քրիստոնեական ավանդությամբ հարուստ է Ղպտի Ուղղափառ Եկեղեցին, որի ակունքները զուլալ ու հորդառատ են՝ սկիզբ առնելով Ընդհանրական Եկեղեցու Ալեքսանդրյան հայրերի, մեծ ճգնակյացների ու վանականների քրիստոսաբույր կյանքի օրինակից: Ղպտի Ուղղափառ Եկեղեցին սրբազան իր առաքելության՝ Հավատով, Հույսով ու Սիրով Տիրոջ փրկարար խաչի ճանապարհով առաջնորդում է հավատավոր իր ժողովրդին, որը, ինչպես և հայ ժողովուրդը՝ հակառակ կրած բազում փորձությունների, ապրել և ապրում է «հավատք քո կեցուցին զքեզ» աստվածաշնչյան պատվիրանի իմաստնությամբ:*

*Ուրախությամբ է լցվում հոգիս, երբ տեսնում եմ այստեղ Մեզ դիմավորելու եկած հազարավոր երիտասարդների: Մեր կյանքում երիտասարդությունը խանդավառիչ ուժ է և մեր գոյության իմաստավորողը: Մենք ուրախությամբ լսեցինք քրիստոնեական ուսուցման գործունեության մասին, որ իրականացնում եք Դուք՝ Ձերդ Սրբությունը, եպիսկոպոսաց դասը, ողջ հոգևոր միաբանությունը Ղպտի Եկեղեցու: Ձերդ Սրբությունը թվարկեց այն շարքը, թե ովքեր իրավունք ունեն քարոզելու և ուսուցանելու Քրիստոսի Ավետարանը, մեր Հայրերի սուրբ պատգամները և ուսմունքները: Հիշա-*

պակվեցին հոգևորականաց. սարկավագաց դասերը և Կիրակնօրյա դպրոցների ուսուցիչները՝ որպես ուսուցանողներ և քարոզիչներ: Ես պետք է ավելացնեմ. լավագույն քարոզիչներն ու ուսուցանողները հավատացյալ ժողովրդի զավակներն են՝ իրենց հավատավոր կյանքի դրսևորումներով:

Ձերդ Սրբություն, համայն հայության հավատի օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր ժողովրդի ողջույնն ու սերը և Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերել բարեպաշտ ղպտի ժողովրդին և ձեր արգասաբեր ու հյուրընկալ երկրին, որ դարեր ի վեր սրտաբացորեն ընդունել և ապաստան է տվել մեր ժողովրդի զավակներին:

Ներկայիս քույր մեր Եկեղեցիների և քրիստոնյա մեր երկու ժողովուրդների բարեկամությունը արգասավորվում է եգիպտահայ համայնքի և Եգիպտոսի հայոց թեմի միջոցով, որ բոլորանվեր ու ծրաջան առաջնորդությամբ Գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի՝ ազատորեն ապրում է այստեղ քրիստոնեական-ազգային իր ավանդույթներով և ղպտի ժողովրդի ու Եգիպտոսի մյուս ժողովուրդների հետ մասնակցում այս օրհնյալ երկրի խաղաղ ու ստեղծագործ կյանքին:

Մենք հավատում ենք քույր մեր Եկեղեցիները միմյանց կապող եղբայրական սիրո զորությանը, և այսօր եկել ենք միասնաբար աղոթելու, որ արարչագործ, երկնապարգև սերը ընդգրկի մեր հավատքի ժայռի վրա հիմնըված բոլոր Եկեղեցիները և շաղախը դառնա նրանց միության: Մենք հավատում ենք, որ Ձեր Եկեղեցու հիմնադիր Ավետարանիչ Սուրբը և մեր Եկեղեցու հիմնադիր Սրբազան երկու Առաքյալները բարեխոս են առ Աստված, որ Տերը պահպանի և անսասան պահի քրիստոնեական բոլոր Եկեղեցիները իրենց առաքելականության մեջ: Աղոթում ենք նաև, որ Ավետարանի լույսը շարունակի տարածվել աշխարհում, և իրականանա Սուրբ Մարկոսի արձանագրած Քրիստոսի խոսքը. «Բայց նախ պարտ է Աւետարանն քարոզել»:

Ձերդ Սրբություն, սիրելի Եղբայր, թույլ տվեք Մեր շնորհակալությունը հայտնել Ձեզ հրավերի և ընդունելության համար: Մենք ուրախ ենք, որ Մեր անդրանիկ այցելությունը Եգիպտոս, որպես Ամենայն Հայոց Հայրապետի, առիթ է ընձեռում Մեզ անձամբ բերկրաշատ հոգով հրավիրել Ձեզ 2001 թ. այցելելու Հայաստան և մասնակցություն բերելու Հայ Առաքելական Եկեղեցու մեծ տոնին՝ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանին:

Մեր հանդիպման առիթով վերստին զոհություն առաքելով Բարձրյալին՝ հայցում ենք, որ Տերն Իր օրհնության ու խնամքի ներքո հաստատուն պահի Ղպտի Ուղղափառ և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցիները, հավատքն ու քրիստոնեական եղբայրությունը մեր ժողովուրդների, քանզի «ամենեքին,

*որ յուսացեալ են ի Նա ըստ ազգս ազգս իւրեանց՝ ոչ պկարացին» (Ա Մակ. Բ 61)»»:*

Ուշ երեկոյան Ս. Մարկոս եկեղեցուց Վեհափառ Հայրապետն իր շքախմբով մեկնեց դեպի եգիպտահայոց թեմի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր հարյուրավոր հայորդիներ հավաքվել էին դիմավորելու Ամենայն Հայոց Հայրապետին:

Ամպհովանիով և «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ Վեհափառ Հայրապետն ուղեկցվեց փաճարից ներս, ուր կանոնական աղոթքից հետո բարի գալուստի խոսք ասաց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը: Սրբազան Հայրն իր խոսքում կարևորեց Ամենայն Հայոց Հայրապետի անդրանիկ Հովվապետական այցը Եգիպտոս՝ համայնքի ներքին կյանքի էլ ավելի աշխուժացման և նրա՝ Մայր Հայաստանին և Մայր Աթոռին կապվածությունը ամրապնդելու նպատակով: Իր խոսքի ավարտին Սրբազան Հայրը խնդրեց, որ Վեհափառ Հայրապետն Իր Հայրապետական օրհնությունը փոխանցի ներկա ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը, ջերմագին ողջունելով Սրբազան Հորը, թեմական և քաղաքային ժողովների ներկայացուցիչներին, հատկապես ներկա հավատացյալներին, ասաց.

*«Սիրելի Սրբազան, սիրելի բարեպաշտ հայորդիք, սիրելի հավատավոր և հարազատ զավակներ մեր Մայր Եկեղեցու.*

*Եվ փառք և գոհություն ենք մատուցանում առ Աստված, որ Մեր գահակալության և Հայրապետության առաջին իսկ տարում այս շնորհն ընծայեց Մեզ՝ հովվապետական և հայրապետական այցով գտնվել Եգիպտոսի ավանդաշատ և հինավուրց հողում և Մեր հարգանքը մատուցել մեր քույր Ղպտի Եկեղեցու պետ Շնուդա Գ Պատրիարքին, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ս. Լուսավորչի անունը կրող այս փառաշուք եկեղեցում աղոթել առ Աստված՝ միահյուսված եգիպտահայ Մեր հավատացյալ զավակների հոգուց դեպի երկինք խնկի քուլաների հետ բարձրացող աղոթքներին:*

*Քիչ առաջ Մենք հյուրընկալվեցինք Ս. Մարկոս եկեղեցում: Մեծ խանդավառությամբ Ղպտի Եկեղեցու հավատացյալներն ընդունեցին Մեզ: Մենք տեսանք մեր քույր Եկեղեցու հզոր հավատքի պոռթկումը: Մենք տեսանք խանդավառ երիտասարդներ, տեսանք խանդավառ հավատացյալ ժողովուրդ: Մենք տեսանք սիրող ծնող՝ հանձին Ղպտի Եկեղեցու Պետի, և փոխադարձաբար սիրող զավակների՝ ի դեմս իրենց առաջնորդի: Եվ փառք ու գոհություն մատուցեցինք, որ քրիստոնեական հավատքն այսպիսի ուժգնությամբ կենդանի է և հրաշագործում է Եգիպտոսի օրհնյալ աստվածաշնչական սուրբ հողում:*

*Այս պահին մեծ է Մեր գոհունակությունը, Մեր մխիթարությունը, որ գտնվում ենք Հայոց եկեղեցում: Եկեղեցի, որ ձեր հավատքով, քրտինքով, աշխատանքով է կերտվել, և որի կամարների ներքո համախումբ՝ դուք կարողացել եք պահպանել ձեր ազգային ինքնությունը, ձեր հոգու հայացքը հառած դեպի Հայաստան մեր մայր երկիրը:*

*Ճշմարիտ է ասված, թե յուրաքանչյուր հայի հոգին կապված է Ս. Գրիգոր Լուսավորչի Աջին, կապված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մեր հավատի նվիրական կենտրոնին, որտեղից գալիս ենք մենք՝ բերելով ձեզ օրհնություններ, բերելով հայաստանաբնակ ձեր եղբայրների և քույրերի սերը, ողջույնը և պատգամը, որպեսզի դուք շարունակեք այստեղ ապրել որպես ազնիվ քաղաքացիներ, որպես հայրենասեր հայորդիք՝ հավատարիմ ձեր հայրերի սրբազան հավատքին, հավատարիմ մեր ազգային ժառանգությանը, մեր եկեղեցական ավանդությանց, որով միայն երաշխավորված է մեր կյանքի ընթացքը դեպի նոր հազարամյակներ:*

*Հայրենիքը ձեզ է բերել անկախություն: Այսօր դժվարությանց միջով է անցնում մեր ժողովրդի կյանքը հայրենիքում: Հայը շարունակում է մաքառել, պայքարել իր անկախության, իր ազատ ապրելու աստվածաշնորհ իրավունքի համար: Հակառակ բոլոր տեսակի բազում դժվարությունների, հանձնառությունների, նեղությունների, որ կրում են մեր ժողովրդի զավակունք, ահա արդեն տասը տարիներ հավատքով, հույսով և վճռականությամբ են լցված նրանց հոգիները, հաստատուն ու ամուր է նրանց կամքը Հայրենիքը զորացնելու, շենացնելու և կյանքը բարօր դարձնելու հայոց պատմական հողի վրա, Մասյաց հայացքի ներքո, Էջմիածնի օրհնության ներքո:*

*Մենք գոհունակ սրտով Մեր աղոթքն ենք առաքում առ Աստված, որ Տիրոջ բարի հայացքը միշտ լինի մեր ժողովրդի վրա ի Հայաստան, հԱրցախ և ի սփյուռս աշխարհի, որպեսզի մեր ժողովրդի զավակունք կարողանան Հայրենիքի սերն իրենց հոգում ապրել, հավատալ, որ աստվածապարգև մի գեղեցիկ օր համախմբվենք ազգովին մեր մայր հողում: Այս առիթով Մեր սրտի գոհունակությունն ենք ուզում հայտնել Ջավեն արքեպս. Չինչինյանին, որ նախաձեռնողությամբ կազմակերպեց Մեր այցը Եգիպտոս: Մեր գնահատանքն ենք ուզում հղել մեր պատվարժան դեսպանին, որը Սրբազանի հետ սիրտ սրտի տված, մեկ ամբողջություն դարձած՝ գործում է մեր ժողովրդի բարօր կյանքի համար Հայրենիքից հեռու, Նեղոսի ափերին կայք հաստատած հայության համար: Մենք մեր գնահատանքն ենք ուզում հղել այս պահին ձեզ, սիրելի՛ հայորդիք, որ այս ուշ ժամին ձեր քայլերն եք ուղղել Առաջնորդարան, դեպի այս սուրբ վանքը՝ ողջունելու և բարի գալուստ մաղթելու ձեր Հայրապետին, նրանից օրհնություն ստանալու և նրա շուրթերից ընդունելու ողջույնը հայրենական, ողջույնը նվիրական*

*Մասյաց լեռներից ձեզ բերված: Ձեր հավատքի մասին, ձեր օրինակելի կյանքի, ձեր հայրենասիրության մասին լսել ենք մշտապես:*

*Թող Տերն Իր Աջը հովանի դարձնի ձեզ վրա, թող Տերը զորացնի ձեզ ձեր հավատքի մեջ, հույսը խանդավառ պահի ձեր մեջ, սերը՝ անսպառ, որպեսզի հավատքով, հույսով ու սիրով շարունակեք կերտել ձեր կյանքը՝ հայրենասիրությունը դարձնելով եկեղեցաշինության նվիրական գործ:*

*Աստուծո օրհնությունն եմ հայցում, նաև շնորհք ու սեր, և մաղթում արձակման աղոթքով խաղաղություն ձեր ընտանեկան օջախներում, ձեր հոգիներում: Թող Աստված օրհնի ձեզ»:*

Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետին նույն խանդավառությամբ ուղեկցեցին Առաջնորդարան, ուր մտերմիկ զրույց տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի և թեմական ու քաղաքային ժողովների անդամների միջև:

Ուշ երեկոյան Վեհափառ Հայրապետը և իր շքախումբը մեկնեցին «Մարիոտ» հյուրանոց:

Հաջորդ օրը, առավոտյան ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետը, առաջնորդ Սրբազանի և Եգիպտոսում ՀՀ դեսպան, տիար Սերգեյ Մանասարյանի ուղեկցությամբ, մեկնեց Ալեքսանդրիա, որտեղ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու դարպասների մոտ նրան դիմավորեցին տեղի հայ համայնքի ներկայացուցիչները և ամպհովանիով ու «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ ուղեկցեցին եկեղեցու ատյան: Եկեղեցու բակում հավաքվել էին բազմաթիվ հայորդիներ, դպրոցական տարիքի պատանիներ՝ Ալեքսանդրիայի հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Մուրադյանի գլխավորությամբ: Կանոնական աղոթքից հետո, հանուն Ալեքսանդրիայի հայ համայնքի, Վեհափառ Հայրապետին ողջույնի և բարի գալուստի մաղթանք ուղղեց առաջնորդ Սրբազանը և իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետին հրավիրեց իր Հայրական օրհնությունները բաշխելու ներկա հավատացելոց:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում մեծապես կարևորեց յուրաքանչյուր հայի կապվածությունը հայրենիքին՝ նշելով, որ Հայաստանի իրենց քույրերն ու եղբայրները բազում զրկանքներ են կրել վերջին տասը տարիներին, բայց և այդ զոհաբերությունների ու դժվարությունների հաղթահարման արդյունքում ունենք անկախացյալ Հայաստան և հաստատուն ու ամուր ոգով լցված, Հայրենիքի զորացմանն ու շենացմանը լծված զավակներ:

Վեհափառ Հայրապետը գնահատանքի խոսք ուղղեց նաև եգիպտահայ համայնքին՝ Հայաստանի նկատմամբ իրենց աջակցության և ցուցաբերած տարբեր օգնությունների համար:

Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը Ս. Պողոս-Պետրոս եկեղեցուն նվիրեց գորգ՝ Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի պատկերով:

Եկեղեցուց Վեհափառ Հայրապետը շարականների երգեցողության ներքո մուտք գործեց Առաջնորդարան, ուր տեղի ունեցավ Աջահամբույր: Այստեղ եկավ և Վեհա-

փառ Հայրապետին բարի գալուստ մաղթեց Ալեքսանդրիայի քաղաքապետ Մոհամեդ Աբդել սալամ Մահգուբը: Վերջինիս Վեհափառ Հայրապետը նվիրեց փայտյա մի գեղեցիկ ափսե՝ ի գնահատություն հայ համայնքի նկատմամբ ցուցաբերած եղբայրական վերաբերմունքի:

Այնուհետև, ի պատիվ Վեհափառ Հայրապետի այցելության, տեղի ունեցավ սիրո ճաշ՝ համայնքի անդամների հետ:

Կեսօրից հետո, ժամը 17.00-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց Ալեքսանդրիայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն Պետրոս Է-ին: Ս. Սավա վանքի Ս. Մարկոս եկեղեցում Վեհափառ Հայրապետը և Պետրոս Է Պատրիարքը համատեղ աղոթեցին Հայ և Հույն Եկեղեցիների հավատացյալների, ինչպես նաև տարածաշրջանի խաղաղության հաստատման և ամրապնդման համար: Այնուհետև Պետրոս Է Պատրիարքը ողջույնի և բարի գալուստի խոսք ասաց Վեհափառ Հայրապետին՝ ի մասնավորի նշելով, որ հայ և հույն ժողովուրդների ու Եկեղեցիների բարեկամությունը դարերի պատմություն ունի, և այն պետք է էլ ավելի զարգացնել: Նա նաև նշեց, որ Ալեքսանդրիայի Հույն Ուղղափառ Եկեղեցին լայն քարոզչական աշխատանքներ է ծավալում Աֆրիկյան երկրներում:

Վեհափառ Հայրապետը պատասխան խոսքում գոհություն հայտնեց Տիրոջը, որ իր գահակալության առաջին փարում հնարավորություն է ընձեռել եղբայրական այցելությամբ հանդիպելու քույր Եկեղեցիների պետերին և իր հարգանքը մատուցելու նրանց, միաժամանակ ամրապնդելու միջեկեղեցական կապերը, որ հաստատել էին իր երջանկահիշատակ նախորդները: Վեհափառ Հայրապետը ներկայացրեց նաև Հայ Առաքելական Եկեղեցու առջև ծառացած ներկայիս մարտահրավերները և Պետրոս Է Պատրիարքին պաշտոնապես հրավիրեց Հայաստան՝ մասնակցելու 1700-ամյակի տոնակատարություններին:

Վեհափառ Հայրապետի հրավերը ուրախությամբ ընդունեց Պետրոս Է Պատրիարքը:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ իր այցելության, Նորին Սրբությանը նվիրեց արծաթյա փորագրված ափսե և Տիրամոր պատկերով մի սրբանկար: Նորին Սրբությունը ևս իր կողմից Վեհափառ Հայրապետին նվիրեց ասա և սրբանկար:

Երեկոյան Վեհափառ Հայրապետն իր շքախմբով ուղևորվեց Կահիրե-Ալեքսանդրիա ճանապարհին գտնվող Ղպտի Եկեղեցու մենաստանային վանքերից մեկը՝ Ս. Բիշոյի վանք, ուր Վեհափառ Հայրապետին դիմավորեց Շնուդա Գ Պատրիարքը, և վանականների մեծ թափորով ու շարականների երգեցողությամբ ուղեկցեց տաճար: Կանոնական աղոթքից հետո Շնուդա Գ Պատրիարքի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը ծանոթացավ վանքին:

Առավոտյան ժամը 7.30-ին, նախաճաշից հետո, Շնուդա Գ Պատրիարքի և Ղպտի Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետն այցելեց Ս. Գևորգ կուսանոց, ուր ծանոթացավ կուսանոցի առօրյային,

կույսերի կենցաղին: Վերջիններս ցուցադրեցին իրենց ձեռագործ աշխատանքները և հուշանվերներ բաժանեցին շքախմբի անդամներին: Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Ս. Մարի մենաստան:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը վերադարձավ Կահիրե և փոքր հանգստից հետո մեկնեց «Հիլթոն» սրահ, ուր Կահիրեի քաղաքային ժողովը ն համայնքը կազմակերպել էին ընթրիք՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի այցելության:

Ընթրիքի վերջում եգիպտահայոց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը Նուրին Սրբությանը նվիրեց ոսկեզօծ սկիհ՝ Երևանի նոր կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համար:

Կիրակի առավոտյան Վեհափառ Հայրապետը մեկնեց Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր մեծ խանդավառություն էր տիրում: Հավաքվել էին հարյուրավոր հայորդիներ՝ մասնակցելու Ս. Պատարագին և լսելու Վեհափառ Հայրապետի պատգամները: Օրվա պատարագիչն էր Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի ժամանեց նաև Շնուդա Գ Պատրիարքը, և, Առաջնորդարանում կարճատև զրույցից հետո, երկու Հայրապետերը զույգ ամպհովանիներով մուտք գործեցին եկեղեցի:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը ողջունելով Ղպտի Եկեղեցու Պետին՝ իր գոհունակությունը հայտնեց Շնուդա Գ Պատրիարքի, ղպտի հոգևորականության և հավատացյալների ցուցաբերած ջերմագին վերաբերմունքի համար: Նա ասաց.

*«Սիրելի բարեպաշտ հայորդիք,*

*Մեր հոգին այս պահին լցված է ցնծությամբ, բերկրանքով և օրհնությամբ, որովհետև կանգնած ենք Մեր հավատավոր զավակաց հետ Տիրոջ Սուրբ Սեղանի առջև աղոթքի՝ Մեզ հետ ունենալով մեր դավանակից, քույր Եկեղեցու հոգևոր պետ, Մեր սիրեցյալ եղբայր, Շնուդա Գ Պատրիարքին, որը հոգևոր երկրորդ ծնողն է ձեր, սիրելի հայորդիք: Մենք եկանք Եգիպտոս Մեր եղբայրական հարգանքը և սերը մատուցելու որպես նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս: Մենք եկանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից նաև հայրական Մեր օրհնությունները բերելու Մեր հավատավոր սիրեցյալ զավակներին, որոնք դարերից ի վեր կայք են հաստատել և ապրում են օրհնյալ երկրում Եգիպտոսի:*

*Մենք այս պահին աղոթքով առ Աստված Մեր շնորհակալությունը և եղբայրական սերն ենք հայտնում այն ջերմ ընդունելության համար, որ տվեց Մեզ Մեր սիրեցյալ եղբայր Շնուդա Գ Սրբազան Պատրիարքը իր հավատացյալ զավակների անունից, նախ Սուրբ Մարկոս եկեղեցում, այնուհետև բոլոր այն վայրերում և եկեղեցիներում, ուր Մենք Սրբազան Պատրիարքի հետ այցելեցինք և հյուրընկալվեցինք: Իմաստուն առաջնորդությամբ Մեր սիրեցյալ եղբոր՝ Շնուդա Գ Պատրիարքի, ծաղկում է Ղպտի Ուղղափառ Ե-*

*կեղեցին և արգասավորում իր հավատքը նոր իրագործումներով և ձեռքբերումներով: Փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ նույնպիսի առաջընթաց է արձանագրում իր կյանքում հայ համայնքը Եգիպտոսում՝ Կահիրեում, Ալեքսանդրիայում: Այս պահին, երբ կանգնած ենք այսօրքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում Կահիրեի, մեր մտապատկերի առջև կենդանանում, վեր է հառնում պատկերը՝ Խոր Վիրապից դուրս եկող Հայոց Հայրապետի, երբ նա, հաղթական կանգնած իր ժողովրդի առջև, կոչ և հրավերք է ուղղում՝ ասելով. «Եկայք շինեսցուք Սուրբ զԽորանն լուսոյ», եկեք կառուցենք լույսի սուրբ խորանը: Լուսավորչի այս պատգամն ու հորդորը մարգարեական էր մեր ժողովրդի համար, կարծես թե կանխատեսված էր հայ ժողովրդի դարերի ողջ պատմությունը: Ուրեմն հրավեր կարդալով՝ կառուցենք լույսի սուրբ խորանը մեր, որից լույս պիտի ճառագի Հայաստան աշխարհին: Այդ լույսի խորանը Լուսավորիչ Հայրապետն առաջին հերթին ցանկացավ կառուցված տեսնել հայորդյաց հոգիներում, որպեսզի հեթանոսական խավարը դուրս մղվի հայու սրտից և հայորդու կյանքը ընթանա լույսի մեջ, որովհետև լույսի մեջ բարիք է գործվում, լույսի մեջ սերն է հրաշագործում, լույսի մեջ Աստված է փառաբանվում, և լույսի մեջ Քրիստոսի հավատավոր անձը գտնում է իր փրկությունը:*

*Լուսավորիչը երեք լուսո խորաններ բարձրացրեց մեր ժողովրդի կյանքից ներս: Առաջին լուսո խորանը հայոց պետականության հաստատումն էր, երբ հիվանդությունից բժշկեց Տրդատ Գ արքային: Երկրորդ խորանը կանգնեցվեց մեր հայրենիքի մեջ: Դա Սուրբ Սեղանն է Հայոց Եկեղեցու, որ մշտապես քրիստոնեական Ավետարանի լույսն է ճառագում մեր ժողովրդի զավակաց հոգիներից ներս: Երրորդ լուսո խորանը հայ դպրոցի լույսի խորանն էր: Հայ ժողովուրդը Լուսավորիչ Հայրապետի այս պատգամը նվիրականորեն ծրարեց իր հոգու մեջ իր պատմության ողջ ընթացքին: Դաժան ու դժվարին պատմություն ենք ապրել, հաճախ կորցրել ենք մեր պետականությունը, բռնի վտարվել մեր հայրենական երկրից, բայց ուր էլ որ կայք ենք հաստատել, հավատարիմ Լուսավորիչ մեր Հոր պատգամին, առաջնային խնդիր ենք նկատել մեզ համար կառուցել լուսո խորանը մեր Սուրբ Եկեղեցու, և նրա կողքին հայոց դպրության, հայոց դպրոցի լուսո խորանը, որպեսզի քրիստոնեական Ավետարանի լույս պատգամների հետ նաև հայոց բանն ու բառը, հայոց գիրը լուսավորի միտքն ու հոգին մեր ժողովրդի զավակաց: Իսկ եթե չենք ունեցել երրորդ՝ պետականության խորանը մեր կյանքում, ապա տեսիլքն ու երազը միշտ վառ ենք պահել մեր հոգիներից ներս: Մենք գոհություն և փառք ենք առ Աստված բարձրացնում, սիրելի բարեպաշտ հայորդիք, որ մեր կյանքի նոր շրջանում առկա են այսօր լուսո այդ երեք խորաններն էլ: Այսօր, 80 տարիների աստվածամերժության շրջանից հետո, վերստին հայոց դպրոցում կամար է կապել քրիստոնեության*

*քարոզչության ու դաստիարակության լուսո խորանը, և հայու զավակը վերստին ունկնդիր է Քրիստոսի Աստվածային պատվիրաններին ու պատգամներին և մեր սրբազան հայրերի հավատո վարդապետությանը: Նա հասու է դառնում իր ազգային-եկեղեցական ավանդություններին, սովորություններին և կյանքին ընդհանրապես: Այսօր նոր ճառագում ունենք, հայրենական մեր երկրից ներս, լուսավորչահիմն հայոց տաճարների լուսո խորանները՝ քարոզելով մեր ժողովրդին Տիրոջ կենաց խոսքը և առաջնորդելու նրանց դեպի հավիտենական կյանքի ուղին: Այսօր նաև մեր ժողովրդի արի կամքով կանգնեցվել է հայոց պետականության լույսի խորանը, թեև բազում զրկանքներով, բազում տառապանքներով, բազում կորուստներով, սակայն թանկ ու նվիրական յուրաքանչյուր հայորդու համար հայոց անկախ պետականությունը, որ տենչիք ու երազ է եղել դարեր շարունակ հայորդու համար, որ նվիրական բաղձանք է եղել յուրաքանչյուր հայ հոգուց ներս, որով ապրել ու գործել է յուրաքանչյուր զավակ մեր ժողովրդի, ուր էլ որ ապրելիս լինի, ուր էլ որ Աստծո կամքը և տնօրինությունը նրան առաջնորդած լինի:*

*Գոհություն և փառք ենք առ Աստված բարձրացնում, որ աննկուն ոգին ու կամքը մեր ժողովրդի նպատակաուղղվի թանկ ձեռքբերված հայոց անկախությունը ամրացնելուն, հայոց պետությունը քրիստոնեական պետություն ձևավորելուն, կերտելուն, որպեսզի արժանի հպարտությամբ կարողանանք տոնախմբել 1700-ամյակը քրիստոնեական մեր դարձի: Այս տարեթիվը շրջադարձային պիտի նկատենք յուրաքանչյուրս մեր կյանքի համար, որպեսզի այս տարեթիվը բարեփոխի, վերանորոգի, նոր կյանքի ճանապարհ բանա մեր ժողովրդի առջև թե՛ հայրենիքում, թե՛ ի սփյուռս աշխարհի: Իսկ այդ ուղին ու ճանապարհը առաջին հերթին հնարավոր է կերտել, երբ կանգնեցված է մեր հոգուց ներս լույսի խորանը մեր անձերի համար, որտեղ կկարողանա հրաշագործել մեր Տեր Հիսուս Քրիստոս բարի գործերով, աստվածահաճո արարքներով, եկեղեցաշեն ու հայրենանվեր ընթացքով մեր կյանքի:*

*Որպես Մեր առաջին այցելության հորդոր-պատգամ, Մեր խոսքը պետք է լինի ձեզ՝ շարունակել հավատարիմ մնալ մեր հայրերի սրբազան հավատքին: Ամենօրյա մեր կյանքի ուղենիշը դարձնել Քրիստոսի Սուրբ Ավետարանի պատգամներն ու պատվիրանները, ընթերցել Ավետարանն ու Աստվածաշունչը ոչ թե որպես գիրք նվիրական ու սուրբ, այլ Տիրոջ յուրաքանչյուր խոսք դարձնել կյանք և կյանքի ուղենիշ, ու այդ պահին մենք կկարողանանք իրապես նաև մեր պարտքը կատարել մեր հայրենիքի առջև, կկարողանանք հայրենիքը շեն ու պայծառ դարձնել, զորեղ Հայաստան՝ հավերժական մեր ժողովրդի զավակաց համար:*

*Սիրելինե՛ր, այս պատգամով Մենք վերստին Մեր աղոթքն ենք առ Աստված բարձրացնում մեր ժողովրդի զավակաց հոգևոր կյանքի շինության համար: Մեր աղոթքն ենք առ Աստված բարձրացնում՝ հայցելով խաղաղություն համայն աշխարհին, խաղաղություն, բարգավաճում, բարօր ու երջանիկ կյանք ժողովրդին համայն: Մեր աղոթքն ենք առ Աստված բարձրացնում՝ նաև հայցելով ապահով ու աստվածահաճո կյանքի ընթացք Եգիպտոսի հյուրընկալ երկրին և նրա բարեսեր ժողովրդին: Մեր աղոթքը՝ մեր քույր Եկեղեցուն՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցուն, և նրա բարեպաշտ ու հավատավոր ժողովրդին, որպեսզի Տիրոջ հավատքի մեջ զորանան ու պայծառակերպվեն իրենց նոր կյանքով և այդ կյանքի ընթացքին իրենց նոր արարումներով: Մեր գնահատանքը ուզում ենք ուղղել ձեզ՝ սիրելի բարեպաշտ ժողովուրդ հԵգիպտոս: Մենք հոգու երկրպագանքով ու հպարտությամբ տեսանք ու հաստատեցինք ձեր զոհողությունը, ձեր համեստության բարք ու արդյունքները մատաղ սերնդի հայաբարբառ խոսքերում ու լեզվում, այն կառույցներում և այն շինություններում, որոնց մեջ բնակություն են հաստատում մեր նախնիք:*

*Տիրոջ սերը, խաղաղությունը, շնորհը և օգնությունն եմ հայցում ձեզ համար այժմ և հավիտյանս. ամեն»:*

Իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը Շնորհա Պատրիարքին հրավիրեց իր հայրական խոսքն ուղղելու բարեպաշտ ժողովրդին:

Շնորհս Գ. Պատրիարքն իր խոսքում վկայակոչելով հայ ժողովրդի կապվածությունը իր արմատներին՝ հավատքին, սովորություններին, լեզվին, պատգամեց ջանք չխնայել նոր սերնդի դաստիարակության համար:

Վեհափառ Հայրապետը, որպես գնահատանք փարիների ջանադիր աշխատանքի, եգիպտահայոց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի կուրծքը զարդարեց եպիսկոպոսական պանակեով, իսկ համայնքին նվիրեց Հայաստանի քրիստոնեացման դրվագով գորգ:

Նոյեմբերի 16-ի առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց Ալ Ազհարի Շեյխ Մեծ իմամ Ալ Թանտաուին: Վերջինիս հետ զրույցում Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունը հայտնեց արաբ ժողովրդին՝ դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած եղբայրական վերաբերմունքի, ինչպես նաև հետագա ջերմ հարաբերությունների համար: Իր հերթին Շեյխ Ալ Թանտաուն Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց հայ համայնքի ունեցած դերի համար՝ որպես Եգիպտոսի Հանրապետության ազնիվ քաղաքացիների:

Կեսօրին Վեհափառ Հայրապետն իր շքախմբով մեկնեց Ղպտի Եկեղեցու Պատրիարքարան, ուր երկու Հայրապետները ստորագրեցին համատեղ կոմյունիկե: Ստորև ներկայացնում ենք կոմյունիկեի տեքստը:

# ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂԵՐՁ՝ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ, ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՇՆՈՒԴԱ Գ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Մեկ լինելով քրիստոնյա ուղղափառ հավատի մեջ՝ մենք գոհություն ենք հայտնում Աստծուն՝ Հորը, Որդուն և Ս. Հոգուն, ընձեռնելու համար մեզ այս հնարավորությունը, արտահայտելու մեր եղբայրական փոխադարձ սերը՝ Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Կաթողիկոսի՝ հոկտեմբերի 12-19 Եգիպտոս կատարած առաջին այցելության առիթով, որը համընկավ Սուրբ Ընտանիքի Եգիպտոս այցելելու Մեծ Հոբելյանի տոնակատարություններին:

Որպես Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների մեր ընտանիքի ամենամեծ առաջնորդներից մեկը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը միշտ ջերմորեն ընդունելի է Ղպտի Ուղղափառ Պատրիարքության, նրա հոգևորականների ու ժողովրդի կողմից Ղպտի Ուղղափառ հին վանքերում ու կուսանոցներում, ինչպես նաև ընդունելի է Կահիրեի և Ալեքսանդրիայի հայոց հոտի կողմից:

Որքան պարտավոր է վերահաստատել Քրիստոնյա հավատի մեր միությունը, որը մենք հավատարմորեն պահպանել ենք դարեր ի վեր, և որը հիմնված է վաղ շրջանի Եկեղեցու ավանդությանը հարազատ Սուրբ Գրքի վրա, հրապարակված առաջին երեք Տիեզերական ժողովների՝ Նիկիո (325), Կ. Պոլսի (381) և Եփեսոսի (431) կողմից: Մենք նորոգում ենք մեր ուխտը, որով պետք է մեր Եկեղեցիների կյանքի և գործունեության մեջ ավելի հստակ արտահայտություն տանք այդ միությանը՝ հավատարմորեն հնազանդվելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Մարմնացյալ Լոգոսի կամքին և հետևելով մեր Եկեղեցու հայրերի սրբազան ավանդության ուղղափառ ժառանգությանը: Մենք ընդունում և արժևորում ենք մեր ընդհանուր հոր՝ Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու հետևյալ արտահայտությունը. «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ»:

Մենք գոհություն ու փառաբանություն ենք մատուցում Սուրբ Երրորդությանը՝ Հայ և Ղպտի մեր Ուղղափառ Եկեղեցիներին շնորհած անցյալի նվիրագործված կյանքի և մեր սրբերի ու մարտիրոսների ճշմարիտ վարդապետության համար, ինչպես նաև հավատի մեր միության անսասան ու անդադար շարունակության համար, այն հավատի, որ «մի անգամ ընդմիշտ ավանդվեց սրբերին» (Հուդա 3), և մեր սիրեցյալ ժողովուրդների հոգևոր բարեկեցության համար:

Մենք պարտավորվում ենք ավելի տեսանելի ու շոշափելի դարձնել Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքին պատկանող մեր երկու Եկեղեցիների փոխա-

կան, շրջանային և համաշխարհային մակարդակներով էկումենիկ շարժման մեջ սերտ համագործակցումը, նաև ավելի ակտիվացնել մեր հավատացյալներին սպառնացող հերետիկոսությունների ու աղանդների հարուցած վտանգները դիմագրավելու մեր ընդհանուր պարտականության կատարումը: Մեր ընդհանուր առաջադրանքն է նաև դիմադարձել և քաջությամբ ընդունել նոր մարտահրավերները ժամանակակից աշխարհի, որտեղ կյանքի ծայրահեղ աշխարհիկ հակումները չափազանց խեղաթյուրում են մեր ժողովրդի հոգևոր, բարոյական և հասարակական կյանքն այս դարում: Քրիստոնեական հույսով մենք ակնկալում ենք, որ քրիստոնեության պատմության մեր երրորդ հազարամյակը լինի ամենաեռանդունը, և աղոթում ենք մեր Տիրոջը, որ այն դարձնի հոգևոր ավելի մեծ վերազարթոնքի ժամանակաշրջան: Ղպտի Ուղղափառ Եկեղեցին շնորհավորում է Հայ Ուղղափառ Եկեղեցուն՝ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակի, Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակի մեծարման 2001 թ. տոնակատարությունների առիթով:

Մենք կոչ ենք անում Եգիպտոսի ու Հայաստանի, ինչպես նաև նրանց գաղթօջախների մեր բոլոր թեմական մետրոպոլիտներին, արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին, ծխական քահանաներին, սարկավագներին, վանականներին, կույսերին և աշխարհիկ մարդկանց՝ հաստատելու ավելի սերտ հարաբերություններ և դրանք զարգացնել փոխադարձ համագործակցության էկումենիկ իսկական ճանապարհներով՝ շահագրգռված մեր հավատի միությամբ ու պահանջով, նաև հոգևոր առողջության մտահոգությամբ և մեր ժողովուրդների աշխարհասփյուռ ստեղծագործ ծառայությամբ, հատկապես Կիրակնօրյա դպրոցների, Երիտասարդաց միությունների նոր սերնդին բերած մեր սպասավորությամբ:

Մենք խրախուսում ենք ավելի սերտ համագործակցության ձգտումը աստվածաբանական կրթության բնագավառներում՝ մեր երկու Եկեղեցիների կենդանի ավանդություններին ավելի ուշադրություն դարձնելու համար: Ուսանողների և աստվածաբանական մասնագետների փոխանակությունը էկումենիկ անհետաձգելի խնդիրներից մեկն է, որ մենք առաջադրում ենք աստվածաբանական մեր դպրոցներին և այդ բնագավառի այլ կենտրոնների հետ աստվածաբանական ուսումնասիրությունների և ուսուցումների պարագային:

Հրապարակությունների և նորությունների փոխանակությունների ընդհանուր հոգացության տեսանկյունից մեր Եկեղեցիները ողջունել են Ն.Ս. Շնուդա Գ Պատրիարքի չորս գրքերի թարգմանությունը հայերեն, և մենք ակնկալում ենք թարգմանությունների ավելի շատ փոխանակություններ թե՛ հայերեն, թե՛ արաբերեն: Մենք խրախուսում ենք նաև նոր տեխնոլոգիայի ասպարեզում փորձի փոխանակումը, այն է՝ տեսալսողական և համակարգչային սարքավորումներ:

Մանուկների և չափահասների՝ քրիստոնեական հավատով խելամիտ և առողջ կրթությունը, ըստ մեր Եկեղեցիների ուղղափառ վարդապետության և բարոյական ուսուցումների, մեկ այլ բնագավառ է, որտեղ հրահանգում ենք մեր Եկեղեցիներին՝



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ,
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԲՈՒՆԱ ՊԱՈՒՂՈՍԻ ՀԵՏ

սինեծելու համագործակցության նոր և ավելի արդյունավետ ու բեղուն ճանապարհներ:

Մենք հաստատում ենք մեր Եկեղեցիների հասարակական ծառայությունների աջակցությունը, ի մասնավորի՝ չքավորների և լքյալների, հիվանդների և հաշմանդամների նկատմամբ: Մենք առաջարկում ենք մեր բոլոր կազմակերպություններին ծառայասիրության կոչով և ազերսով՝ զբաղվել աջակցության կարոտ այս բնագավառով:

Մենք մեր Եկեղեցիների բոլոր հավատացյալների հետ աղոթում ենք խաղաղության և արդարության հաստատման համար Միջին Արևելքում և Կովկասում, մասնավորապես Երուսաղեմում և Ղարաբաղում, բացառելով բռնությունը նաև ողջ աշխարհում: Մենք աղոթում ենք նաև մեր բարեկամական երկու ժողովուրդների և երկրների՝ Հայաստանի և Եգիպտոսի բարգավաճման համար:

ՇՆՈՒԴԱ Գ ԳԱՐԵԳԻՆ Բ

16 նոյեմբեր 2000,
Կահիրե, Եգիպտոս

Կոմյունիկեի ստորագրումից հետո Պատրիարքարանի սեղանատանը տեղի ունեցավ պաշտոնական ճաշ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Երեկոյան ժամը 20.00-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Եգիպտոսում Հայաստանի դեսպանատուն: Նորին Սրբությանը դիմավորեց Եգիպտոսում և Հյուսիսային Աֆրիկայում Հայաստանի Հանրապետության լիազոր դեսպան, պարոն Սերգեյ Մանասարյանը: Վեհափառ Հայրապետը պարոն դեսպանի ուղեկցությամբ ծանոթացավ դեսպանատան աշխատանքներին, հայ համայնքի տրամադրած հարմարավետ շենքին:

Նոյեմբերի 17-ին, կեսօրին, Վեհափառ Հայրապետը «Մարիոտ» հյուրանոցի իր նարկաքաժնում ընդունեց հայ համայնքի թերթերի, լրագրերի խմբագիրներին և առաջատար լրագրողներին: Վեհափառ Հայրապետը վերջիններիս ներկայացրեց Հայ Եկեղեցու ներկա վիճակը, հուզող խնդիրները, 1700-ամյակի տոնակատարություններին նախապատրաստման ընթացքը, պատասխանեց նրանց հուզող հարցերին:

Երեկոյան Վեհափառ Հայրապետի անունից Հայաստանի դեսպանատանը տեղի ունեցավ ճաշկերույթ, որին հրավիրված էին Ղպտի Եկեղեցու պետ Շնուդա Գ Պատրիարքը, Հունաց Եկեղեցու պետ Պետրոս Է Պատրիարքը, Ալ Ազհարի Շեյխ Մեծ իմամ Ալ Թանտաուի, Հանրապետության Մուֆթին, Հ. Բ. Ը. Մ. ատենապետը, Հայ Կաթողիկե Եկեղեցու հոգևոր հովիվը, Եգիպտոսում ՀՀ դեսպանը և ուրիշներ:

ճաշկերույթի ընթացքում հնչեցին ողջույնի, բարեմաղթանքի և շնորհակալական խոսքեր:

Ուշ երեկոյան Վեհափառ Հայրապետը Առաջնորդարանում հանդիպեց թեմական և քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներին և զրույց ունեցավ ներհամայնքային կյանքին վերաբերող խնդիրների, ինչպես նաև 1700-ամյակի փոնտփափառությունների հեթիոպահայոց լիարժեք մասնակցության շուրջ:

## ԵԹՈՎՊԻԱ

Նոյեմբերի 19-ին, վաղ առավոտյան, Եթովպիայի Թեւահեդո Եկեղեցու պետ. Նորին Սրբություն Աբունա Պաուլոս Պատրիարքի հրավերով Կահիրեի օդանավակայանից Վեհափառ Հայրապետը և իր շքախումբը մեկնեցին Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբա, ուր ժամը 11.00-ին դիմավորելու էին եկել Նորին Սրբությունը՝ եպիսկոպոսաց դասի ուղեկցությամբ. Սուրբ Սինոդի անդամներ, Ալեքսանդրիայի Հույն Ուղղափառ Եկեղեցու պետի ներկայացուցիչ, Աքսումի մետրոպոլիտ Պետրոսը, Եթովպիայի հայ ազգային իշխանությանց ներկայացուցիչներ և այլք:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը և Նորին Սրբություն Աբունա Պաուլոսը, հոգևորականաց դասի շքախմբով, ուղղվեցին Եթովպական Եկեղեցու Ս. Երրորդություն Մայր Տաճար, ուր մեծ խանդավառությամբ և հոգևոր երգերի կատարումով Վեհափառ Հայրապետին դիմավորեցին բազմաթիվ հավատացյալներ, հոգևոր սպասավորներ և երիտասարդներ:

Տաճարից ներս, կանոնական արարողությունից հետո, Պատրիարք Հայրը ողջունեց և բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին և հրավիրեց՝ իր Հայրապետական օրհնությունները փալու ներկա հոգևորականաց և հավատացյալներին:

Վեհափառ Հայրապետը, ջերմորեն ողջունելով Նորին Սրբությանը, հոգևորականաց դասին և ներկա հավատացյալներին, ասաց.

*«Սիրեցյալ Սրբազան Պատրիարք Եղբայր.*

*Մենք, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, մեծապես ուրախ ենք, որ Աստծո կամքով և առաջնորդությամբ, Ձերդ Սրբության սիրալիր հրավերով անդրանիկ այցելությունն ենք կատարում Եթովպական մեր քույր Եկեղեցու շնորհազարդ Հովվապետին, հավատացյալ ժողովրդին՝ հավաստելու դարավոր մեր երկու Եկեղեցիների բարեկամական հարաբերությունները, որոնք միշտապես անխաթար են եղել և շաղախված սիրակցությամբ:*

*Համայն քրիստոնյա աշխարհի համար Աստվածահայտնության 2000 թ. ի Քրիստոս մեր միության դրսևորման ու հոգևոր կյանքի նորոգության բերկրալի առիթ է. և Մենք փառք ու գոհաբանական աղոթք ենք առաքում երկինք, որ Տերը արժանացրեց Մեզ շնորհին եղբայրական սիրո այցով*

*այսօր գտնվելու Եթովպիայի՝ դարավոր պատմությամբ հարուստ հողում և Ձեզ հետ միասնաբար հայցելու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաղաղությունն ու օրհնությունը: Արդարև. «զի բարի կամ զի վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սղմ. ՃԼԲ 1):*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որ համայն հայության հավատքի կենտրոնն է, աշխարհասփյուռ մեր ժողովրդի ողջույններն ու բարեմաղթանքներն ենք բերել եթովպական ժողովրդին, որը սուրբ առաքյալների նվիրագործության ժամանակներից որդեգրված է Կենաց Խաչի ճանապարհին և աշխարհում առաջիններից մեկն է քրիստոնեությունը հռչակել իր պետության պաշտոնական կրոն: Այսօր բերկրում է Մեր հոգին, որ հնագույն իր ավանդներով, ավելի քան 900 աղոթախոս վանքերով, ուխտատեղի սրբավայր հոգևոր դասով Եթովպական Եկեղեցին հավատարմորեն շարունակում է Ավետարանի ճշմարիտ խոսքի մատուցման սրբազան առաքելությունը՝ հավատքի օրհնյալ արահետներով առաջնորդելով իր հոտը:*

*Խոր արմատներ ունեն հայ-եթովպական առնչումները: Պատմահայր Խորենացին նույնիսկ գրանցել է արենյան մի ավանդություն, որի համաձայն հայոց նախահայր Զարմայրը եթովպական զնդով մասնակցել է Տրոյական պատերազմին: Երկու ժողովուրդների բարեկամությունը հատկապես արգասավորվել է քրիստոնեական նրանց կյանքի ընդհանրությամբ և ամրապնդվել ու հարստացել Եթովպիայում հայկական համայնքի դարավոր գոյությամբ: 6-րդ դարից ի վեր հայերն ապրում են այստեղ և, միշտապես վայելելով եթովպական իշխանությունների ու ժողովրդի սերն ու վստահությունը, գործուն, նախանձախնդիր մասնակցություն բերում Եթովպիայի հասարակական կյանքի առաջընթացին:*

*Եթովպացի քրիստոսասեր ժողովուրդը միշտ սիրով հյուրընկալել է մեր ժողովրդի զավակաց, հատկապես ընդունել ու օգնել համիդյան կոտորածներից և Հայոց Մեծ եղեռնից փրկվածներին, որոնց զավակներն իրենց կյանքով երախտահատույց եղան՝ ֆաշիզմի դեմ պայքարում պաշտպանելով իրենց երկրորդ Հայրենիքի՝ Եթովպիայի ազատությունը:*

*Ձերդ Սրբություն. Եթովպիայի Ուղղափառ Թևահեդո Եկեղեցին, ինչպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ոչ հեռու անցյալում ապրել են աստվածամերժության դժվարին ժամանակներ, հաղթահարել բռնություն ու հալածանքներ, որոնց ծանրությունը բանտարկության տարիներին Դուք կրել եք անձամբ: Այսօր Աստված դարձյալ «ընդ մեզ» է: Նոր շունչ, նոր արթնություն ու կյանք են ապրում մեր Եկեղեցիները, որ ժողովրդավարական ուղիով զարգացող իրենց պետություններում ազատ են գործելու և Քրիստոսի Ավետարանը քարոզելու: Մեզ համար մեծ ուրախություն է նորոգել մեր երկու Եկեղեցիների սերտ կապերը, շարունակելով ավանդը երանաշնորհ Մեր նախորդների՝ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց*

*Կաթողիկոսների, որոնք Ձեր նախորդների ու հավատակից մյուս Եկեղեցիների պետերի հետ հանդիպումներ ունեցան՝ ի շահ Եկեղեցիների միության ու համագործակցության:*

*Թեև Հայ Եկեղեցու հոգևոր պետերը վերջին քառասուն տարում այցելել են Եթովպիա, և Եթովպիո Եկեղեցու պետը՝ Հայաստան, այդուհանդերձ Հայոց և Եթովպիո Եկեղեցիների կապերն այսօրից ավելի զորավոր են եղել՝ շնորհիվ ավելի քան հարյուրամյա պատմություն ունեցող հայ համայնքի, որ փայլում է Եթովպիո հյուրասեր ժողովրդի հարգանքի ու սիրո: Ադիս Աբեբան ամբողջ տասնամյակ դարձավ մեր Եկեղեցիների էկումենիկ ոգու արտահայտության կարևոր կենտրոն: Մենք այսօր այստեղ ենք նույն ոգով ու վճռականությամբ:*

*Ինչպես Նորին Սրբությունն ասաց, 21-րդ դարը հոգևոր արժեքների առավել զորացման ու ծաղկման, հոգևոր կյանքի զարկ պիտի լինի աշխարհի ողջ մարդկության համար: Եվ պարտքը կա մեզ վրա, Դա Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների վրա, որ առավել զորացնեն և սերտացնեն իրենց համագործակցությունը:*

*Սիրելի բարեպաշտ եղբայրներ և քույրեր, հավանաբար գիտեք և այսօր էլ իմացաք Նորին Սրբության խոսքից, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հնագույն Եկեղեցիներից մեկն է՝ հաստատված Քրիստոսի առաքյալներ Թադեոսի և Բարդուղիմեոսի կողմից, իսկ 301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց որպես պետական կրոն: Մենք առաջիկա տարվա ընթացքում մեր քույր Եկեղեցիների պետերի և հավատացյալների հետ պատրաստվում ենք տոնելու հիշատակի այդ իրադարձության հոբելյանական 1700-ամյակը: Եվ այսօր Մենք ուրախությամբ վերահաստատում ենք գրավոր Մեր հրավերը Նորին Սրբությանը, որ իր ազնիվ ու աղոթական ներկայությունը բերի 1700-ամյակի մեծ տոնակատարություններին:*

*Աստծո օրհնության ներքո մեր ժողովուրդների կյանքը քրիստոնեական իր հավատքի պաշտպանության համար ունեցել է միևնույն ընթացքը: Մեր ժողովուրդների պատմության մեջ տվել ենք բազում նահատակություններ ու մարտիրոսություններ՝ մեր հավատքի պահպանության զորացման ու հարատևության համար:*

*Դեռևս ոչ հեռու անցյալում մենք պարտավոր էինք մեր հավատքի համար մարտ մղել կոմունիստական կարգերի դեմ: Այստեղ՝ դուք, Հայաստանում՝ մենք: Եվ, որպես հոգևոր առաջնորդ, հպարտությամբ եմ ուզում արձանագրել հաղթանակը մեր բարեպաշտ ու աստվածավախ ժողովուրդների, որոնք հաղթանակով պսակեցին իրենց պարտադրված այդ փորձությունը: Մենք աղոթում ենք, որ Տերը խաղաղության մեջ պահի աշխարհը համայն, մեր ժողովուրդների քայլերն առաջնորդի դեպի եկեղեցի, որպես-*

*գի միշտ բարիքի ու երջանկությունը ուղեկից լինեն նրանց, և մեր շուրթերին միշտ լինի Աստծո փառաբանության աղոթքը: Մենք հայցում ենք երկար տարիների կյանք և առողջություն Նորին Սրբության համար, բարգավաճում և նորանոր հաջողությունների արձանագրում և անսասանություն ու հավերժություն Եթովպիայի իշխանություններին և աստվածասեր պետությանը:*

*Առ Աստված ապավինությամբ Ամենայն Հայոց Հայրապետիս մաղթանքն է, որ Տիրոջ Ամենազոր Աջի հովանու ներքո միշտ օրհնյալ լինի Եթովպիայի Ուղղափառ Թևահեդո Եկեղեցին:*

*«Շնորհք. սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»»:*

Ս. Երրորդություն Մայր Տաճարից դուրս գալով, Վեհափառ Հայրապետը և իր շքախումբը մեկնեցին «Հիլթոն» հյուրանոց: Կեսօրին Վեհափառ Հայրապետը մեկնեց Եթովպիայի հայոց Ս. Գևորգ եկեղեցի, ուր հավաքվել էին 120 հոգանոց համայնքի գրեթե բոլոր անդամները, և ամպհովանիով ու «Հրաշափառ»-ով ուղեկցեցին տաճարից ներս: Վեհափառ Հայրապետը դրվատանքի խոսքեր ասաց Հայրենիքից հազարավոր կիլոմետրեր հեռու ապրող փոքրաթիվ հայերին, որ կարողացել են մնալ հարազատ զավակներ Մայր Եկեղեցու և ծաղկուն պահել հայկական ոգին համայնքից ներս:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը նորից այցելեց Նորին Սրբություն Աբունա Պաուլոս Պատրիարքին և վերջինիս ուղեկցությամբ մասնակցեց Եթովպիայի Եկեղեցու Միաբանական լիագումար նիստին, իր օրհնությունը բերեց դավանակից Եկեղեցու միաբաններին: Այստեղ Նորին Սրբություն Աբունա Պաուլոս Պատրիարքը կրկին ողջունեց Վեհափառ Հայրապետին և իր խոսքում անդրադարձավ Հայ և Եթովպական Եկեղեցիների հարաբերություններին.

«Մենք՝ ուղղափառ հավատքի հետևորդներս, 451 թվականի բաժանումից սկսած որևէ բաժանումի չենթարկվեցինք, մեր գաղափարականը չփոխեցինք, մեր հավատքը չսասանվեց, հակառակ որ մեր վրա ուժ գործադրեցին: Մինչև այսօր, առանց այդ փոփոխությունները ընդունելու, մենք՝ քույր Եկեղեցիներս, շարունակում ենք մեր ուղղափառ հավատքը: Այսպիսով, մենք՝ ուղղափառ հավատքի հետևորդներս, այս մեր հավատքին հավատարիմ, դեպի առաջ ենք գնում: Եկեղեցիները իրենց Մայր Եկեղեցիներից կարող են բաժանվել շատ կարճ ժամանակով, բայց ոչ ընդմիշտ:

Մենք՝ Եթովպական և Հայկական Եկեղեցիներս, առաջիններից ենք, որ ընդունեցինք քրիստոնեական կրոնը, և այդ կրոնը մինչև այսօր պահպանում ենք:

Այս դարում կան այնպիսի պարագաներ, որոնք մարդկանց բաժանում են իրարից, սուտ և անիրավ հավատքներ տարածել են փորձում: Բոլոր դժվարությունները հաղթահարելով՝ Հայ Եկեղեցին իր հավատքը պահպանել է, ինչը մեր հպարտու-

թյան մաս է կազմում: Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները, իրենց անսասան հա-
վատքը պահելով, մինչև այսօր որպես տարբեր ընտանիք են ընդունվում բոլոր մյուս
Եկեղեցիների կողմից: Հակառակ այս հինգ Եկեղեցիների աշխարհագրական հեռա-
վորության, այս հինգ Եկեղեցիները կարողացել են անսասան պահել իրենց հա-
վատքը: 1965 թվականին առիթ ունեցանք Եթովպիայի մեջ հավաքվելու և մեր գա-
ղափարները փոխանակելու: Այդ ժողովի արդյունքն այն եղավ, որ համաձայնու-
թյան հասանք, որ միջեկեղեցական հարաբերությունները զորացնենք, ուսանողների
և դասախոսների փոխայցելություններ կատարենք, և եկեղեցականները փոխայցե-
լություններ կատարեն:

Որոշվեց գրասենյակներ ստեղծել յուրաքանչյուր երկրի մեջ փոխհարաբերությունները զարգացնելու նպատակով: Պատմության մեջ մենք շատ ենք լսել Հիտլերի գործած հոլոքոստի մասին, սակայն Հայոց եղեռնի մասին շատ քիչ խոսակցություններ կան: Հայերը շատ ավելի առաջ են ունեցել Եղեռնը. միլիոնավոր հայեր ջարդվել և աքսորվել են իրենց երկրից:

Հայաստանը մաս է կազմել Խորհրդային Միության, ուր հալածվում էին կրոնն ու Եկեղեցին: Հետևանքն այն է եղել, որ բազմաթիվ եկեղեցիներ, քաջաբար պայքարելով, հասել են ազատության, և այսօր վերաշինության վրա են այդ ամեն եկեղեցիները: Հայ ժողովուրդը ամենազորեղ ժողովուրդներից է»:

Իր խոսքի ավարտին Նորին Սրբությունը հրավիրեց Վեհափառ Հայրապետին իր օրհնությունը բերելու միաբանական ժողովի պատգամավորներին: Վեհափառ Հայրապետն իր խոսքում ի մասնավորի ասաց.

*«Հայ ժողովուրդն ունի մի գեղեցիկ բանաստեղծական խոսք. «Ընդ աստեղօք ինչ կա սիրուն, քան զանձկալի եղբայր անուն»:*

*Դարերով մենք եղել ենք եղբայրներ շնորհիվ մեր հավատքի նույնության, շնորհիվ մեր Հիսուս Քրիստոսի, Ով եղել է անքակտելի կապը մեր եղբայրության, և մենք այսօր առաջին անգամ եկել ենք եղբայրական այցով մեր սերը, հարգանքը փոխանցելու Եթովպիո Եկեղեցու պետ, Աբունա Պաուլոսին և միաժամանակ ամրացնելու և զորացնելու մեր Եկեղեցիների ու ժողովուրդների եղբայրությունը: Այսօր առավել հրամայական է, որ մենք նույնադավան Եկեղեցիներս և ժողովուրդներս, էլ ավելի սերտացնենք մեր հարաբերությունները ի դեմս բոլոր այն այլադավան հոսանքների, աղանդների, որ այսօր բաժանում են մեր հավատավոր ժողովրդին ինչպես Հայաստանում, այնպես էլ Եթովպիո մեջ:*

*Սոցիալական, տնտեսական ծանր վիճակը, որի մեջ գտնվում են մեր ժողովուրդները, պարարտ հող է այդ կրոնական կազմակերպությունների գործունեությունը ծավալելու համար: Ներկա մեր կյանքի պայմաններում, առավել քան երբեք, մեծագույն պատասխանատվություն ենք կրում մեր*

*ժողովրդի առջև՝ մեր հայրերի սրբազան հավատքը անաղարտ պահելու և սերունդներին փոխանցելու գործում:*

*Մենք պիտի կարողանանք համախումբ պահել մեր ժողովրդին մեր Եկեղեցու հարկի տակ. մենք պիտի կարողանանք մեր ժողովրդին հասկացնել և զերծ պահել, որ նա իր հավատքը, իր հայրերի սուրբ հավատքը չվաճառի մեկ կիլոգրամ բրնձի կամ շաքարի դիմաց: Մենք պիտի կարողանանք մեր ժողովրդին հասկացնել, որ հազարամյակներ այս հողը, որ իրենց սնունդ է տվել, որ իրեն պահել է, որ իր կյանքն է ապահովել, հետպայում էլ այդ հողը պիտի շարունակի իրեն սնունդ բաշխել, իրեն կյանք տալ, իրեն հավիտենությունը երաշխավորել ու ապահովել: Մենք պիտի կարողանանք ժողովրդին հասկացնել, որ մեր ապավինությունը Աստված է, մեր հայրերից ժառանգած սուրբ հողը և մեր աշխատանքն ու աշխատասիրությունը: Ուրեմն մենք պիտի կրթենք մեր ժողովրդին որպես քրիստոնյաներ: Շատ ուրախ եմ, որ տեսա կիրակնօրյա դպրոցի սաներին այսպես բազմախումբ, որոնք ինձ վստահություն ներշնչեցին, որ բոլոր դժվարությունները, որ այսօր ապրում է Եթովպիան, կարճ ժամանակի ընթացքում պիտի կարողանա հաղթահարել, հույսով լցրեցին ինձ դեպի Եթովպիո վաղվա օրը, որպեսզի մեր ժողովուրդների համար երրորդ հազարամյակը լինի օրհնյալ կյանքի մի ժամանակաշրջան: Մենք պիտի այն կառուցենք, խարսխենք Քրիստոսի Ավետարանի ու պատգամների վրա: Մեր կյանքի կրողը պետք է լինի արդարությունը, սերը, խաղաղությունը, ներողամտությունը: Եվ ես ուրախ եմ, որ դուք բոլորդ հավաքվել եք այստեղ՝ քննարկելու, ծրագրելու, թե ինչպես կարելի է այդ առաքելությունը իրականացնել ձեր հավատավոր ժողովրդի կյանքում: Մաղթում եմ ձեզ հաջողություններ ձեր առաքելության մեջ: Աստված թող բարի արդյունքներով պսակի ձեր բոլոր ջանքերն ու աշխատանքները:*

*Շնորհակալ եմ այս առիթի, ջերմ ընդունելության համար, որ վերապահեց մեզ Մեր սիրելի եղբայր Աբունա Պաուլոսը: Աստված կյանք, արեշատություն պարգևի Նորին Սրբությանը, իր Աջը հովանի դարձնի իր Եկեղեցու և իր ժողովրդի վրա»:*

Միաբանական ժողովից հետո Վեհափառ Հայրապետը և իր շքախումբը հանդիպեցին Սուրբ Սինոդի անդամներին, որի ժամանակ բուռն քննարկում տեղի ունեցավ Արևելյան Ուղղափառ ընտանիքի հինգ դավանակից Եկեղեցիների հետագա համագործակցության և հարաբերությունների էլ ավելի բարելավման շուրջ: Քննարկումներից հետո, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Պատրիարքարանի սեղանատանը տեղի ունեցավ սիրո ճաշ, որին հրավիրվել էին նաև այլ Եկեղեցիների ներկայացուցիչներ ու հայ համայնքի անդամներ:

Հոկտեմբերի 20-ի առավոտը սկսվեց պետական պաշտոնյաներին այցելությամբ: Վեհափառ Հայրապետը հանդիպեց Հանրապետության Նախագահ, Նորին Գերազանցություն Ներառ Գիդադային և ԱԳ նախարար. Նորին Գերազանցություն Սեյում Մեսֆինին, որոնց հետ քննարկվեցին Եթովպիայի ներկա տնտեսական ծանր կացությունը, տարածաշրջանի խաղաղության, ինչպես նաև հայ համայնքին հուզող խնդիրներ:

Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Ս. Գրիգորիս եկեղեցի, ուր ծանոթացավ Եթովպական Եկեղեցու թանգարանային նմուշներին, այցելեց Սեբաստա վանք՝ մայրապետ քույրերին, ուր ծանոթացավ կուսանոցի ներքին կյանքին, վանքի տնտեսությանը, հանդիպեց հարյուրավոր որբ երեխաների, ովքեր վայելում էին վանքի հովանավորությունը: Այցելությունը շարունակվեց Աստվածաբանական քոլեջում: Կեսօրին Վեհափառ Հայրապետը Աբունա Պաուլոսի ուղեկցությամբ այցելեց Ս. Գաբրիել եկեղեցի, ուր զետեղված է կոմունիստական ռեժիմի կողմից նահատակված Թեոփիլոս Պատրիարքի մարմինը, և հոգեհանգստյան աղոթքներով ու ծաղկեպսակի զետեղումով հարգանքի տուրք մատուցեց Եթովպիո Եկեղեցու նահատակ Հայրապետի հիշատակին:

Երեկոյան Ադիս Աբեբայի հայկական ակումբում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, հայ համայնքը տվեց ընթրիք, որին մասնակցում էին շքախմբի անդամները և հայ համայնքի գրեթե բոլոր անդամները: Ընթրիքն անցավ ջերմ մթնոլորտում, որի ընթացքում հնչեցին հայրենասիրական, ազգագրական երգեր:

Շաբաթ օրը, հոկտմբերի 21-ին, առավոտ վաղ, Ս. Գևորգ եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ, որին մասնակցեցին և «Հայր մեր»-ից առաջ օրհնության խոսք ասացին քույր Եկեղեցիների հովվապետերը: Պատարագիչն էր Գեր2. Տ. Առաքել եպս. Քարամյանը:

Կեսօրին «Հիլթոն» հյուրանոցի ճաշասրահում Վեհափառ Հայրապետի անունից տրվեց ճաշ, որին հրավիրված էին Նորին Սրբություն, Աբունա Պաուլոս Պատրիարքը, Եթովպիո Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, Աքսիոմի Մետրոպոլիտ Պետրոսը և Եթովպիայի հայ համայնքի անդամները: Ճաշի ավարտին Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ընդունելության համար և, որպես հիշատակ իր այցելության, նվիրեց Հայաստանից բերված փայտե մեծ խաչքար: Վեհափառ Հայրապետը նվերներ բաժանեց նաև հրավիրյալներին, ինչպես նաև հայ համայքին:

Նույն օրը, ուշ երեկոյան, Վեհափառ Հայրապետը Ադիս Աբեբա-Ֆրանկֆուրտ-Ամստերդամ-Երևան չվերթով վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՊ-ՊԱՏՐԻԱՐՔ,
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍ VII

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐՁՐ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմ:

Ի պաշտոնէ Գերագույն Հոգևոր խորհուրդը նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, խորհրդի ատենապետներն են Երուսաղեմի Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

Գերագույն Հոգևոր խորհրդի կազմում ընդգրկված են՝

Գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյան
Գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյան
Գերաշնորհ Տ. Գյուտ արքեպս. Նազգաշյան
Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիոզյան
Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյան
Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյան
Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյան
Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյան
Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյան
Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյան
Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չույլջյան
Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյան
Գերաշնորհ Տ. Փառեն եպս. Ավետիքյան
Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյան
Պրոֆեսոր Ռաֆայել Պապայան
Տիար Ազատ Բոզոյան
Տիար Էդուարդ Ժախյան

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՌՆԻԿ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԼԱՋՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՏԷՐ ԳԱՌՆԻԿ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՀԱԼԱՋԵԱՆ, ՈՐ Ի ՆԻՒ ՋԵՐՍԻ, ԱՄՆ

Հանապազ գոհութիւն եւ փառք ենք առաքում առ Աստուած, որ Մայր Եկեղեցու անդաստանում բազում են փեսիլքով հոգեւորականները, որոնք նուիրուելով Տիրոջ փոքրիկ հօտի՝ խաւապատոր հայ ժողովրդի հոգեւոր սպասաւորութեան սրբազան գործին, իրենց կեանքի տարիներն իմաստաւորում են հաւատի, սիրոյ ու բարութեան եկեղեցաշէն գործերով եւ բազմարդիւն իրենց վաստակով դառնում «պսակ պարծանաց» Եկեղեցւոյս Հայաստանեայց:

Սիրելի Տէր Հայր. բազում տարիներ սպասաւորելով ԱՄՆ հայոց արեւելեան թեմում՝ Դուք Ձեր կարողութիւնները անմնացորդ կերպով ծառայեցրել էք յանուն հաւատաւոր մեր ժողովրդի հոգեւոր կեանքի նորոգութեան ու Մայր Եկեղեցու պայծառութեան: Միացեալ Նահանգներ Մեր բազմաթիւ այցելութիւնների ընթացքին ուրախութեամբ ականատես ենք եղել, թէ որքան հեղինակութիւն, յարգանք ու սէր էք վայելում բարեպաշտ հայորդեաց շրջանում:

Նախանձախնդիր ու հայրենասէր հոգեւորականի Ձեր գործունէութեան քաղցր պտուղները փեսանելի են նաեւ Մայր Հայրենիքում, ուր Ձեր բաջալերանքով ու նախաձեռնութեամբ իրագործուել եւ իրագործւում են բազմաալիսի բարեգործական ծրագրեր:

Դուք առաջիններից մէկը հաստատեցիք Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցի ապագային եւ արձագանքեցիք Մեր կոչին՝ ամենօրեայ մէկտեղուած ջանքերով կայացնելու հոգեւոր կրթօջախը: Այսօր արդէն փասներորդ յոբելեանն է նշում դպրանոցը: Ուրախ ենք մեծապէս, որ հոգեւոր ասպարէզում անդրանիկ քայլեր կատարող երիտասարդները առիթ ունեցան ճանաչելու Ձեզ եւ նուիրեալ ու անյոգնաբեկ Ձեր ծառայութիւնը:

Սիրելի Տէր Հայր. փարիների Ձեր վաստակով Դուք. արդարեւ, արժանի էք Սուրբ Առաքեալի յետեւողութեամբ հաւաստելու. «Շնորհ ունիմ այնմիկ, որ զօրացոյցն զիս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, զի հաւատարիմ համարեցաւ կարգել ի սպասաւորութիւն» (Ա Տիմթ. Ա 12):

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գոհունակ սրտով բերելով Ձեզ Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը, «բազում են վարձք Ձեր» խորին գնահատանքով շնորհում ենք Ձեզ Առաքելական Մեր Մայր Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մեր ամենաջերմ աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ ի խորոց սրտի մաղթում, որ Բարին Աստուած հաւատոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ առաջնորդի եւ զօրացնի Ձեզ հոգեւոր Ձեր կոչման մէջ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործոց նորանոր յաջողութիւններ:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ». ամէն:

Սիրով եւ օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 29

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐՄԵՆ ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՄԷՆ ՋԻԳԱՐԽԱՆԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ

Սիրելի Յոբելեար.

Համայն արուեստասէր հասարակայնութիւնը Մայր Հայրենիքում եւ Ձեր երկրորդ, նոյնքան թանկ Հայրենիքը դարձած Ռուսաստանում երախտագիտութեամբ ու մեծարումով այսօր նշում է Ձեր՝ բեմարուեստի մեծ Վարպետիդ երախտարժան կեանքի 65-ամեայ յոբելեանը՝ սիրոյ ու յարգանքի իր տուրքը մատուցելով Ձեզ: Մենք, որպէս Ամենայն Հայոց Հայրապետ, ուրախ առիթն ունենք գնահատանքի արժանացնելու բազմարդիւն Ձեր վաստակը, որ ծառայում է Բարու արգասաւորման աշխարհում:

Աստծուց Ձեզ պարգեւած շնորհը Դուք անխոնջ մշակի նուիրումով անյոգնաբեկ ծառայեցրել էք բեմարուեստի վսեմ առաքելութեանը: Ձեր մարմնաւորած բազմաթիւ կերպարները խարստացրել են հայ եւ ռուս թատրոնն ու կինոն, ճշմարիտ արուեստի անդիմադրելի զօրութեամբ փարինեւ ի վեր գերել հանդիսատեսի հոգին եւ առաջնորդել նրան դէպի այն բարձունքը, ուր ծնունդ է առնում համամարդկայինը, հաստատւում խաղաղը, յոյսն ու սէրը: Տարիներ շարունակ ապրելով ու ստեղծագործելով Մոսկուայում, Դուք արժանացաք համընդհանուր ճանաչման՝ միշտ մնալով հարազատ զաւակը Ձեզ կեանք պարգեւած հինաւուրց ու փառանդաշատ մեր սիրեցեալ ժողովրդի:

Սիրելի Նահապետ բեմարուեստի. համայն հայոց հաւատքի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը, ջերմօրէն շնորհաւորում 65-ամեայ փառեղարծի առիթով: «Բազում են վարձք Ձեր» խորին գնահատանքով եւ ընդառաջ Նոր Նախիջեւանի ու Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտօնակատար, Սանկտ Պետերբուրգի հոգեւոր հովիւ, Հոգե-

շնորհ Տ. Եզրաս աբեղայ Ներսիսեանի խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Տէրը Իր Ամենախնամ Աջի հովանու ներքոյ առողջ ու արեւշատ կեանքի երկար օրեր պարգեւի Ձեզ, սփիւռքահայ զործական նորանոր յաջողութիւններ ու երջանկութիւն:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ». ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 26

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Ուրախութեամբ տեղեկացանք, որ Աստուածայայտնութեան 2000 թուականը Ձեզ համար յիշարժան է նաեւ գիտական գործունէութեան 45, արխիւային բնագաւառում Ձեր ծառայութեան 40 եւ Վազգէնեան Հոգեւոր դպրանոցի կեանքին համընթաց մանկավարժական Ձեր նուիրումի 10-ամեայ յոբելեաններով:

Այս նշանակալի առիթով համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով ու բերկրանքով բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ շնորհաւորանքները:

Պատուարժան զաւակ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու. Դուք Ձեր կեանքի ողջ ընթացքին, իբրեւ հաւատարիմ ու նուիրեալ զաւակ Առաքելական մեր Մայր Եկեղեցու, հոգեւոր եւ մտաւոր Ձեր ողջ կարողութիւնները անմնացորդ կերպով ի սպաս էք դրել յանուն նրա շինութեան ու պայծառութեան: Ձեր ուսերն, արդարեւ, ծանրաբեռն են ազգօգուտ ու եկեղեցաշէն բազմարդիւն վաստակով:

Տասնամեակներ շարունակ Դուք կենդանութեան շունչ էք հաղորդել խունացած փաստաթղթերին՝ լուսաբանելով Հայոց Եկեղեցու պատմութեան նոր շրջանի փակ էջերը: Ձեր անդուլ ու անյոգնաբեկ աշխատանքով այսօր սեղանի վրա են «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան» շարքի եօթ հատորները, որ պարունակում են գիտական կարեւորութիւն ունեցող արժէքաւոր հարիւրաւոր վաւերագրեր:

Նոյն սիրով ու նախանձախնդրութեամբ Դուք գնահատելի եւ անփոխարինելի նպաստ էք բերել Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցի կեանքում՝ հիմնադրման օրից դասաւանդելով այնտեղ եւ անմնացորդ նուիրումով աջակցելով նրա կայացմանը: Այսօր տասներորդ յոբելեանն է նշում մեզ բոլորիս համար անչափ թանկ ու հոգեհարազատ կրթօջախը, որի հինգ սերունդ շրջանաւարտներն արդէն սպասաւո-

րում են բարեպաշտ ու հաւատաւոր մեր ժողովրդին: Նրանք բոլորն էլ երախտագիտութեամբ են յիշում Ձեզ, գնահատում ի նպաստ իրենց հոգեւոր կրթութեան ու դաստիարակութեան ներդրուած Ձեր ջանքերն ու անսպառ եռանդը, որը լաւագոյն վկայութիւնն ու վարձատրութիւնն է Ձեր անսակարկ նուիրումի:

Յարգարժան պրն Բանբուղեան, ի գնահատութիւն Ձեր մեծ վաստակի, գիտական գործունէութեան 45 եւ արխիւային աշխատանքի 40-ամեայ յոբելեանների առիթով, Հայրապետական այսու Մեր Կոնդակով սիրով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատւոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ խնամքով օրհնութեամբ միշտ քաջառողջ ու եռանդաշատ, շարունակէք Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը բերել մեր Մայր Հայրենիքին, Սուրբ Եկեղեցուն ու հաւատացեալ ժողովրդին:

Թող Աստուած ամենուր եւ յամենայնի օգնական լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ». ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29-ն Հոկտեմբերի
Յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 30

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔՍԱՆ ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք յղում Ձեզ՝ Մայր Եկեղեցու անդաստանում Ձեր նուիրեալ սպասաւորութեան 20 եւ կանադահայոց փրկախնամ թեմի առաջնորդութեան 10-ամեայ զոյգ յոբելեանների ուրախ առիթով:

Սիրելի Սրբազան. քահանայագործութեան եւ առաջնորդութեան Ձեր տարիները բազմարդիւն են ազգօգուտ ու եկեղեցաշէն գործերով, որոնք քաջակորով ու եռանդաշատ հոգեւորականի ճանաչում եւ բարի համբաւ են բերում Ձեզ:

Մենք բազում անգամներ Մեր բարձր գնահատանքն ենք յայտնել Ձեզ՝ Կանադայի հայոց թեմի առաջնորդի պարտականութեանց մէջ արձանագրած Ձեր յաջողութիւնների համար: Ծառայութեան հանդէպ Ձեր նուիրումի եւ նախանձախնդրութեան լաւագոյն վկայութիւն է այն իրողութիւնը, որ Կանադայում բնակութիւն հաստատած բարեպաշտ զաւակունք մեր Մայր Եկեղեցու երրորդ անգամ հաստատեցին իրենց անվերապահ վստահութիւնը Ձեզ՝ վերստին կոչելով առաջնորդական պատասխանատու պաշտօնին:

Սիրելի Սրբազան. Ձեր յոբելեանների բերկրալի առիթով Մեր սէրն ու Հայրական օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ անկեղծ գոհունակութեամբ բարձրօրէն գնահատում նաեւ Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակի գրասենեակի փոխ-տնօրէնի ծանր ու պատասխանատու պաշտօնը ստանձնելու եւ

ամենայն պատասխանատուութեամբ իրականացնելու համար: Ամիսներ յետոյ համայն մեր ժողովրդով Հայ Եկեղեցու դարակազմիկ յոբելեանը տօնախմբելու ենք մեծարժան վայելչութեամբ, որում գնահատելի ներդրում ունէք նաեւ Դուք՝ կազմակերպչական Ձեր կարողութիւններով ու անյոգնաբեկ աշխատանքով:

Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Ամենակալ Տէրը Իր խանդապաց օրհնութեան եւ ողորմութեան ներքոյ քաջառողջ արեւշատութիւն ու բիւր բարիքներ պարգեւի Ձեզ, որպէսզի Դուք Ձեր հարուստ փորձառութեամբ ու հոգեւոր խանդավառութեամբ շարունակէք Ձեր անսակարկ սպասաւորութիւնը՝ ի պայծառութիւն Կանադահայոց տիրախնամ թեմի եւ Առաքելական մեր Մայր Եկեղեցու:

«Ծառայ բարի եւ հաւատարիմ ... մուտ յուրախութիւն Տեառն քոյ» (Մատթ. ԻԵ 21):

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս», ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 31-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2000 եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 126

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակով «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է.

Քարեշնորհ Գևորգ սարկավագ Փանոսյանը (Փասադինա, ԱՄՆ):

Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակով «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել է.

Տիար Երվանդ Ակիշյանը (Լոս Անջելես, ԱՄՆ):

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գրերով պարգևատրվել են.

Արժանապատիվ Տ. Արթուր քհն. Սմբատյանը,
Տիկին Պեթի Փարսախյանը (Ֆրեզնո, ԱՄՆ),
Կանադայի (Մոնրեալ) և ԱՄՆ-ի (Ֆաուլր) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների համայնքները:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 26 հոկտեմբերի 2000 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ուղերձն է հղել հայ ժողովրդին՝ հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունների տարելիցի առիթով:

*«Սիրելի ժողովուրդ հայոց.*

*Լրացավ մեկ տարին ցավալի այն իրադարձությունների, որոնք 1999 թ. հոկտեմբերի 27-ին ցնցեցին և վշտով համակեցին համազգային հասարակական մեր կյանքը: Այսօր յուրաքանչյուր հայորդի իր հոգու խորքում մեկ անգամ ևս դատապարտում և մերժում է այն անմարդկային բռնությունը, որ արժեցավ մեր ժողովրդի ութ զավակների՝ պետական-քաղաքական բարձրաստիճան գործիչների կյանք և վտանգեց հայրենի մեր պետության կայունությունը: Ոգեկոչելով ու հարգելով հիշատակը Հայաստանի Հանրապետության զոհված պետական այրերի, որոնց նվիրական երազն էր տեսնել մեր Հայրենիքի զորացումն ու բարօրությունը, մեր ժողովուրդն այսօր հաստատում է օրինահարգ հասարակություն կերտելու իր կամքը և հավաստում հայրենի անկախ պետության լուսավոր գալիքի հանդեպ իր վստահությունը:*

*Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մենք մեկ անգամ ևս Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում զոհված պետական գործիչների՝ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանի, վարչապետ Վազգեն Սարգսյանի, Յուրի Բախշյանի, Ռուբեն Միրոյանի, Հենրիկ Աբրահամյանի, Արմենակ Արմենակյանի, Միքայել Քոթանյանի, Լեոնարդ Պետրոսյանի հարազատներին և աղոթք բարձրացնում առ Աստված, որ երանավետ Իր բարձունքներում խաղաղություն և լույս պարգևի նրանց հոգիներին: Թող Ամենակարող Տերը զորակից լինի մեզ բոլորիս առ Հայրենիքն ունեցած մեր պարտքի մեջ, որպեսզի մեր բոլորի համատեղ ջանքերով, անկեղծ նվիրումով ու ան-*

*խաղաղ սիրով իրական դառնա զոհվածների լուսեղեն երազը՝ բարեշեն վաղվա օրը մեր Հայրենիքի:*

*Խունկ և խնկարկում. երկնային օրհնություն հայոց երջանկահիշատակ պետական գործիչների շիրիմներին, անթառամ պսակ նրանց հիշատակին:*

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

* * *

Կիրակի օրը, հոկտեմբերի 29-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, հավարտ Ս. Պատարագի, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ հոկտեմբերի 27-ի ոճրագործության նահատակների: Ներկա էին հանգուցյալների ընտանիքների անդամները: Հոգեհանգստյան Պատարագից հետո Վեհարանում Նորին Սրբությունը վերստին իր մխիթարանքի և սփոփանքի օրհնության խոսքը հղեց հանգուցյալների հարազատներին:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԵՐԱՆԻ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾԵՐ»

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 23 նոյեմբերի 2000 թ.:**

Այսօր Վեհափառ Հայրապետը ներկա գտնվեց Վազգեն Սարգսյանի հիշատակին նվիրված «Ոգու փորձություն» գրքի շնորհանդեսին և իր շնորհավորանքը, գնահատանքն ու օրհնությունը տվեց գրքի հրատարակությունը նախաձեռնած ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանին, գրքի հովանավոր փիար Հրայր Հովնանյանին ու գրքի հրատարակությանը նպաստած այլ անձանց:

*«Սիրելի հայորդիք,*

*Մենք բոլորս հոգու բերկրանքով ենք գտնվում այստեղ՝ տոնելու շնորհանդեսը «Ոգու փորձություն» խոսուն անունը կրող գրքի, որը մեծարգո Տիար Գագիկ Հարությունյանի նախաձեռնողի աշխատանքով նվիրվում է Վազգեն Սարգսյանի հիշատակին: Բերկրանք ենք ապրում, քանզի այսօր լույս տեսնող գիրքը ականատեսի գրչի վավերականությամբ ներկայացնում է մեր ժողովրդի պատմական դժվարին ուղին դեպի անկախություն: Գրքի հրատարակությունը երախտիքի խոսք է՝ հանձին Վազգեն Սարգսյանի ուղղված մեր ժողովրդի արժանավոր այն զավակներին, որոնց ջանքերով, «ոգու փորձությամբ» և կյանքով ձեռք բերվեց հայոց նոր անկախությունը, պաշտպանվեց Արցախի ազատությունը և դրվեցին հայրենի պետականության կառույցի հիմքերը: Ուրախության հետ միաժամանակ թախիծն է պատում մեր հոգին. այսօր մեր կողքին չէ գրքի հեղինակն ու հերոսը: Ուղիղ մեկ տարի առաջ նրա երիտասարդ կյանքը ցավալիորեն ողբերգական վախճան ունեցավ: Ողբերգական մեզ համար, իսկ իր համար՝ հերոսական, քանզի զոհվեց իր պաշտոնի, իր պարտքի ու պատասխանատվության իրականացման ժամանակ: Այս պահին հիշում ենք 5-րդ դարի պատմիչի խոսքերը, թե ինչպես Հայաստանի ազատության ու խաղաղ կյանքի համար 4-րդ դարում մարտնչած ու հաղթանակներ վաստակած մեր նախարարներից Մանվել Մամիկոնյանը մահվան մահճում մանկան պես արտասվում և ափսոսում էր, որ մահն ընդունում է անկողնում, երբ իր մարմնի վրա ազատ տեղ չկար թշնամիների հարվածների սպիներից: Վազգեն Սարգսյանն այդպիսի ափսոսանք ապրելու հնարավորություն չունեցավ. մենք ենք ափսոսում, որ հասարակական մեր կյանքում թույլ տրված թերացումները թանկ կյանքեր են արժենում:*

*Արդարև, ժամանակների անհրաժեշտությամբ են ծնունդ առնում հերոսները և իրենք կերտում իրենց ժամանակը: Եվ երանի նրանց, ովքեր թողնում են արժանի գործեր, որպեսզի հետնորդները շարունակեն դրանք, ու երանի նաև նրանց, ովքեր գնահատել գիտեն այդ գործերը և իրենց հիշողության մեջ, իրենց հոգում ու սրտում արժանին են մատուցում արժանավորներին: Երախտագետ հայ ժողովուրդը միշտ հիշելու է Վազգեն Սարգսյանին, հիշելու է Հայկ Նահապետից մինչ օրս հազարամյակներով չափվող իր պատմության մեջ հայ զենքի, մտքի, կառուցող ու ստեղծարար հանճարի փառքին ծառայած նվիրյալների ու քաջերի շարքում: Հիշելու է նաև այս գրքի միջոցով, որի էջերից հառնում է հայ քաջորդու կերպարը, Հայրենիքը բարօր ու շեն տեսնելու նրա երազը՝ հանուն հայրենյաց նրա գործելու կամքով, նրա նվիրումով վարակելով սերունդներին:*

*Շնորհակալ այս գործի համար Տիար Գագիկ Հարությունյանին, հրատարակիչ-բարերար Տիար Հրայր Հովնանյանին այսօր սիրով բերում ենք Մեր գնահատանքը, շնորհավորանքները և Հայրապետական Մեր օրհնությունը: Մեր աղոթքն է, որ Աստծո խնամքի ու օրհնության ներքո հաջողությամբ պսակվի հայրենակերտումի այն ճանապարհը, որի անհոգնաբեկ կառուցողներից մեկն էր Վազգեն Սարգսյանը:*

*Հավերժական լույս Վազգեն Սարգսյանի անմահ հիշատակին»:*

Գրքի շնորհանդեսի առիթով իրենց գոհունակությունը հայտնեցին Գ. Հարությունյանը, Վազգեն Սարգսյանի մայրը՝ տիկին Գրետան:

Շնորհանդեսին ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, բարձրաստիճան պետական պաշտոնյաներ, պատգամավորներ, մտավորականներ:

# ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 6 նոյեմբերի 2000 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը նշանակվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Անգլիայի թեմի առաջնորդ՝ ազատվելով Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդի պարտականություններից: Նաթան Սրբազանի նոր նշանակումը կատարվել է Վեհափառ Հայրապետի կողմից Մեծ Բրիտանիայի ազգային-եկեղեցական իշխանություններին ներկայացված եռանուն ցանկի ընտրությամբ:

Անգլիայի թեմի նախկին առաջնորդ Տ. Եղիշե արքեպս. Գիզիրյանը կանցնի վաստակած հանգստի: Մինչ նոր առաջնորդի նշանակումը Ուկրաինայի թեմի առաջնորդի պարտականությունները ժամանակավորապես կիրականացնի Տ. Աբգար քհն. Գլըճյանը:

Նորին Սրբության մեկ այլ տնօրինությամբ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը ազատվել է Նոր Նախիջևանի և Ռոստովի հայոց թեմի առաջնորդի և Համայն Ռուսիո պատրիարքությունում Հայ Եկեղեցու ներկայացուցչի պարտականություններից՝ այլ պատասխանատու ծառայության կոչվելու համար:

Մինչ նոր առաջնորդի նշանակումը Նոր Նախիջևանի և Ռոստովի հայոց թեմի առաջնորդի պարտականությունները կիրականացնի Սանկտ Պետերբուրգի հայոց հոգևոր հովիվ Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանը:

# ՁԵՌԱՄԲ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՎԵՑ ՏԱՎՈՒՇԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 3-ին, վաղ առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց սահմանամերձ Տաշիր՝ կատարելու օծումը նորակառույց Ս. Սարգիս եկեղեցու:

Լոռու մարզի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, մարզային իշխանության ներկայացուցիչներ:

Տոնական տրամադրություն էր Տաշիրում: Վեհափառ Հայրապետին ծափողջույններով ու ցնծությամբ դիմավորեցին քաղաքի դպրոցականները, որոնց երկար ու ձիգ շարքերի միջով Նորին Սրբությունն առաջնորդվեց եկեղեցի: Եկեղեցու օծման առիթով Տաշիր էին ժամանել նաև ԱԺ բազմաթիվ պատգամավորներ:

Վերջին հարյուր տարիների ընթացքում պատմական Տաշիրը զրկված է եղել աղոթքի տուն ունենալու հնարավորությունից: Տաշիրցի եղբայրներ Սամվել և ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանների հովանավորությամբ կառուցված եկեղեցին այժմ միակն է այս տարածքում:

Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Ս. Սեղանը, որից հետո Նորին Սրբության աջակից Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Տ. Փառեն եպս. Ավետիքյանը և թեմակալ առաջնորդ Սեպուհ Սրբազանն օծեցին բոլոր սյուներն ու մկրտության ավազանը:

Սրբազան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքի խոսքն ու պատգամը հղեց ներկաներին: Ցավով նշելով, որ աստվածամերժության յոթանասուն տարիներն իրենց բացասական հետքն են թողել ժողովրդի հոգեբանության վրա, այնուհանդերձ Հայոց Հայրապետը համոզմունք հայտնեց, որ նորակառույց եկեղեցին ունկնդիր ու հաղորդակից դարձնելով ժողովրդին Աստծո խոսքին և Ավետարանի պատվիրաններին, կդառնա հոգեփոխության, կյանքի բարեփոխության և բարօրության հիմք:

Վեհափառ Հայրապետը միաժամանակ իր գնահատանքը հայտնեց թեմակալ առաջնորդին, որը հոգևորականների փոքրաթիվ բանակով կարողանում է կազմակերպել ժողովրդի հոգևոր կյանքը՝ հեռու պահելով այն կրոնական այլ քարոզչություններից: Իբրև նվեր նորակառույց եկեղեցուն, Վեհափառ Հայրապետը Սրբազան Հորը հանձնեց Հայ Եկեղեցու սիրված սրբերից Ս. Գևորգի սրբապատկերը:

Օծման արարողությունից հետո Ս. Սարգիս եկեղեցում մատուցվեց անդրանիկ Պատարագը:

# ՎԵՐԱՕԾՎԵՑ ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Կիրակի օրը, հոկտեմբերի 8-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու վերաօծման արարողությունը: Հայոց Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Մուղնու Ս. Գևորգ եկեղեցի՝ ձեռքին ունենալով Ս. Զորավարի մասունքն ամփոփող Աջը՝ ի օրհնություն և ի մխիթարություն բարեպաշտ ժողովրդի: Նախորդ օրն արդեն օծվել էին եկեղեցու սյուներն ու մկրտության ավազանը: Ձեռամբ Վեհափառ Հայրապետի վերաօծվեց եկեղեցու Ս. Սեղանը:

Ս. Գևորգ եկեղեցին եղել է հայ դպրության և գրչության կենտրոններից մեկը: Այն նաև հայկական ճարտարապետության յուրահատուկ կառույցներից է, որի ճարտարապետն է եղել Սահակ Հիզանեցին: Պատմությունը վկայում է, որ Ս. Գևորգ եկեղեցում ամփոփված է համաքրիստոնեական Սուրբ Գևորգ Զորավարի մասունքը, որ 350 թվականին Հայաստան է բերել Ներսես Մեծ Կաթողիկոսը: Այսօր սրբի մասունքներից պահվում է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա տարեդարձի նախաշեմին Ս. Գևորգ եկեղեցու վերասրբագործումը հնարավոր դարձավ շնորհիվ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի: Ինչպես երախտագիտությամբ նշեց Վեհափառ Հայրապետը, Սրբազան Հայրը եկեղեցու վերաշինության գործին էր նվիրաբերել իր քահանայական ձեռնադրության 35-ամյակի առիթով ԱՄՆ-ում հանգանակված միջոցները:

Ս. Գևորգ եկեղեցու վերաօծմամբ վերստին կյանքի կկոչվի նաև Մուղնու վանքը, որտեղ կրկին վերարթնություն է ապրելու վանական կյանքը:

«Անկախության բարի պտուղներն ենք քաղում մենք այս շրջանին մեր հավատացյալ բարեպաշտ ժողովրդի ձեռքերով: Սակայն ինչ արժեք պետք է ունենան այս ամենը, եթե դրանք միայն լինեն բարեկարգված ու բարեզարդված կառույցներ, եթե սրբազան տաճարների ներքո չպիտի լուսավորվեն մեր հոգին ու միտքը»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ հորդորելով հավատացյալ ժողովրդին մշտառաք աղոթքով կենդանի պահել հավատքի տաճարները:

Հավարտ վերաօծման արարողության, սրբագործված եկեղեցում մատուցվեց անդրանիկ Պատարագը: Պատարագիչն էր Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը:

# «ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 4-5-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի նախագահությամբ տեղի ունեցավ միջազգային խորհրդաժողով՝ «Քրիստոնեություն և իրավունք» խորագրով:

Խորհրդաժողովի ավարտին մասնակիցներն ընդունեցին հետևյալ բանաձևը.

## «ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՎԸ

«Քրիստոնեություն և իրավունք» խորագրով միջազգային խորհրդաժողովը՝

- գումարված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 2000 թ. նոյեմբերի 4-5-ը,
- նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանին,
- կազմակերպված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից,
- բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի և
- մասնակցությամբ Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, ԱՄ Նահանգների և Վատիկանի ներկայացուցիչների,

Քննարկելով

- անհատի իրավունքների ասավածաշնչյան ակունքները մարդնանշող,
- քրիստոնեական-բարոյական սկզբունքները արդի ժողովրդավարական պետության օրինադաշտի ստեղծման համար որպես աղբյուր կարևորող,
- ժամանակակից անհատի քրիստոնեական և իրավական աշխարհըմբռնումի ձևավորման և այլ հարցեր,

Ողջունելով այն եյակետը, որ ժամանակակից անհատի թե՛ քրիստոնեական, թե՛ իրավական աշխարհըմբռնումով է մեծապես պայմանավորված մեր երկրի առաջընթացի հաջողությունը, համազգային մեր կյանքի միասնությունը,

Առանձնահատուկ կարևորեց հետևյալ հիմնահարցերը.

ա) Հայ Եկեղեցական Իրավունքի աղբյուրների ծանոթության անհրաժեշտությունը ՀՀ օրենսդրության ձևավորման գործընթացում:

բ) Թարոյական օրենքի գործադրության կարևորությունը պետական և հասարակական կյանքում և անհատի հոգևոր ու քաղաքացիական կերտվածքի ձևավորման, կրթության ու դաստիարակության գործում:

գ) Պետության և Եկեղեցու ներդաշնակ համագործակցությունը առկա խնդիրներին համաքայլ դարձնելու անհրաժեշտությունը:

# ԾԱՌԱՏՈՒՆԿ՝ Ի ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ

Հոկտեմբերի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Խոր Վիրապ՝ մասնակցելու եհնավուրց վանքի տարածքում կազմակերպված ծառատունկին՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի:

Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Անդաստանի արարողություն. օրհնվեցին աշխարհի չորս ծագերը, դաշտերն ու շեները: Ապա Վեհափառ Հայրապետը, ուղեկից Սրբազան Հայրերը և արարողությանը ներկա բարձրաստիճան պաշտոնյաներն ու օտարերկրյա դիվանագետները տնկեցին ծառեր, որոնք կանաչ օղակով կշրջափակեն պատմական վանքի տարածքը:

1700-ամյակի առիթով Հայաստանում բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր են բարեկարգվում ու նորոգվում, որոնք մռռացության էին ենթարկված խորհրդային տարիներին: Դրանց տարածքների կանաչապատումը հանձն է առել Ամերիկայի Հայկական համագումարի ներքո գործող հայ-ամերիկյան հասարակական կազմակերպությունը, որը «Հայաստանի ծառ» ծրագրով ողջ հոբելյանական տարվա ընթացքում 17000 տնկիներով կզարդարի շուրջ 45 վանքեր ու եկեղեցիներ:

«Հատկապես թանկ ու նվիրական է ծառատունկի այս խորհուրդը, որովհետև այն իրականացվում է սփյուռքի հայորդյաց հետ»,- ասաց Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքում: Նորին Սրբությունը փառք և գոհություն առաքելով առ Աստված, 1700-ամյակի նախաշեմին եկեղեցիների բարեզարդման ու պայծառացման համար, իր գնահատանքը հայտնեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական գրասենյակի տնօրեն Տ. Հովնան արքեպս. Տերտերյանին և ծառատունկին անմիջական աջակցությունը բերող սփյուռքահայ զավակներին:

# ՑՆԾՈՒԹՅԱՆ ՕՐ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Օշական: Նրա հետ էին Ամերիկայի Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու և շրջակայքի ամբողջական բարեկարգումն իրականացավ շնորհիվ ամերիկահայ բարերար Ջիվան Կոբոյանի, որն, ինչպես Վեհափառ Հայրապետը նշեց, գտնվելով հայրենիքից հազարավոր մղոններ հեռու, հայացքը մշտապես հառած դեպի հայրենի երկիր, իր ազնիվ վաստակն էր շաղախել հայրենաշինության գործին:

Գնահատանքի ու երախտագիտության խոսքեր ասելով պրն Կոբոյանին՝ Նորին Սրբությունն իր խոնարհումը բերեց երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի հիշատակին, որի նախաձեռնությամբ ու հորդորով պրն Կոբոյանը երկու տարի առաջ հովանավորեց նաև եկեղեցուն կից Ս. Մեսրոպ Մաշտոց Դպրատան կառուցումը:

Նախանձախնդիր աշխատանքի համար Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նաև Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանին և երեք տարիներ թեմում առաջնորդած Նավասարդ Սրբազանին:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱԽՏՈՐՈՇԻՉ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՄԱՆԸ

Հոկտեմբերի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանում Փենսիլվանիայի Թ. Ջեֆերսոնի անվան բժշկական համալսարանի արտոնագրով ուլտրաձայնային ախտորոշիչ կենտրոնի բացմանը:

Բժշկական այս կենտրոնը, որը նշանակալի ավանդ կունենա հայրենական բժշկագիտության զարգացման գործում, հիմնվել է ամերիկահայ ազգային բարե-

բար, ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ Նազար Նազարյանի և նրա որդի, Ջեֆերսոնի անվան բժշկական համալսարանի պրոֆեսոր Լևոն Նազարյանի հանձնառությամբ:

Շնորհավորելով ներկաներին կենտրոնի բացման առիթով, Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը հայտնեց Նազարյանների ընտանիքին և մասնավորապես Նազար Նազարյանին, որի ազգանվեր գործունեությամբ բազմաթիվ ծրագրեր են իրականացվում Մայր Հայրենիքում: Պրն Նազարյանը նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալներից է: Նորին Սրբությունը երախտագիտությամբ նշեց, որ ազգային բարերարի նվիրատվությամբ է իրականացվում նաև Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի Ս. Տրդատ մատուռի կառուցումը:

Պրն Նազարյանին, ՀԲԸՄ-ին և հանդիսությանը ներկա ՀԲԸՄ նախագահ Լուիզ Սիմոն-Մանուկյանին երախտիքի խոսքեր ասացին նաև ՀՀ առողջապահության նախարար Արարատ Մկրտչյանը, համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՄԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԲՐԱՆՍՈՆ ՄԱՔ-ՔԻՆԼԻԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 24 նոյեմբերի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) գլխավոր տնօրեն Բրանսոն ՄաքՔինլիին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը էական և կարևոր համարեց մարդասիրական այն ծառայությունը, որ մատուցում է ՄՄԿ-ն Հայաստանում և ողջ աշխարհում:

Նշվեց, որ Հայաստանում այժմ բնակվում է շուրջ 400 հազար փախստական, որոնցից շատերը, տեղավորվելով աղետի և սահմանամերձ գոտիներում, գտնվում են առավել ծանր պայմաններում: Պրն Մաք-Քինլին և ՄՄԿ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Նիլիմ Բարուահը Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին փոքր բիզնեսի զարգացման միջոցով փախստականների ինքնահաստատման ու ինտեգրման ուղղված Հայաստանում իրականացվող կազմակերպության ծրագրերը: Հանդիպման ընթացքում ընդգծվեց նաև անօրինական միգրացիայի խնդրի լուծման կարևորությունը:

Իր հերթին Նորին Սրբությունը հյուրերին տեղեկացրեց սոցիալական այն ծրագրերի մասին, որ մտադիր է իրականացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հայաստանյան բոլոր մարզերում: Այս առիթով հանդիպման մասնակիցները կարևորեցին հետագա համագործակցությունը Եկեղեցու և ՄՄԿ-ի միջև:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՕՖ-Ի ՏՆՕՐԵՆ-ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի տնօրեն-խորհրդի անդամներին՝ ատենապետ Գևորգ Հովնանյանի գլխավորությամբ:

Նորին Սրբությունը կարևոր համարելով Եկեղեցու առկայությունը ժողովրդի ոչ միայն հոգևոր, այլև սոցիալական կյանքում՝ մեծ գնահատանքով նշեց ՀՕՖ-ի հայրենաշեն ձեռնարկները, որ Եկեղեցու հետ մեկտեղ իրականացվում են Հայաստանում 1988 թ. երկրաշարժից ի վեր: Այսօր էլ, առաջին անգամ Հայաստանում գումարելով իր հերթական նիստը, ՀՕՖ-ի տնօրեն-խորհուրդը հանդես է գալիս նոր ծրագրերով:

Հանդիպմանը ներկա ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը հավաստեց, որ թեմի հետ համատեղ գործող ՀՕՖ-ը շարունակելու է իր զորակցությունը Մայր Աթոռին ու Մայր Հայրենիքին:



*ԱՆՈՒՇԱՒԱՆ ԱԲԵՂԱՅ ԺԱՄԿՈՉԵԱՆ*

# ԱԶԳԱՅԻՆ, ՀՈԳԵՒՈՐ ԳԱՆՁԵՐԸ ԱՆԱՂԱՐՏ ՊԻՏԻ ՄՆԱՆ

*«Այս երգերը արեգակներ ունին... ոսկեզօծ պարզութեամբ, ամբողջովին երկնային, որու ջերմութիւնը զգուանք մըն է ծիւնապատ լեռներու գագաթներու, սաղարթագեղ անտառի եւ խոխոջող վտակաց փայլով...»:*

("Le Mercure Musical", 1906, թիւ 23-24)

Երկար ժամանակէ ի վեր ցանկութիւնն ունէի խնդրոյ առարկայ Հայ հոգեւոր երաժշտութեան շուրջ իմ մտածումներս ու մտահոգութիւններս թուղթին յանձնել: Շատ գրելիքներ կան տարբեր նիւթերու շուրջ (ծիսական, երաժշտական, ընկերային...), որոնց մէջ ինկած չես գիտեր թէ ուրտեղէն սկսիս, սակայն այս յօդուածիս իբրեւ հրաման ուժ հանդիսացաւ տոքթ. Լեւոն Մոմճեանի «Եկմալեան Պատարագի վերամշակո՞ւմ, թէ ոչ» յօդուածը («Էջմիածին», թիւ Բ, 2000):

Տարիներ առաջ, երբ կուսանէի Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը, հաճոյքով կը սպասէինք Կիրակի օրուան Պատարագին, որովհետեւ Մայր Աթոռի երգչախումբը, ղեկավարութեամբ տիար Խորէն Մեխանեճեանի, հրաշալիօրէն կը կատա-

րէր Պատարագի երգեցողութիւնը: Այնպիսի զգացում՝ կարծես բոլոր երկնային զօրութիւնները աղօթակից էին մեզի: Եկմալեան եւ Կոմիտասեան Պատարագները կը հնչէին գերշքեղ, որոնց շարքին լրացնելու եկաւ նաեւ Խորենեան Պատարագը: Այսօր քննութեան սեղանին միայն Պատարագը չէ, այլ նաեւ ողջ հայ հոգեւոր երաժշտութիւնը իր հասկացողութեան մէջ:

Լիւք-Անդրէ Մարսէլը կը խոստովանի ըսելով՝ «Ես, որ եկեղեցի չեմ երթար, հեռու եմ կրօնական ջերմեռանդութենէ, ամէն անգամ որ կ'ունկնդրեմ Կոմիտասեան Պատարագը, կը յեղափոխուիմ, կը վերանամ ... իր Պատարագը գլուխգործոց մըն է» (Յակոբ Յ. Ասատրեան, «Կոմիտաս Վրդ.-ի հետ երգի արահետներով», 1994, էջ 163):

Օտար երաժիշտները միշտ խոստովանել են եւ մինչեւ այսօր ալ՝ մեր օրերուն կը խոստովանին՝ հայ հոգեւոր երաժշտութեան խորհրդալի, հմայիչ եւ իրապէս Աստուծոյ շունչով ստեղծուած ըլլալը: Նորութիւն չէ, որ դարասկզբին Կոմիտասը իր Պատարագով, եւ ընդհանրապէս հոգեւոր եւ աշխարհիկ մաքրազարդուած երաժշտութեամբ գերեց ողջ Եւրոպան: Եւ այդ նոյն արձագանքները ալիքներու պէս կը հասնին մինչեւ մեր օրերը:

Կոմիտաս Վարդապետի Պատարագը եւ առհասարակ Կոմիտասեան, Եկմալեան, ինչու չէ նաեւ Խորենեան մշակումները անփոխարինելի գոհարներ են հայ մշակոյթի գանձարանին մէջ: Իսկ ինչ կը վերաբերի Մակար Եկմալեանի Պատարագին (այստեղ նշենք, թէ Մ. Եկմալեանը եղեր է Կոմիտաս Վրդ.-ի ուսուցիչը), այստեղ Կոմիտասը երբեք չի քններ ուսուցչին «Յարգելի երաժիշտ պրն Մ. Եկմալեանի այդ մեծածաւալ գործը» կոչելով: Կոմիտասը միայն սկզբունքային հարցերու մէջ կ'առարկէ անոր, մասնաւորապէս մերժելով Մ. Եկմալեանի պնդումը, թէ հայ երաժշտութիւնը «պարսիկ-արաբացի երաժշտութեան ոգու մէկ մասն է»: Կոմիտասի խօսքերով «Յարգելի երաժիշտ պրն Մ. Եկմալեանը մեր երգեցողութեան ամայի անդաստանին մէջ ներդաշնակութեան անդրանիկ թուփաստանը տնկեց: Սրտանց ուրախ ենք, որ հայերս այժմ կրնանք պարծենալ, թէ մենք ալ եւս չենք մնացած վսեմ գեղարուեստի եւ կատարելագոյն երաժշտութեան զարգացումէն...»:

Այսօր ունինք հոգեւոր երաժշտութեան հաստատ հիմքեր, եւ հաստատ հիմքերու վրայ շէնք կառուցելը աւելի դիւրին է եւ նպատակային: Եթէ այսօր ունինք 3 Պատարագներ, Մ. Եկմալեան, Կոմիտասեան եւ Խորենեան, այդ չի նշանակեր, որ չորրորդը, հինգերորդը կամ վեցերորդը ունենալու իրաւունքը չունինք: Հաճախ Եւրոպայի հայ երաժշտագէտներն այն կարծիքը կը պնդեն, թէ հայ եկեղեցական երգացանկը ճոխ չէ, եւ կ'առաջարկեն Պատարագի երգեցողութեան փոփոխում, դաշնաւորում: Եթէ լրջօրէն համեմատութեան մէջ դնենք Եւրոպական եկեղեցական երաժշտութիւնը, հայ եկեղեցական երաժշտութեան հետ (մեղեդիներ, գանձեր, տաղեր, շարականներ), ապա կը նկատենք, որ անհամեմատելի մեծ տարածութիւն կայ այս

երկու երաժշտութիւններու, եւ ոչ միայն երաժշտութիւններու, այլ նաեւ մտածողութիւններու եւ մօտեցումներու միջեւ, ժողովուրդներու մշակոյթներու միջեւ:

Երաժշտութիւնը անսահման է, ինչպէս մարդու զգացումները: Երբ կ՚ըսեմ «հոգեւոր երաժշտութիւն», աչքերուս առջեւ կը մարմնանայ երջանկայիշատակ Լուսինէ Զաքարեանը, որու ձայնային ելեւէջները զգլխում, հուզում եւ մխիթարութիւն կու տար ունկնդրողին եւ ունէ ունկնդրող լսելով այս գոհար գործերը, չի կրնար ըսել, թէ հայ երգացանկը աղքատ է: Չկայ աղքատ երաժշտութիւն, կայ երաժշտութեան աղքատ կատարում:

Տոքթ. Լեւոն Մոմճեանը իր «Եկմալեան Պատարագի վերամշակո՞ւմ, թէ ոչ» յօդուածի մէջ խիստ մտահոգուած է, թէ «... հայ երաժիշտներ եւս իրաւունք ունի՞ն նոր դաշնաւորումներ կատարելու իրենց հայեցողութեամբ, իսկ եթէ իրաւունք չունին, չե՞ն կրնար սրբագրութիւններ կամ բարելաւումներ կատարել, արդէն իսկ կատարուած դաշնաւորումները քիչ շատ փոխելով»:

Շատ հետաքրքիր է երաժիշտների այս մօտեցումը Սուրբ Պատարագի երգեցողութեան վերաբերեալ: Չեն ուզեր առողջ հիմքերու վրայ տուն կառուցել, այլ կը փորձեն հիմնադիրներ ըլլալ:

Մարդուն ստեղծագործական միտքը եւ անձին ներշնչումը երբեք կղպանքի մէջ չեն: Շատ հայ երիտասարդ երաժիշտներ մօտեցած են ինձ եւ փափաք են յայտնած նաեւ «ROCK» Պատարագ ստեղծել կամ երաժշտական տարբեր գործիքներով եւ մօտեցումներով մէկ Պատարագ: Սակայն երբ կ՚ըսեմ իրենց սկսիր գրել, այդ պահին կը պատասխանեն, թէ կը գրէի, եթէ պատուէր մը ըլլար:

Տոքթ. Մոմճեանը կը գրէ, թէ Խորէն Մեխանեճեանը միակ խիզախը եղաւ, որ հակառակ «կղերականներու ցոյց տուած ոչ քաջալերական ընթացքին», ստեղծեց, որ երաժիշտներու կողմէ Պատարագներ ունենայինք: ...երբ ազատութիւն չունին նոր մը շարադրելու»:

Ոչ ոք կրնայ ունէ մէկի ստեղծագործական ազատութիւնը բռնադատել, բայց եթէ երաժիշտներ, ինչպէս վերը նշեցի, կը խորտակեն հայկական հիմքերը, այս պարագային ոչ թէ բռնադատելի է, այլ դատապարտելի:

Երբ կ՚ըսուի, թէ Պատարագը կամ առհասարակ հոգեւոր երաժշտութիւնը պէտք է վերամշակել, կամ պէտք է փոխել, որովհետեւ հաւատացեալները կը ձանձրանան եւ դուրս կու գան եկեղեցիէն, եւ այդպիսով Եկեղեցին կը կորսնցնէ իր հաւատացեալները, աչքիս առջեւ կու գայ նոյն այսօրուան գերմանական Աւետարանական Եկեղեցւոյ վիճակը, որուն պատկերը կ՚երեւի "Evangelische Kirche leidet unter Schwund" այսինքն՝ «Աւետարանական Եկեղեցին կ՚ողբայ իր կորուստը» յօդուածին մէջ, ուր կ՚ըսուի, թէ Աւետարանական Եկեղեցին Թիւրինկէնի մարզին մէջ տարիէ տարի կը կորսնցնէ իր հաւատացեալները (հինգ տարուան մէջ 130 հազար), այս պատճառաւ կարիքն ունի նորութեան: Այս այն Եկեղեցին է, որ համաձայն յօդուա-

ծի հեղինակի, ունի հարուստ երաժշտութիւն: Այս պարագային սակայն աւանդութիւն չունենալն է պատճառը: Եկեղեցի մը, որ աւանդութիւն չունի, նման է ծառի մը, որ արմատ չունի, եւ եթէ ծառը արմատ չունի, երկար չի կրնար ապրիլ:

Փառք Աստուծոյ, Հայ Եկեղեցին ունի հզօր աւանդութիւն մը, եւ լաւ հիմքերու վրայ դրուած ազգային-եկեղեցական երաժշտութիւն: Աւետարանական Եկեղեցւոյ այդ նոր երաժշտութիւնն ալ առանց աւանդութեան ժողովուրդին չի կրնար դէպի Եկեղեցի առաջնորդել: Հայ Եկեղեցւոյ երաժշտութիւնը իր բարձր խորութեամբ աւելի կը գրաւէ եւ կը զմայլեցնէ հաւատացեալի հոգին, քան շատ անգամ քարոզիչներու ոչինչ ասող քարոզները:

Եւ առհասարակ, պէտք է տարբերել եկեղեցական երաժշտութիւնը դասական երաժշտութենէն: Բոլոր երաժշտութիւններն ալ, ինչպէս վերը նշեցի, գեղեցիկ են, չկայ ոչ գեղեցիկ երաժշտութիւն, այլ կայ երաժշտութեան ոչ ճիշտ հասկացողութիւն կամ տգեղ երգեցողութիւն:

Ցօղուածին մէջ տոքթ. Լ. Մոմճեանը կը կարծէ, թէ «սխալ է կոչել «Եկմալեան Պատարագ», որովհետեւ Եկմալեանը չունի անձնական Պատարագ որպէս նոր ստեղծագործութիւն, ինքնագիր եղանակ, ինչպէս Եւրոպական իմաստով պիտի ըսէինք «Մոցարտի կամ Պախի Պատարագներ»»:

Այո, պարզ է, որ բոլորն ալ (Մ. Եկմալեան, Կոմիտաս Վրդ. եւ Խ. Մեխանճեան) իրենց Պատարագները գրել են օգտուելով դարերու մէջէն իրենց հասած այս կամ այն եկեղեցական կամ ժողովրդական երաժշտութիւններէն, եւ, ինչպէս Կոմիտաս Վրդ-ը կ՚ըսեր. «Թէ՛ ժողովրդական, եւ թէ՛ եկեղեցական եղանակները ... քոյր եղբայր են», որն ալ անուններ հստակօրէն կ՚արտացոլուի Խորէնեան Պատարագին մէջ: Խնդրոյ նիւթը արդէօք անանուններու շարքը բազմացնե՞լն է: Երանի թէ բոլոր անանուններն ալ անուններ ունենային, որպէսզի իրենց անհատականութիւն արժանանային մեծարանքի ու յիշուէին: Ողջ աշխարհի մէջ յայտնի են Պախի Կանտատները, Մոցարտի Ռեքվիէմը: Բոլոր այս տեսակի երաժշտութիւնները հիմք մը ունեցած են, որմէ ներշնչուած ստեղծագործել են: Ներշնչումէ չբխած ստեղծագործութիւնը չի կրնար ուրիշին ներշնչել:

Հայ Հոգեւոր երաժշտութիւնը իրեն սեփականութիւն ունի երգելու եւ երգը մեկնաբանելու իւրօրինակ ձեւ: Ամէն երգիչ չի կրնար հոգեւոր երաժշտութիւն երգել եւ ամէն ստեղծագործող չի կրնար հոգեւոր երաժշտութիւն կատարել: Հոգեւոր երաժշտութիւնը աղօթք է, եւ եթէ աղօթքը զօրացնող, մխիթարիչ ոյժը չունենայ, ապա այն կը դադրի աղօթք ըլլալէ: Հոգեւոր երգեցողութիւնը Օփերա չէ, եւ երգողի ձայնը շատ անգամ այդքան ալ կարեւոր չէ, որքան ներկայացման ձեւն ու ապրումը: Եթէ երաժշտութեամբ կ՚ապրի կատարողը կամ հեղինակը, ապա այն կ՚ապրեցնէ նաեւ ունկնդիր հասարակութեանը:

Ուրեմն, եթէ մարդկային ստեղծագործական միտքը կը սահմանափակուի «ոչ քաջալերական ընթացքներու» եւ սեղումներու մէջ, պարզ է արդէն այդ ստեղծագործութեան պտուղները: Բոլորիս ձեռքն է, որ հաստատենք հայ եկեղեցական սրբազան եւ ազգային երաժշտութեան նոր ոսկեդարը՝ գալիքի ներշնչումներով ու ապագայի հրաշք տեսիլքով, հարստացնելով 1700-ամեայ միածնաէջ եւ միածնակերտ Հայ Եկեղեցւոյ անդաստանը, մեր կեանքով եւ ստեղծագործութիւններով ամրացնելով դարակերտ Հայ Եկեղեցիի սիւները, իսկ քաջալերանքի գնահատականը պատմութեան թողնելով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՎԻՂՆԵՐՈՎ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Եկեղեցիները բաժանված են այն ճանապարհով, որով նրանք կիրառում և հասկանում են Աստվածաշունչը»[1]:

Յուրաքանչյուր քրիստոնյա հավատացյալ գիտակցում է, որ բոլոր տեսակի աստվածաբանական ուղղությունները հաստատուն կերպով հիմնվել են Ս. Գրքի վրա: Այս պատճառով, Աստվածաշնչի մեկնաբանումը՝ *էկզեգետիկան*, մի յուրահատուկ դեր է ստանձնում աստվածաբանական գիտություններից ներս և Եկեղեցիների կյանքում:

Ներկա ժամանակներում հանդիպում ենք Աստվածաշնչի մեկնաբանման բազմաթիվ եղանակների: Քրիստոնեության ներքին դավանական խմբերն ուսումնասիրելիս տեսնում ենք չափազանց տարատեսակ և նույնիսկ հակասական մոտեցումներ Աստվածաշունչ մատյանի նկատմամբ: Մեկնաբանության եղանակներից մի քանիսը դիտվում են իբրև «չափից ավելի հետադիմական»՝ իրենց պահպանողականության հետևանքով, իսկ մյուսները՝ «չափից ավելի այժմեական», որովհետև նրանցից մի քանիսը, ժամանակի ոգով ներթափանցված, հասնում են մինչև անգամ Ս. Գրքի կատարյալ արժեզրկման:

Իրականությունը ցույց է տալիս, որ այսօր կանգնած ենք Աստվածաշնչի մեկնության իրարից մեծապես տարբերվող բազմաթիվ եղանակների առջև: Ինչպե՞ս պետք է վարվել այդ բոլորի հետ: Արդյոք կարո՞ղ են այսօր բոլոր Եկեղեցիները ունենալ Ս. Գիրքը հասկանալու մեկ համընդհանուր եղանակ: Եվ հնարավո՞ր է արդյոք մեր այս իրականության մեջ ստեղծել մի *էկումենիկ էկզեգետիկա*:

---

[1] "The Significance of The O. Testament in its Relation to the New", Report of Faith & Order Commission at Loccum 1977. WCC archives FO/78:2, Introduction.

# ԳԼՈՒԽ Ա
# ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Եթե այսօր փորձում ենք քննարկել Աստվածաշնչի մեկնաբանությանը վերաբերող հարցեր, ապա միանգամայն անհրաժեշտ է նախևառաջ մանրակրկիտ կերպով ուսումնասիրել Ս. Գրքի մեկնաբանման պատմական զարգացումը քրիստոնեության երկու հազարամյակների ընթացքում: Այս տեսակ պատմական ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ ներկայիս մեր ունեցած հարցերի գերակշռող մեծամասնությունը հիմնված է անցյալի որոշակի պատճառների վրա:

Էկզեգետիկայի պատմության մեջ կարելի է մատնանշել հինգ հանգրվաններ.

## 1) ՎԱՂ ՇՐՋԱՆ ԿԱՄ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄ

Մենք գիտենք, որ քրիստոնեական Եկեղեցին իր ամենավաղ օրերից ձեռնամուխ է եղել Ս. Գրքի մեկնաբանությանը: Էկզեգետիկայի սկզբնավորմանը հանդիպում ենք դեռևս ինքնին Հին Կտակարանի մեջ, ուր վաղ ժամանակների գրքերը մեկնաբանվում են ավելի ուշ շրջանի գրվածքներում, կամ երբ հին կանոններն ու օրենքները վերամշակվում և սրբագրվում են ավելի ուշ կազմված կանոններում (օրինակ՝ Երկրորդումն Օրինաց և Թագավորաց գրքերի պարագայում): Իսրայելացիների մոտ դպիրների և օրենսգետների ավանդության մեջ զանազանվում էին Սրբազան Գրվածքների բացատրման երկու եղանակներ՝ *ուղղակի*, *բացահայտ* իմաստով (peshat) և *մեկնություն*: Այս վերջինիս միջոցով տեքստի միջից դուրս էին բերվում ժամանակի ոգուն համապատասխանող կրոնական և հասարակական-բարոյական չափանիշները: Մատթ. Ե 17-48 կարդում ենք, որ Քրիստոս Ինքը դառնում է Մեսիական մեկնիչն ու «օրենքի լրացնողը»:

Ս. Գրոց բացատրման ընթացքը դեռ չի ավարտվել:

Ամենավաղ *քրիստոնեական էկզեգետիկան* սկսվել է բանավոր ավանդության մեջ, որը կանգնած էր տեքստի ետևում: Քրիստոնեական Եկեղեցին հիմնադրվեց այն սկզբունքով, որ Հիսուս Քրիստոս Իր Խաչելությամբ և Հարությամբ դարձավ այն *Անձը*, որի մասին մարգարեները վկայել էին Հին Կտակարանում: Քրիստոս ճանաչվեց և բնութագրվեց *Մարգարե* Մովսեսի օրինակով, *Թագավոր* տանն Դավթի, Մելքիսեդեկի կարգին պատկանող *Քահանա*, *Մարդու Որդի*, *Բարձրյալ Տեր* և այլն: Վաղ քրիստոնյաները հաստատում էին, որ այն սմնձը, ում մասին վկայել էին մարգարեները՝ Հիսուսն էր, և մարգարեների կողմից նշված *ժամանակը* ներկան էր: Միևնույն սկզբունքով դեռևս ամենավաղ շրջանում քրիստոնյաները զարգացրեցին Հին Կտակարանի մի յուրահատուկ մեկնություն, որի նպատակն էր ապացուցել, որ այսուհետև քրիստոնյաներն են հանդիսանում Աստծո շնորհքի ժառանգորդները և իրենք են *Աստծո որդիները* և ոչ թե բացառապես Իսրայելացի-

ները: Տվյալ դրույթներին հանդիպում ենք *«Բարնաբասի նամակում»*, Հուստինիանոսի *«Երկխոսություն Տրիփոնի հետ»* և Կիպրիանոսի *«Ընդդեմ Հրեից»* գործերում:

## 2) ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աստվածաշնչի մեկնաբանման այս շրջանը ներկայացնում է գաղափարախոսություն, և, համաձայն դրան, քրիստոնեական հավատքը և համայնքի գործնական կյանքը պետք է լինեն «աստվածաշնչային նյութերի արտացոլումը և դրանց տրամաբանական հետևանքը»: Անշուշտ այս շրջանում Աստվածաշունչը բոլորի կողմից ընդունվում էր իբրև Աստծո կողմից տրված, և, հետևաբար տեքստի յուրաքանչյուր հատված (անգամ դժվար ըմբռնելիները) իրենց համար ներկայացնում էին *Հայտնություն*: Հայրերը ընդունել են, որ Ս. Գրոց մեկնությունը մի յուրահատուկ առարկա է, և այդ պատճառով նրանք հաստատել են Աստվածաշնչի մեկնաբանման կանոնները:

Ալեքսանդրիան ուներ մի դպրոց դասական կրթության համար, որը Հոմերոսի էպոսների և հունական դիցաբանության մեկնաբանման համար կիրառում էր *այլաբանական* (ալեգորիկ) մոտեցում: Էկզեգետիկայի այս եղանակը ժամանակին կիրառել են նաև Փիլոնի և այնուհետև Ալեքսանդրիայի քրիստոնյա մեկնիչները: Սույն մեթոդը ծառայում էր Ս. Գրքի «հոգևոր վկայության դուրս բերմանը» և միևնույն ժամանակ արդյունավետ կերպով սերտ կապ ստեղծելուն աստվածաշնչային տեքստի և քրիստոնեական հավատքի միջև: Կղեմես Աղեքսանդրացին (150-215) և Որոգինեսը (185-254) չէին ուզում օգտագործել «բառացի ոգով» մեկնաբանության եղանակը և ջանադրաբար քաջալերում էին այլաբանական-հոգևոր բացատրությունները: Որոգինեսի *«Hexapla»*-ն տեքստի ուսումնասիրման պատմական լավագույն հուշակոթողներից մեկն է: Նա պնդում էր, որ Աստծո Հայտնությունը ուսանելու ամենանշանակալից դիտանկյունը կարելի է ձեռք բերել միմիայն այլաբանական մեթոդի միջոցով: Նրա կողմից Աստվածաշնչի բոլոր բառացի հաստատումները դիտարկվել են իբրև «կավեղեն ամաններ», որոնք իրենց մեջ պարունակում են աստվածային գանձեր: Բառացի տեքստը միայն «մարմինն» է, եթե այն համեմատենք բարոյական կողմի հետ՝ «ոգի», և հոգևոր կողմի հետ՝ «հոգի»: Նա վստահ էր, որ ճշմարիտ մեկնիչը կատարելապես տիրապետում է այս երեք եղանակներին, սակայն հոգևորը՝ այլաբանականը, ճանաչում է իբրև բարձրագույն: Միևնույն սկզբունքով Կղեմես Աղեքսանդրացին հաստատում էր, որ Հովհաննու Ավետարանը «հոգևոր» Ավետարան էր, որովհետև այն բացահայտում էր ավելի խորագույն ճշմարտություններ՝ մյուս համատեսների համեմատությամբ:

Ավելի ուշ. Անտիոքի Հայրերը, հատկապես Հովհան Ոսկեբերանը, (347-404) զարգացրեցին մի այլ մեկնություն, որը հաշվի էր առնում տեքստի բառացի նշանակությունը: Այդուհանդերձ տվյալ ժամանակահատվածում այլաբանական մոտեցումը ավելի հոգեհարազատ և հետաքրքիր էր միջակ խավին պատկանողների հա-

մար: Ալեքսանդրյան եղանակը ընդունելություն գտավ Արևմուտքում Ամբրոսիոսի (339-397) և ապա Օգոստինոսի կողմից: Վերջինս առաջնակարգ մեկնիչ չէր, սակայն նա Աստվածաշնչի բազմաթիվ հատվածներում համադրեց բառացի և այլաբանական մեկնությունները և ընդհանուրի համար *աստվածային Սերը* հաստատեց իբրև էական չափանիշ, որը պետք է գլխավոր տեղը զբաղեցներ մեկնաբանման սկզբունքների մեջ:

## 3) ՄԻՋՆԱԴԱՐ

Հայրերի դարաշրջանը հայտնի է *Սխոլաստիցիզմի* շրջան կամ *Միջնադար* անվանումով: Վաղ միջնադարում մեծապես զարգացավ և գրեթե բացարձակ հեղինակություն ձեռք բերեց Ս. Գրքի «չորս կողմանի» մոտեցման մեթոդը: Այս ընթացքին մեծապես օժանդակեց Թովմաս Աքվինացին (1225/6-1274) իր «*Summa Theologiae*»-ով: Գլխավոր կետը այն էր, որ մեկնաբանողը պետք է բացահայտեր տեքստի չորս երեսները կամ նշանակությունները.

I - Բառացի-առաջնակարգ կամ պատմական, II - Այլաբանական-հոգևոր կամ սիմվոլիկ, III - Բարոյական, IV - Տրամաբանությունից վեր-վախճանաբանական կամ երկնային: Տեքստի բառացի կողմը արտահայտում էր միայն հեղինակի մտածածը, և այսպիսով դա գիտական ուսումնասիրության առարկա է, իսկ տեքստի այլաբանական, փոխակերպյալ կողմը բացում էր Աստվածային մտադրությունը, և սա արդեն գիտականից շատ ավելի վեր մի աստիճան էր:

Որոշ տեղերում կիրառվում էր բառացի մեկնություն, շատ հաճախ րաբբիների կողմից պահանջված գիտության համաձայն (Հուգ, +1141, Անդրեաս Ուիգրացի, +1175, Նիկողայոս Լիրացի՝ 1265 - 1349):

## 4) ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

XV - XVI դարերում էկզեգետիկայի ասպարեզում տեղի ունեցան մի քանի տեղաշարժեր: Բարեկարգության հետևորդները այլևս չէին ցանկանում հետևել մեկնաբանության ավանդական համակարգին, այլ ընդհակառակը՝ փորձում էին նոր փոփոխությունների միջոցով կատարելագործել այն: *Հերմենևտիկ շրջանակի* մեջ նշանակալից կշռային տեղաշարժ տեղի ունեցավ, ինչը բոլորովին չլսված քայլ էր: Այսպիսով ինքնին մեկնաբանության ընթացքի մեջ կատարվեց «աստվածաբանական էվոլյուցիա»:

*Ս. Գրքի առաջնություն.* Աստվածաշնչից և Եկեղեցուց բաղկացած հերմենևտիկ շրջանակի մեջ բարեկարգյալ մեկնիչները այլևս ոչ մի վճռորոշ նշանակություն չէին տալիս Եկեղեցու վարդապետությանը: Դրա փոխարեն նրանք շեշտում էին միմիայն Ս. Գրքի հեղինակությունը: Նրանք Եկեղեցին այլևս չէին ընդունում իբրև աստվածային շնորհը կրող սրբազան հեղինակություն: Ջոն Քոլետը (1446 -1519)

տեքստը բացատրում էր իր ուղղակի նշանակությամբ՝ դրանով նա բոլորովին խզեց իր կապը միջնադարյան սխոլաստիցիզմի հետ: Էրազմ Ռոտերդամցին (1466 - 1536) Նոր Կտակարանի հունարեն մշակված խմբագրության հրատարակությամբ (1516) անկյունադարձային դեր խաղաց աստվածաշնչագիտության հետագա ընթացքի մեջ: Մարտին Լութերը (1483 - 1546) հայտարարեց, որ Ս. Գրքի էությունը կայանում է Քրիստոսի բերած փրկության շնորհի հռչակման մեջ: Նա դեմ էր ամեն տեսակ այլաբանությունների (չնայած երբեմն դիմում էր դրանց): Նրա տեսության համաձայն Սուրբ Հոգին էր ուղղակի խոսողը և գրողը երկնքում և երկրի վրա, ուստի նրա խոսքերը չեն կարող մեկից ավելի «ոգիներ» ունենալ, այնպիսի ոգի, որը մենք կոչում ենք բառացի, սովորական, բնական: Ջոն Կալվինի (1509 - 1564) մեկնությունները տարածվում էին գրեթե աստվածաշնչային բոլոր գրքերի վրա: Այլաբանական մոտեցման մեջ Կալվինը տեսնում էր սատանայի հորինվածքը, որով նա փորձում էր նսեմացնել Ս. Գրքի ճշմարիտ ոգին: Նա ընդունում էր, որ կարելի է տիպային նմանություններ գտնել Հին և Նոր Կտակարանների միջև, սակայն նա չէր համաձայնվում Լութերի այն մտքի հետ, որ Քրիստոս կարող է տեսանելի լինել Աստվածաշնչի բոլոր գրքերում: Նա հայտարարեց, որ մեկնաբանողի առաջին գործը պետք է լինի թույլ տալ, որ հեղինակը խոսի՝ մեր սեփական մտքերը նրան վերագրելու փոխարեն:

### 5) ԱՐԴԻ ՇՐՋԱՆ

Էկզեգետիկայի այս նոր շրջանը սկսվել է ֆրանսիական Լուսավորությունից և այն շարունակվում է մինչև այսօր: Աստվածաշնչի մեկնաբանության այս նոր ընթացքը կարելի է բնութագրել մեկ ընդհանուր նպատակով՝ ուսումնասիրել և հասկանալ տեքստը իր բուն պատմականության մեջ: Արդեն գիտենք, որ նախորդ փուլը հակադրություն էր բերել դավանաբանական մեկնության հանդեպ: Այս շրջանում ըմբոստության մի նոր ալիք բարձրացավ *հերմենևտիկայի* և էկզեգետիկայի միջոցով: Տարբեր տեսակներ երևան եկան Ս. Գրքի աստվածային ներշնչման վերաբերյալ, և նրանք բոլորն էլ այլևս չէին ընդունում Աստվածաշնչի անսխալականությունը: Հըստակ կերպով շեշտվեց Ս. Գրքում առկա մարդկային տարրը: Այս հանգամանքը մեծ ժողովրդականություն ձեռք բերեց: Անգամ նրանք, ովքեր հավատում էին «աստվածայնությանը», հետագայում արտահայտվեցին մարդկայինի և աստվածայինի փոխադարձ հարաբերության մասին: Այս շրջանում իշխող դեր ունեին տեքստային քննադատությունը, Ս. Գրոց լեզուների (եբրայերեն, հունարեն) մասնագիտական կիրառումը, պատմական կոնտեքստի հետևողական ուսումնասիրությունը: Աստվածաշունչ մատյանը սկսեց ուսումնասիրվել բազմաթիվ նպատակներով և դարձավ զանազան մեթոդիկ մոտեցումների առարկա: Անհրաժեշտ նախադրյալ էր, որ մեկնաբանողը պետք է լիներ առանց նախամիտումների և նախապաշարվածության (voraussetzungslos): Այսպիսով մեկնաբանությունը ամբողջապես

իրեն ազատ հռչակեց դավանաբանության գերիշխանությունից և Եկեղեցու կողմից խոստովանվող չափանիշներից: Ավելին, այսուհետև իբրև սկզբունք հայտարարվեց, որ Աստվածաշունչը պետք է մեկնաբանվեր միևնույն եղանակով, ինչպես և մյուս պատմական գրքերը: Աստվածային Ներշնչման կարևորագույն հանգամանքը ընդհանրապես մի կողմ էր դրվել, և մեկնիչները պարզապես սահմանափակվում էին պատմականության հարցերով:

Տվյալ շրջանի սկզբնական փուլում գոյություն ուներ *քերականական-պատմական* մեկնության մեթոդ, որը աստիճանաբար զարգանալով տրոհվեց երկու տարբեր դպրոցների՝ քերականական և պատմական: Շատ շուտով ի հայտ եկավ երրորդ զատորոշիչ կողմնորոշումը՝ *բանականություն* (ռացիոնալիզմ): XX դարի սկզբում ամբողջապես նոր ուղղություններ ասպարեզ իջան: Աստվածաշունչը սկըսեց ուսումնասիրվել ամենազանազան նպատակներով: Այսօր որոշ գիտնականներ այն ուսումնասիրում են կրոնական արժեքների և աստվածաբանական կողմի համար. սակայն միևնույն ժամանակ ոմանք Ս. Գրքին մոտենում են իբրև Իսրայելի ազգաբանության պատմական ձեռնարկ, կամ իբրև կարևոր փաստաթղթերի ժողովածու՝ հրեականության կամ քրիստոնեական գաղափարախոսությունների ուսումնասիրման համար, կամ, օրինակ, էսթետիկ և գեղարվեստական արժեքների դիտարկման համար: Այս շրջանի մասին ավելի մանրամասն պիտի խոսենք հաջորդ գլխում:

## ԳԼՈՒԽ Բ

## ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՆՈՐ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Ուսումնասիրելով քրիստոնեության պատմության ընթացքը՝ տեսնում ենք, որ Ս. Գրքի մեկնաբանումը կարծես մի մարտական դաշտ է եղել: Գրեթե բոլոր ժամանակներում քրիստոնյաները տարբեր կերպով են հասկացել Ս. Գրքի խոսքերը և, բնականաբար, տարբեր եղանակներով են բացատրել դրանք: Էկզեգետիկայում առկա այս տարաձայնությունները այնքան հին են, որքան ինքնին քրիստոնեական Եկեղեցին: Այս հողի վրա առաջին բանավեճը տեղի է ունեցել I դարում հրեաների և նորադարձ քրիստոնյաների միջև՝ Հին Կտակարանի Մեսիայի գալստյան հարցի շուրջ: Այնուհետև ի հայտ եկան բազմաթիվ սխալ ըմբռնողություններ տարբեր աստվածաշնչյային դրույթների պարագաներում և դրանց պատճառով զանազան վիճաբանություններ տեղի ունեցան Հայրաբանական և Միջնադարի շրջաններում: Թեպետև Բարենորոգությունը հավակնում էր լուծել առկա «անախորժությունները», այնուամենայնիվ այդ շարժման հետևանքով առաջ եկան բազմաթիվ հակասական մոտեցումներ: Այս բոլոր խնդիրները իրենց բնույթով աստվածաբանական տարբեր մտածողություններից էին առաջ գալիս, իսկ *պատմա-քննադատական* մեթոդի հետ

ծագած ճգնաժամը ամբողջապես տարբերվում էր նախկիններից. այն ավելի շատ ուներ փիլիսոփայական և մշակութային նկարագիր: Մեկնաբանական գիտությունը ձեռք բերեց բոլորովին տարբեր, մինչ այդ չկիրառվող մի մեթոդ, որը հիմնված էր պատմության «աշխարհիկ» հասկացողության վրա:

Դեռևս բարեկարգիչները պահանջում էին Ս. Գրքի *քննադատական* կիրառումը եկեղեցուց ներս: Նրանք իրենց համար հաստատեցին աստվածաշնչային մեկնության մի չափանիշ, որը պահանջում էր՝ հիմնվել միայն տեքստի տառացի ոգու վրա: XVII դարում ճշգրիտ գիտությունները և դրանց հետ միասին պատմությունն ու փիլիսոփայությունը անկախություն ձեռք բերեցին և դարձան ինքնուրույն միավորներ: Նրանք կատարելապես դուրս եկան Աստվածաշնչի հեղինակության և հին ավանդական համակարգերի սահմանափակող ազդեցության ոլորտ: Այս ընթացքը պատճառ դարձավ գիտական հեղաշրջման, այն նախապատրաստեց գիտություն ձեռք բերելու մի նոր մեթոդ, որը հետագայում խորապես ազդեց Աստվածաշնչի մեկնության վրա: Այս շարժման առաջնորդները հոգևորականությունը չէր, այլ աշխարհիկ գիտնականները:

Այս դարում, նոր հոսանքի զարգացման հետևանքով, Աստվածաշնչի համաշխարհային հեղինակությանը մարտահրավեր նետվեց: 1543 թ. արդեն հրատարակվել էր Կոպեռնիկոսի *«De Revolutionibus Orbium Coelestium»*-ը: Այս աշխատության տեսական կողմը արդեն իսկ ընդդիմություն էր ավանդական տեսակների նկատմամբ: Հովհաննես Կեպլերը զարգացրեց Կոպեռնիկոսի արևակենտրոն տիեզերական համակարգի տեսությունը և ապա հոչակեց, որ այս գիտական տեսությունը կատարելապես հիմնավորված է փորձերի վկայությամբ, հետևաբար այն ավելի ճշմարիտ է, քան Հայրերի կարծիքները: Նա պահանջում էր, որ գիտության հավաստի մեթոդները անպայմանորեն կիրառվեին Աստվածաշնչի ուսումնասիրության ժամանակ:

Միևնույն ընթացքով տեղի ունեցավ պատմական գիտությունների զարգացումը: Նախքան XVII դարը Ս. Գիրքը բարձրագույն հեղինակություն ուներ համաշխարհային ժամանակագրության և աշխարհագրության մեջ: Բնականաբար այդ հեղինակությունը շուտով սասանվեց, երբ հայտնվեց Աստվածաշնչի պատմական և հատկապես ժամանակագրական տվյալների սահմանափակումը:

Փիլիսոփայության մեջ տեղի ունեցած փոփոխությունները ավելի նշանակալից էին: Ռնե Դեկարտը իր *«Discourse de la Method»*-ով կասկած արտահայտեց մինչ այդ իշխող աշխարհի համակարգի ըմբռնման վերաբերյալ և դրանով փոխեց փիլիսոփայության, ճշգրիտ և պատմական գիտությունների գործադրական մեթոդները: Նա ստեղծեց երեք նոր սկզբունք. ա) Մարդը, իբրև մտածող առարկա, հանդիսանում է փիլիսոփայական հետաքննության կենտրոնը, բ) Ոչինչ չի կարող ընդունվել իբրև ճշմարտություն, որովհետև այնտեղ ավանդական պետք է լիներ «կասկածել ամեն ինչին» սկզբունքը, գ) Միմիայն Պատճառն է հանդիսանում ճշմարտության միակ չափանիշը: Դեկարտի հետևորդները զարգացրեցին երկու տեսակետ. նրանց

մեծամասնությունը պնդում էր, որ գոյություն ունեն ճշմարտության երկու կողմեր, որոնք բաժանված են իրարից, բայց իրար չեն հակասում: «Բնականին» վերաբերող խնդիրները պետք է քննադատորեն դիտարկվեն «ըստ Պատճառի», իսկ հավատքին վերաբերող հարցերը պիտի ուսումնասիրվեն միմիայն Ս. Գրոց հեղինակության ներքո: Ավելի ժամանակակից մտածողություն ունեցողները չէին ընդունում ճշմարտության այս տեսակ երկփեղկումը: Նրանք վստահ էին, որ ճշմարտությունը մեկն է, և այն *բանական է:* Հետևաբար, Աստվածաշունչը, և առհասարակ կրոնը, պետք է նույնպես բանական լինեն, այլապես նրանք ճշմարիտ չեն կարող համարվել:

Այս բացահայտումներից հետո առաջ եկավ հետևյալ հարցը՝ ինչպես պետք է այս նոր գիտությունները զուգահեռաբար քայլեն Աստվածաշնչի հեղինակության հետ: Հնարավոր էին երկու պատասխաններ. կա՛մ իրապես գոյություն ունեն երկու տարբեր և իրարից անկախ ճշմարտություններ, և կա՛մ գոյություն ունի միայն մեկը, ու անհրաժեշտ է ճշտել, թե որն է դա:

Երեսնամյա պատերազմից հետո Բարուք Սպինոզան գրում է. «Ճշմարտությունը չի կարող հակասել ճշմարտությանը»[2]: Իր «*Tractatus Theologico-Politics*»-ում նա փորձեց հերքել գերբնական հեղինակության դերը աստվածաշնչային մեկնության ժամանակ: Այս ոգով առաջնորդվելով նա բացատրեց, որ թե՛ Հին, և թե՛ Նոր Կտակարաններում տեղ գտած հրաշքները ներկայացնում են պարզապես հրեական ավանդություն, որը վերագրվում է Աստծուն, սակայն իրականության մեջ ոչ մի նման դեպք տեղի չի ունեցել: Այսու Աստվածաշունչը պետք է ուսումնասիրվի մնացած գրքերի օրինակով և ոչ թե հատուկ աստվածաբանական մոտեցմամբ:

Սա բանականության դարաշրջանի սկիզբ էր, և այս ժամանակ շատերի մտքում մի հարց էր արծարծվում. կա՛մ Ս. Գիրքը պետք է բանական լինի, կա՛մ էլ այն չի կարող ունենալ որևէ հեղինակություն: Շատ շուտով աստվածաշնչային տեքստի քննադատությունը չափազանց բացասական կողմնորոշում որդեգրեց և ամբողջապես «կործանողական» դարձավ:

Այս դարաշրջանը հաստատեց քննական մոտեցման առաջին կանոնները և իբրև սկզբնակետ վերցրեց մեթոդիկ կասկածը: Աստվածաշնչային հեղինակության կործանմանը միևնույն ժամանակ ձեռնամուխ եղան ճշգրիտ գիտությունների և նոր պատմության հետևորդները: «Պատճառը» իր հաղթանակն էր տոնում Հայտնության վրա: Շատ-շատերը համոզված էին, որ Աստվածաշունչն այլևս սովորական պատմական փաստաթուղթ է դարձել:

Ջոն Լոքի «*Essay on Human Understanding*»-ով (1660) և «*The Reasonablleness of Christianity as Delivered in the Scriptures*»-ով (1665) Անգլիայում առաջ եկավ դեիզմը (բնապաշտություն): Այս ուղղության հետևորդները չափազանց ազատ էին վարվում Ս. Գրքի հետ, երբ, համաձայն իրենց տեսակետի, այն չէր համապատասխանում Պատճառի սկզբունքներին: Դեիստները մեկնությունը կցեցին պատմական

---

[2] Edgar Krentz, "The Historical-Critical Method", Fortress Press, USA, 1975, p. 14.

մոտեցման հետ։ Այսպես XVIII դարի կեսին ի հայտ եկան որոշ հաստատումներ Աստծո և նախախնամության մասին, որոնք իրենց բնույթով սկեպտիկ էին (օրինակ՝ որևէ գերբնականի անկարելիությունը և այլն)։

Աստվածաբանների մեծամասնությունը գնալով ավելի ու ավելի էր մոտենում պատմական միտում ունեցող մեկնաբանությանը։ Ժան Ալֆոնս Տերենտիուսը պահանջում էր, որ մեկնիչը պետք է ինքն իրեն տեղափոխի միջադեպերի միևնույն ժամանակը և շրջապատը, որոնց մեջ Աստվածաշնչի հեղինակը ստեղծագործել է։ Ուետստեյնը գտնում էր, որ մեկնաբանողը պետք է իրեն դնի այն անձանց տեղը, որոնց առաջին անգամ ուղղված է եղել ավետարանական պատգամը։

Հովհան Օգոստինոս Էռնեստին բաժանեց Հին և Նոր Կտակարանների Մեկնաբանական ընթացքը։ Նա առաջին անգամ Ավետարանների տեքստը խմբագրեց բանասիրական-պատմական մեթոդով և դրա համար դարձավ «սրբապիղծ գիտական մեկնաբանության հայրը»։ Հովհան Սալամո Սեմլերն է ընդունվում իբրև պատմա-քննադատական աստվածաբանության հայր։ Նա վստահ էր, որ միմիայն բանասիրական-պատմական մեկնությունը կարող է հավաստի լինել։ Այս տեսակ մեկնությունը պետք է հիմնված լինի բուն կոնտեքստի և իր ժամանակին շրջապատող հանգամանքների վրա, պետք է տարբերություն դրվի Ս. Գրքի և Աստծո Խոսքի միջև, որովհետև որոշ աստվածաշնչային գրքեր չափազանց հեռու են փրկության առաջնորդելուց։ Նրա տեսակետով Հին Կտակարանի մեծ մասը այնս կորցրել էր իր պատմական ճշմարտացիությունը։ Նրանից հետո Քեյլը եզրահանգեց, էկզեգետը պետք է զբաղվի միմիայն փաստերի հաստատումով։ Այս ժամանակ սահմանվեցին մեկնաբանական աշխատանքին անհրաժեշտ կանոնները։

Այս ընթացքին զուգահեռ մի նոր հետաքրքրություն ծագեց Քրիստոսի կյանքի վերաբերյալ։ Հ. Ս. Ռեյմարիուսը կասկած հայտնեց ամեն ինչի վերաբերյալ։ Նա եզրակացրեց, որ ոչ մի հրաշք և որևէ հարություն տեղի չի ունեցել, այլ պարզապես Հիսուսի աշակերտները գողացել են նրա մարմինը։

Ֆրանսիական Լուսավորությունը, իբրև բանական շարժում, ժամանակակից դարձրեց Պատճառի և պատմության պահանջները։ Համաձայն Լուսավորիչների՝ կրոնի պահանջները չափից ավելի դուրս էին Պատճառի շրջանակից։ Այսպիսով նրանց «լույսի» ներքո Եկեղեցու աստվածաբանությունը կորցրեց իր հիմքը պատմության շղթայի միջից։

XIX դարում, մտավոր և հասարակական հեղափոխությունից հետո, մեծ փոփոխություններ տեղի ունեցան գրեթե բոլոր բնագավառներում։ Նոր ուսումնասիրություններ կատարվեցին մարդկային ծագումնաբանության ոլորտում, շատ մեծ հետաքրքրություն առաջ եկավ «Էվոլյուցիոն զարգացման» նկատմամբ։ Տնտեսության և քաղաքակրթության զարգացումը կատարելապես նոր աշխատաձևի կերպեր և հասարակական կեցվածք պարգևեց արդի աշխարհին։ Ողջ Արևմուտքը տարվեց

համընդհանուր *առաջընթացի* և առաջադիմական *զարգացման* լավատեսական ոգով: Աստվածաշնչի մեկնությունը, աշխարհիկ գիտությունների ազդեցությամբ, որդեգրեց նոր գործելակերպ: Այստեղ վճռորոշ դեր ունեցավ Ֆրիդրիխ Շլեյերմախերը: 1838-ին հրապարակած իր «*Hermeneutik*»-ի շնորհիվ Աստվածաշնչի ուսումնասիրությունը իբրև առանձին առարկա ներմուծվեց գերմանական համալսարաններում: Ս. Գրքի մեկնությունը այլևս ճանաչվեց «առանց գիջումների պատմական»: Ավգուստ Վիլհեմ Մեյերը իր «*Critical and Exegetical Comentary*»-ում (1829) հաստատեց, որ մեկնությունը պետք է ազատ լինի որևէ դավանանքից կամ «հոգևորությունից»: 1831-ին Կարլ Լաշմանը ստեղծեց Նոր Կտակարանի առաջին քննական բնագիրը: Դեվիդ Ֆրեդերիկ Շտրաուսը կտրականապես մերժեց Ավետարանների մեծամասնության պատմականությունը, հրաշքներն ու հարությունը համարվեց առասպել: Ֆերդինանդ Քրիստիան Բաուրը առաջին անգամ գրեց վաղ քրիստոնեության մասին՝ առաջնորդվելով պատմա-քննադատական մեթոդի սկզբունքներով: Նա համոզված էր, որ Պողոս առաքյալի նամակները պետք է սահմանափակվեն միայն Առ Հռոմեացիս-ով, Առ Կորնթացիս-ով և Առ Գաղատացիս-ով: Ի վերջո քրիստոնեությունը սկսեց դիտարկվել իբրև լոկ պատմական կրոն և ոչ թե հավիտենականություն առաջնորդող ճանապարհ:

Խնդիր ծագեց հավատքի և գիտության փոխհարաբերության վերաբերյալ. Աստվածաշունչը տարբեր կերպով էր ըմբռնվում: Համաձայն Օվերբեկի, պատմա-քննադատական մեթոդը անհնարին էր դարձնում Աստվածաշնչի քրիստոնեական կիրառումը: Հստակ էր, որ մեկնողական գիտությունը այլևս ոչ մի պատասխանատվություն չուներ Եկեղեցու առջև: Աստվածաշունչը վերջնականապես ճանաչվեց իբրև պատմական փաստաթուղթ, որը պետք է ուսումնասիրվեր այլ վաղ ժամանակի նյութերի օրինակով. «Ս. Գիրքը քննադատության առջև կանգնեց այնպես, ինչպես մեղադրյալը՝ դատավորի»[3]:

Ահա այս ոգով էկզեգետիկան ընթացավ մինչև Ա համաշխարհային պատերազմը:

Պատմա-քննադատական մեթոդը ամբողջապես խզեց իր կապը Եկեղեցու ավանդական մեկնաբանության հետ: Այս նոր ուղղությունը այնքան զորավոր կերպով էր արտահայտված, որ նախա-XIX դարյան էկզեգետիկան կարող էր կոչվել *նախա-քննադատական*: Ալեքսանդրյան և Անտիոքյան դպրոցների միջև եղած նախկին բոլոր վեճերը, կամ Բարեկարգիչների և Հայրաբանության հետևորդների անհամաձայնությունները այլևս կորցրել էին իրենց կարևորությունը, որովհետև այս նոր մեթոդը հարցականի տակ էր դրել նրանց ընդհանուր նեցահողը: Մարդու դերի չեշտումը հասավ իր գագաթնակետին:

Ա համաշխարհային պատերազմին հաջորդող ընթացքում իրավիճակը կտրուկ փոխվեց: Նախևառաջ պատերազմը հարց առաջացրեց պատմականության և

[3] Edgar Krentz, "The Historical-Critical Method", Fortress Press, USA, 1975, p. 30.

էվոլյուցիոն մտածելակերպի լավատեսական գաղափարի վերաբերյալ: Կարլ Բարթը առաջ քաշեց *աստվածաբանական մեկնության* տեսակետը. նա ընդունում էր, որ քննադատությունը կարող է միայն նախապատրաստական քայլ լինել էկզեգետիկայի համար. պետք է համառորեն ուսումնասիրել տեքստը, մինչև որ այն խոսի ժամանակակից մարդու հետ, և մինչև որ վայր ընկնեն անցյալը և ներկան բաժանող պարիսպները, և մինչև որ Աստծո Խոսքը ուղղվի մարդուն: Աստված օգտագործել է «մարդկային սխալական խոսքը»՝ մեզ մխիթարություն բերելու համար: Այսպիսով, Բարթը մի նոր հարց քարցրացրեց հավատքի և պատմական մեթոդի փոխհարաբերության շուրջ: Միևնույն ժամանակ Ռուդոլֆ Բուլտմանը նույնպես մատնանշեց պատմական մոտեցման թերությունը: Նրա համաձայն, Աստծո Խոսքը մի յուրահատուկ պատգամ ունի մարդու համար, և պատմա-քննադատական մեթոդը կարող է միայն ծառայել այդ պատգամը վերաբացահայտելու ընթացքին, Նոր Կտակարանը պահանջում է *գոյաբանական* (էկզիստենցիալ) մեկնաբանություն: Հավատքը ինքնին մի որոշում է, որը կայացվում է այդ պատգամի կոչմանը ի պատասխան, այս հավատքը չի կարող ենթակայորեն կախյալ մնալ պատմական գիտելիքներից: Նա համոզված էր, որ այս սկզբունքով «առասպելազերծելով» տեքստը՝ մենք կարող ենք ցույց տալ Խոսքի անկախությունը պատմությունից:

Այս երկու աստվածաբաններն էլ քննադատության ենթարկվեցին պատմությունը թերագնահատելու համար: Այնուամենայնիվ, նրանք ունեցան բազմաթիվ հետևորդներ, որոնք զարգացրեցին այս յուրահատուկ մեկնաբանական մոտեցումը (Ֆուքս, Լեհման, Վոեգտլ և այլք):

Այս նույն ժամանակներում մեծ կիրառություն ձեռք բերեց *ռնական* քննադատությունը, որը ևս մեկ անգամ հաստատեց այն գաղափարը, թե հավատքը և պատմությունը չեն կարող իրարից բաժանվել:

## ԳԼՈՒԽ Գ

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ԷԿԶԵԳԵՏԻԿԱ

Բ համաշխարհային պատերազմը Աստվածաշնչի նկատմամբ նոր վերաբերմունքի բացահայտման պատճառ հանդիսացավ: Մարդիկ գիտակցեցին, որ Ս. Գիրքը կարող է բարոյական և հոգևոր աջակից դառնալ անգամ ամենաանհույս վիճակներում: Պատերազմին հաջորդող առաջին տարիներին Էկումենիկ Շարժման ներսում քննություններ սկսվեցին նման հարցերի վերաբերյալ, ինչպես օրինակ՝ Աստվածաշնչի դերը և հեղինակությունը ժամանակակից կյանքում, ինչպե՞ս պետք է մեկնաբանվի Ս. Գիրքն այսօր, Հին և Նոր Կտակարանների փոխհարաբերության

խնդիրը: Հավատք և Եկեղեցական Կարգ (Faith & Order) կոմիտեն մի շարք լուրջ ուսումնասիրություններ կատարեց այս հարցերի շուրջ:

Էկումենիկ Շարժման ներսում և առավելապես Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում Աստվածաշունչը ընդունվել է իբրև «միավորող հանգամանք»: Յուրաքանչյուր Եկեղեցի, որը համագործակցում է Էկումենիկ Շարժմանը, հավատում է Ս. Գրքի հեղինակությանը և ընդունում այն իբրև անհամեմատելի աղբյուր՝ Հիսուս Քրիստոսի հայտնությունը ուսանելու համար: Բոլոր Եկեղեցիները գիտակցում են, որ իրենց տարաձայնությունները լուծելու ընթացքին Աստվածաշունչը կարող է դառնալ համընդհանուր կենտրոնական հիմք, որովհետև միայն աստվածաշնչային վկայության լույսի ներքո նրանք կարող են սրբագրել իրենց բաժանումները և վերամիանալ:

Պատերազմից անմիջապես հետո Էկումենիկ Շարժման ուսումնական բաժինը գումարեց մի քանի գիտաժողովներ, որոնք վերաբերում էին մասնավորապես Աստվածաշնչի և արդի աշխարհի փոխհարաբերության հարցերին: Այս գիտաժողովները տեղի ունեցան Լոնդոնում (1946), Բոսեյում՝ Շվեյցարիա (1947), Ջեթեում՝ Հոլանդիա (1948), և Ուադհամի Քոլեջում՝ Անգլիա (1949):

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ԳԻՏԱԺՈՂՈՎ

### (Ուադհամ Քոլեջ, Օքսֆորդ, 29 հունիս - 5 հուլիս 1949 թ.)

Այս ժողովի ընթացքին քննվեցին չորս դրույթներ, որոնք վերաբերում էին մեկնության սկզբունքներին և արդի աշխարհում Աստվածաշնչի կիրառությանը: Համառոտ շարադրանքով եզրակացությունները ներկայացնում էին հետևյալը.

*1) Աստվածաշնչի մեկնաբանության համար անհրաժեշտ աստվածաբանական նախադրյալներ*

ա) Աստվածաշունչը պետք է ընդունվի իբրև համընդհանուր սկզբնակետ, որովհետև այն ներկայացնում է Աստծո խոսքը:

բ) Աստվածաշունչը պարունակում է Աստծո շնորհքը և Նրա փրկարար զորությունը, որը կարող է փրկություն բերել մեղավորներին: Եվ մարդը կոչված է պատասխանելու այս պատգամին՝ իր հավատքով և հնազանդությամբ:

գ) Քրիստոնյա մեկնիչի ելման կետը պետք է բխի փրկությանը հավատացող համայնքից, որին ինքը պետք է պատկանի իր հավատքով:

դ) Աստվածաշնչի կենտրոնն ու գլխավոր նպատակը Հիսուս Քրիստոս է: Նա է օրենքների «լրումը և վախճանը»:

ե) Հին Կտակարանը պետք է մեկնաբանվի Հայտնության «ամբողջական» լույսի ներքո՝ Հիսուս Քրիստոսի անձի մեջ:

զ) Այլաբանական եղանակը չի կարող շատ օգտակար լինել:

է) Որևէ մեկնողական վարդապետություն, որը հակասում է Աստվածաշնչին, չի կարող քրիստոնեական ճանաչվել:

2) *Յուրահատուկ հատվածների մեկնություն*

ա) Դժվարություն ներկայացնող հատվածները պետք է ուսումնասիրվեն պատմա-քննադատական մեթոդի օգնությամբ:

բ) Հին Կտակարանի պարագայում տվյալ հատվածը պետք է բացատրվի Աստծո Հայտնության լույսի ներքո, այսինքն Նորկտակարանյան տեսանկյունից:

գ) Նոր Կտակարանի պարագայում, առաջին հերթին պետք է քննել ներքին կոնտեքստը և ապա ուսումնասիրել համապատասխան Հինկտակարանյան լայն ենթատեքստը:

3) *Աստվածաշնչի վարդապետության հղումները հասարակական և քաղաքական հարցերի վերաբերյալ*

ա) Աստվածաշնչային տվյալ տեքստը պետք է ուղղակիորեն ուսումնասիրվի համապատասխան խնդրի հարաբերությամբ:

բ) Ներկայում մասնավոր մի իրավիճակ դիտարկելիս մեկնիչները նախ պետք է մոտենան Նոր Կտակարանի վարդապետության տեսանկյունից, և երկրորդ հերթին պիտի նկատի ունենան Հին Կտակարանի տեսակետը:

գ) Աստվածաշնչի վարդապետությունը հասարակական-քաղաքական հարցերում կիրառելիս պետք է նկատի ունենալ այս աշխարհի «թագավորությունների» և Աստծո հավիտենական Թագավորության վախճանաբանական իրականությունը:

4) *Աստվածաշնչային պատգամի գործադրումը արդի աշխարհում*

ա) Մենք պետք է փնտրենք Ս. Հոգու առաջնորդությունը Ս. Գրքի միջոցով: Միևնույն ժամանակ պետք է հիշենք, որ մեր ներկայիս վիճակի և Աստվածաշնչային ժամանակի միջև գոյություն չունի կատարյալ նմանություն:

բ) Աստվածաշունչը ուղղակիորեն խոսել է Եկեղեցու հետ, և այսպիսով Եկեղեցին կարող է ավետաբեր դառնալ՝ ավետաբեր խոսնակ աշխարհի համար, քանի որ այն կերտվել է Աստծո Խոսքով:

գ) Մեկնիչները կարող են միմյանցից տարբերվել տարբեր ավանդություններին հետևելու պատճառով, սակայն բոլոր անհատական նախադրյալները պետք է դրվեն Ս. Գրքի դատաստանի առջև:

Ինչպես տեսնում ենք, այս գիտաժողովի հաղորդագրությունը լավատեսական էր: Անշուշտ ժողովը ընդունեց Աստվածաշնչային կոնտեքստի և արդի իրավիճակի միջև եղող տարբերությունը, բայց այդուհանդերձ համաձայնեց, որ Աստվածաշունչը բոլոր ժամանակներում էլ ունի բավարար հեղինակություն՝ մարդկությանը Աստծո Կամքի գիտությանը առաջնորդելու համար:

Մի քանի տարի անց հայտնի եղավ, որ այնքան էլ հեշտ չէր կապ գտնել աստվածաշնչային կոնտեքստի և մեր օրերի միջև: Տարբեր դավանական ավանդությունները ու համակարգերը չէին ցանկանում հրաժարվել իրենց պատմական «ժառանգություններից»: Յուրաքանչյուր մեկնաբան նախևառաջ պաշտպանում էր իր սեփական ավանդության սկզբունքները: Տարբեր ավանդական դպրոցներ բացարձակապես տարբեր ճանապարհներով էին բացատրում իրենց հարաբերությունը Ս. Գրքի հետ: Անհրաժեշտ էր ճշտել, թե որտե՞ղ է ճշմարտությունը՝ Ավանդությա՞ն մեջ և Ս. Գրքու՞մ, թե՞ այդ երկուսից միայն մեկում: Այս հարցի լուծման համար անհրաժեշտ եղավ կազմակերպել նոր ուսումնասիրություններ, որոնք պիտի պարզաբանեին Ս. Գրքի և Ավանդության փոխհարաբերությունները:

1963 թ. Մոնրեալում «Հավատք և Եկեղեցական Կարգ» կոմիտեի չորրորդ Համաշխարհային համագումարը մի զեկույց պատրաստեց՝ *«Ս. Գիրքը, Ավանդությունը և ավանդությունները»* խորագրով: Այն զանազանում դրեց *Ավանդության* (մեծատառ «Ա»-ով) և *ավանդությունների* (փոքրատառ «ա»-ով) միջև: Առաջինը՝ ինքնին Ավետարանն է, որը Եկեղեցու միջոցով փոխանցվել է սերնդե սերունդ, իսկ «ավանդությունները» այս մեկ «Ավանդության» տարբեր արտահայտություններն են: «Մեր ելակետն այն է, որ մենք բոլորս ապրում ենք մի ավանդության մեջ, որը ետ է գնում մինչև մեր Տիրոջ ժամանակները և իր արմատներն ունի անգամ Հին Կտակարանում... Մենք կարող ենք ասել, որ իբրև քրիստոնյաներ գոյատևում ենք Ավետարանի Ավանդությամբ (paradosis of kerygma), որը Ս. Հոգով վկայված է Ս. Գրքի մեջ, փոխանցված *Եկեղեցում* և Եկեղեցու միջոցով» (§ 45): Այնուհետև մենք գտնում ենք, որ «Ավանդությունը իր գրված վիճակում իբրև Ս. Գիրք (երկուստեք Հին և Նոր Կտակարաններում), Եկեղեցու կողմից պետք է մեկնաբանվի բոլոր ժամանակներում» (§ 50):

Ինչպե՞ս կարելի է կատարել *ճիշտ* մեկնություն: Ո՞րն է այն չափանիշը և հերմենևտիկ սկզբունքը, որը կիրառելի է համընդհանուր մեկնաբանության համար: Ժողովում սահմանվեց, որ ճիշտ մեկնությունը այն մեկն է, որն առաջնորդվում է Ս. Հոգով: Համընդհանուր չափանիշ սահմանելը սակայն գրեթե անհնարին էր: Յուրաքանչյուր մեկնիչի անձնական հավատարմությունը իր դավանական մտածելակերպի նկատմամբ խոչընդոտում էր ընդհանրական մեկնաբանությանը:

Գիտաժողովի ժամանակ երկու զեկույցներ ունեցան Էրնեստ Կասեմանը և Ռայմոնդ Ե. Բրաունը: Նրանք ցույց տվեցին մեկնաբանության համար կայուն հիմքերի

հաստատման անհրաժեշտությունը: Պատմա-քննադատական մեթոդի օգնությամբ հստակորեն ցույց տվեցին Նոր Կտակարանում առկա բաժանման առկայությունը, որը իր հերթին պատճառ էր հանդիսանում դավանանքների «բազմապատկման»:

Չնայած որ զեկույցում քաջալերվեց հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտությունը, այլևս պարզ էր, որ Մոնրեալը բերեց ոչ միայն մի նոր մոտեցում, այլ նաև բոլորովին նոր, ոչ դրական հող պատրաստեց Աստվածաշնչի համար: Այսուհետև հստակ էր, որ քննադատական մեթոդը պետք է գլխավոր դեր ստանձներ էկզեգետիկայի մեջ: Աստվածաշնչային պատգամը և դոգման գրեթե ամբողջությամբ կորցրեցին իրենց լավատեսական հեռանկարները:

Հեշտությամբ կարելի է տեսնել, որ մեծ ճեղք առաջացավ Ուադհամի և վերջին համագումարների միջև: Վերստին սկսվեցին նոր ուսումնասիրություններ էկումենիկ հերմենևտիկայի ասպարեզում: Այս կապակցությամբ հիմնվեցին հինգ տարբեր շրջանային խմբեր՝ Գերմանիա-Հոլանդիա, Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Ֆրանսիա-Շվեյցարիա: Յուրաքանչյուր խումբ աշխատում էր մասնավոր աստվածաշնչային հատվածի վրա՝ ճշտելու համար ամենահարմար հերմենևտիկ սկզբունքները: 1967 թ. պրոֆ. Ջեյմս Բարրը հավաքեց խմբերի ուսումնասիրությունների արդյունքները, դրանք ի մի բերեց մեկ զեկույցի մեջ՝ *"The Significance of the Hermeneutical Problem for the Ecumenical Movement"* խորագրով: Այս զեկույցը ներկայացվեց «Հավատք և Եկեղեցական Կարգ» կոմիտեի ընթացիկ ժողովին Բրիստոլում (1967):

Այն իրենից ներկայացնում էր Մոնրեալի որոշման հաստատումը գիտական էկզեգետիկայի վերաբերյալ: «Աստվածաշունչը պարունակում է մի խումբ գրավոր փաստաթղթեր, ուստի այն պետք է ուսումնասիրվի միևնույն մեթոդներով, որոնք կիրառված են այլ փաստաթղթերի ուսումնասիրման մեջ: Աստվածաշունչը պատմական ընթացքի արդյունք է: Այն կյանքի է կոչվել պատմական իրադարձությունների և փորձառությունների միջոցով... Այս պատճառով մենք հաստատում ենք պատմա-քննադատական մեթոդի անհրաժեշտությունը» (§ 31): Այսպիսով, Ս. Գիրքը ճանաչվեց իբրև մարդկային գրվածքների մի հավաքածո:

Մեծ ուշադրության էր արժանացել Ս. Գրքի ներքին միության ու բաժանվածության խնդիրը: Մատնանշվեց, որ աստվածաբանական փոխհասկացողության գլխավոր խոչընդոտները այս բաժանվածությունից են բխում: Տարբեր Եկեղեցիների ավանդական համակարգերի միությունը կարող է ձեռք բերվել Ավետարանական «միությունների» յուրացման շնորհիվ:

Մեկնաբանության ընթացքի համար անհրաժեշտ է բնագիր տեքստը, որովհետև «...Աստվածաշնչի տեքստը ինքնին պատմական անցում է ապրել, և բուն արձանագրությունները այլևս գոյություն չունեն» (§ 39): Եբրայերենի և հունարենի իմացությունը պարտադիր համարվեց: Պետք է զգուշանալ Ս. Գրքում կիրառված նշաններից (սիմվոլներից), որովհետև նրանք կարող էին հսկողությունից դուրս հանել լեզվական բուն իմաստը:

Ինչպես նշեցինք, մեծ դեր տրվեց աշխարհիկ գիտություններին և նաև ոչ քրիստոնյաների մասնակցությանը ուսումնասիրման ընթացքի մեջ, որը կարող է «ստեղծագործական և կառուցողական լինել»: Այսպիսով, էկզեգետիկայի առաջադրանքը դարձավ՝ քննել և մանրամասն մշակել Աստվածաշունչը հասկանալու ճանապարհները և ճարկ եղած դեպքում անցամ սրբագրել այն:

Զեկույցի վերջում արձանագրվեցին որոշ ընդհանուր մտածումներ.

*Հերմենևտիկ ընթացքի առաջնորդությունը զանազան ավանդությունների կողմից*

ա. Անհրաժեշտ է ընդունել, որ ցանկացած տեսակետ կամ հերմենևտիկ սկզբունք կարող է կիրառելի լինել: Ոչ ոք չի կարող պահանջել, որ իր մեթոդը գերիշխող է մյուսների նկատմամբ:

բ. Մասնավոր հատվածներ կարող են պահանջել յուրահատուկ պատմական քննություն, որը ամեն տեսակ ավանդական տեսակետից դուրս է:

*Ավանդությունը, Ս. Գիրք և Եկեղեցի*

ա. Ներկայումս Ս. Գիրքը առանց «թարգմանության» չի կարող վերցվել իբրև ճշմարտության լիարժեք չափանիշ, որովհետև որոշ կետերում այն կարող է ասելու ոչինչ չունենալ:

բ. Ս. Գիրքը արտահայտությունն է Եկեղեցու Ավանդության: Այն սակայն չի պարունակում ամբողջական ճշմարտություն, այս պատճառով հերմենևտիկան հատուկ ծառայություն կարող է մատուցել Եկեղեցուն:

գ. Աստվածաշնչի հարցը պետք է նորանոր քննարկումների ենթարկվի և ապացուցվի բոլոր տեսանկյուններից:

«Հավատք և Եկեղեցական Կարգ» կոմիտեն, ստանալով Բրիստոլի զեկույցը, առաջարկեց շարունակել ուսումնասիրությունները հատկապես Աստվածաշնչի հեղինակության հարցում: Քսանհինգ աստվածաբաններ միասին աշխատում էին Բոլոներնում, և նրանց արդյունքները կրկին ի մի բերեց պրոֆ. Ջեյմս Բարրը՝ *"The Authority of the Bible: a Study Outline"* գրքույկով: 1971 թ. Լուվենի ժողովում կոմիտեն ընդունեց այս ուսումնասիրությունների վերջնական զեկույցը:

Խնդիրը սկսվում է հետևյալ հարցով. «Ո՞րքա՞ն ազդեցություն ունի Աստվածաշնչի հեղինակությունը քրիստոնեական մտածելակերպի և վարքի վրա: Ինչպե՞ս պետք է մոտենալ Աստվածաշնչին, որպեսզի Աստծո հեղինակությունը այսօր այնտեղից խոսի մեզ հետ»: Ակնհայտ փաստ է, որ Աստվածաշունչը տարբեր իմաստներով է ընթերցվում և հասկացվում Եկեղեցիներում: Նրանք Աստվածաշունչը օգ-

տագործում են իրենց աստվածաբանական դիրքորոշումները արդարացնելու համար և դրանով դժվարություններ ստեղծում ժամանակակից հերմենևտիկայի համար: Այս պատճառով, եթե էկզեգետիկան փորձում է բացահայտել, թե ո՞րն է Ս. Գրքի ներկայիս պատգամը, ապա այն կարիք ունի հաշվի առնելու աշխարհի ներկա իրավիճակը:

Զեկույցում կարդում ենք, որ Աստվածաշնչի հեղինակությունը պետք է հասկացվի իբրև մի «հարաբերական հասկացություն»: Նոր Կտակարանը ինքնին ամենամեծ պատճառն է տարատեսակ մեկնաբանությունների՝ իր նյութերի բազմազանության հետևանքով: Այս պատճառով ուսումնասիրողները անհնարին գտան խոսելու «կանոնի ներսում եղող կանոնի մասին» կամ «նյութական կենտրոնի մասին»: Դրա փոխարեն ստեղծվեց մի նոր հասկացություն՝ *հարաբերական կենտրոն*: Ինչպես որ աստվածաշնչային հեղինակները ժամանակին արձագանքել են իրենց հատուկ իրավիճակին, նույն կերպով ժամանակակից մեկնիչները պետք է «սահմանվեն» մեր ներկա իրավիճակով:

Իբրև արդյունք այս տեսակ մոտեցման՝ ընդունելի համարվեցին տարատեսակ *կոնտեքստային աստվածաբանությունները* և զանազան մեկնաբանական մոտեցումները (օրինակ՝ սևամորթների աստվածաբանություն, ազատության աստվածաբանություն, ֆեմինիստական աստվածաբանություն և այլն):

Այս հիմքի վրա կոմիտեն շարունակեց իր աշխատանքը հատուկ խորագրի ներքո՝ *"The Significance of the Old Testment in it Relation to the New"*: Այն առաջին անգամ ներկայացվեց Լոքումի հավաքին (1977) և վերջնական ընդունման արժանացավ Բանգլորի ժողովում (1978):

«Եկեղեցիները բաժանված են այն ճանապարհով, որով նրանք կիրառում և հասկանում են Աստվածաշունչը: Միևնույն ժամանակ նրանք շարունակում են հուսալ, որ [Աստվածաշնչի] միասնական ընթերցումն ու ընդունումը նրանց կարող է միավորել... Աստվածաշնչի հեղինակությունն ու այն մեկնաբանելու եղանակը անտարակույս լուծում պահանջող հարցեր են»[4]:

Դեռևս Լուվանում լուրջ առաջարկ էր արվել զբաղվելու Հին Կտակարանով: Այս զեկույցը փորձում էր զարգացնել Հին Կտակարանի մասնավոր դերը ներկա իրադրության մեջ և ցույց էր տալիս նրա հարաբերությունը Նոր Կտակարանի հետ:

1) *Խնդիր*

ա. Տարբեր Եկեղեցիներ ընդունում են Հին Կտակարանի տարբեր խմբագրություններ (օրինակ՝ Յոթանասնից կամ եբրայերեն Մասորա): Այս խմբագրություններ միջև կան ոչ միայն լեզվական, այլ նաև իմաստային տարբերություններ:

[4] Faith and Order Paper No. 99 WCC, Geneva, 1983, p. 59.

բ. Տարբեր երկրամասերում բոլորովին տարբեր կերպով է ըմբռնվում Հին Կտակարանի այժմեականությունը (օրինակ՝ Արևմուտքում պատմա-քննադատական մոտեցում, Աֆրիկայում այն ավելի ընդունելի է, քան Նորը):

գ. Հին և Նոր Կտակարանները պատմական շարունակություն ունեն, ուստի Նոր Կտակարանը չհարժեք հասկանալու համար կարիք ունենք Հնի: Որոշ Եկեղեցիներ, սակայն, այս երկուսի միջև տեսնում են ոչ թե պատմական, այլ աստվածաբանական շարունակություն:

դ. Քրիստոնյաների և մյուս կրոնների ներկայացուցիչների հարաբերությունը չափազանց տարբեր կերպով է ըմբռնվում: Նրանք, ովքեր չեն ընդունում Հին և Նոր Կտակարանների աստվածաբանական կապը, հաստատում են, որ մյուս կրոնների և գաղափարախոսություններին հետևող մարդիկ նույնպես իրենց սեփական տեղն ունեն Աստծո փրկության ծրագրի մեջ: Այլ կերպ ասած, նրանք հավատում են, որ չնայած Քրիստոս ճանաչվում է Նոր Կտակարանի վկայության միջոցով, այդուամենայնիվ Նա կարող է էապես հասկացվել յուրաքանչյուր հավատքի և գաղափարախոսության մեջ: Այսպես, մեր ժամանակներում պետք է մշակվեն Հինդուս-քրիստոնեական, Բուդդիստ-քրիստոնեական կամ Մարսիստ-քրիստոնեական Քրիստոսաբանություններ (§ 65): Հստակ է, որ շատերը չեն կարող համաձայնվել այս տեսակ տարօրինակությունների հետ:

*2) Համընդհանուր հեռանկարներ*

ա. Ս. Գրքում կան այնպիսի կետեր, որոնք կարող են կենտրոնական համարվել բոլոր Եկեղեցիների համար (օրինակ՝ Աստծո Ուխտը, Հույս, Սեր, Իմաստություն և այլն):

բ. Նոր Կտակարանը կարող է հատկանշվել այնպիսի կենտրոնական թեմաներով, ինչպես, օրինակ, Հիսուս Քրիստոսի մարդացումը, տառապանքը, խաչելությունը, մահը և հարությունը, Ս. Հոգու զորությունը: Հին Կտակարանը կարող է հատկանշվել իբրև կարևոր աղբյուր՝ մարդու և բնության ստեղծման մասին գիտելիքներ ձեռք բերելու համար:

գ. Հին Կտակարանը չի կարող այսօր բուն հեղինակություն ունենալ, որովհետև նրա խոսքերից շատերը չեն կարող այսօր ընդունելի լինել: Սրա համար տեքստի ընթերցումը պետք է ուղեկցվի այնպիսի մոտեցմամբ, որը հաշվի է առնում արդի քննադատական գիտությունը (§ 73):

*3) Էկումենիկ առաջարկություններ*

ա. Հին Կտակարանը պետք է ընդունվի իբրև Ս. Գրքի անբաժանելի մաս.

բ. Հին Կտակարանը կարող է գործածվել քաղաքական խնդիրների լուծման համար.

գ. Հին Կտակարանը կարող է ենթահող պատրաստել միության համար՝ Նոր Կտակարանը հասկանալու ընթացքին.

դ. Բոլոր Եկեղեցիները պետք է ունենան Աստվածաշնչի միևնույն խմբագրությունը.

ե. Պետք է լրջորեն քննարկվի Հին Կտակարանի դերը մյուս կրոնների հետ վարվող երկխոսությունների ժամանակ:

1996 թ. դեկտեմբերին Սալվադորում (Բրազիլիա) տեղի ունեցավ «Կոչված մեկ հույսի: Ավետարանը բաժանված մշակույթներում» խորագիրը կրող համագումար, որը նվիրված էր համաշխարհային առաքելությանը: Այս հանդիպման ընթացքին հարցերը բաժանված եին չորս խմբի. I- Իրական վկայություն յուրաքանչյուր մշակույթից ներս, II- Ավետարանն ու նրա ինքնությունը հասարակության մեջ, III- Տեղական համայնքները մեծամասնություն կազմող հասարակություններում, IV- Մեկ Ավետարան, բաժանված արտահայտություններ:

Վերջին խմբում հանդիպում ենք արձանագրված հետևյալ տողերին. «Քրիստոսի Ավետարանը մուտք գործելով տվյալ մշակույթից ներս՝ մարմնավորվում և լուսավորվում է այդ մշակույթի կողմից, բայց միևնույն ժամանակ վերափոխում և անդրանցում է այդ մշակույթը: Ավետարանի ընդհանրականության և «կոնտեքստականության» ավելի ամբողջական հասկացությունը պետք է նկատի առնի մշակութային խմբերի բաժանված լինելու բարդությունը, նրանց պատմական և աստվածաբանական ավանդությունները, նրանց ներքին գործունեությունը և մասնավոր հեռանկարները»[5]:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշնչային մեկնաբանության և հատկապես էկումենիկ էկզեգետիկայի զարգացման այս տեսակ պատմական ակնարկից հետո, երբ ինքներս մեզ հարցնում ենք, թե ի՞նչ սովորեցինք այս ամենից և ի՞նչ հեռանկարներ կարող ենք ակընկալել ապագայից, մեր պատասխանը դառնում է հստակ. «Մենք անձամբ կարիք ունենք ավելի խորը մասնագիտական ուսումնասիրության»:

Այս ընթացքում մեզ համար պարզ դարձավ, որ նախքան XX դարը հերմենևտիկայի ասպարեզում իրավիճակը բոլորովին տարբեր էր, և մեր կարծիքով բաժանումը տարբեր մեկնաբանական մեթոդների միջև ավելի ցայտուն էր արտահայտված: Դարաշրջանային անցումից հետո էկումենիկ շարժման օժանդակությամբ բազում պարզաբանումներ տեղի ունեցան: Մենք տեսանք, որ մի քանի լուրջ ուսումնասիրություններ են կատարվել, որոնք ոչ թե կործանաբեր, այլ կառուցողա-

[5] Cristopher Duraisingh, "Called to One Hope", WCC Publications, Geneva, 1998, p. 65.

կան ու միարարական նպատակներ են ունեցել: Այս ուսումնասիրությունների հետևանքով այժմ մենք շատ ավելի տեղեկություններ ունենք տարբեր եկեղեցիների սկզբունքային կետերի վերաբերյալ և այն մասին, թե որքան հեռու են նրանք միմյանցից կանգնած: Այժմ արդեն գրեթե ամբողջությամբ պարզ է, թե ինչն է բաժանում քրիստոնեական եկեղեցիներին, սակայն մենք դեռևս փորձում ենք գուշակել, թե ո՞րն է հաջորդ քայլը, ինչպե՞ս պետք է էկումենիկ շարժումը կազմակերպի միության հետագա ճանապարհը: Մեր պատկերացմամբ, այո՛, շատ օգտակար է իմանալ, թե ինչն է բաժանում մեր եկեղեցիները, և իմանալ, թե որոնք են մեր տարբերությունները, սակայն արդյոք դա բավարա՞ր է: Արդյոք մենք պետք է կա՞նգ առնենք այդ տարբերությունների գիտակցության իրողությամբ, թե՞ պետք է մի նոր ելք փնտրենք:

Մեր կարծիքով և համաձայն տրամաբանության օրենքների, գոյություն ունի միայն մեկ ճշմարտություն. էկումենիկ էկզեգետիկան կարիք ունի ճշտելու, թե որն է այդ ճշմարտությունը և ապա առաջնորդելու բոլորին այդ ուղղությամբ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

**Adam A.K.M.**, "What Is Post-modern Biblical Criticism?", Augsburg Fortress, Minneapolis, 1995.

Australian Council for the WCC "The Authority of the Word of God", National Conference of Australian Churches, 1960.

**Barr James**, "Holy Scripture: Canon, Authority, Criticism", Clarendon Press, Oxford, 1983.

**Berkhof L.B.D.**, "Principles of Biblical Interpretations", Baker Book House, Michigan, 1960.

**Childs B.S.**, "Biblical Theology in Crisis", The Westminster Press, Philadelphia, Pennsylvania, 1970.

**Croatto Severino J.**, "Biblical Hermeneutics: Toward a Theory of Reading as the Production of Meaning", Orbis Books, Maryknoll, NY, 1987.

**Duraisingh Christopher** (Edit.), "Called to One Hope: The Gospel in Diverse Cultures", WCC Publications, Geneva, 1998.

**Falconer Alan** (Edit.), "Faith and Order in Moshi. The 1996 Commission Meeting" Faith & Order Paper No. 177, WCC Publications, Geneva, 1998.

**Flesseman-van Leer Ellen** (Edit.), "The Bible: Its Authority and Interpretation in the Ecumenical Movement", Faith & Order Paper, No. 99, WCC, Geneva, 1983.

**Krentz Edgar**, "The Historical-Critical Method", Fortress Press, NY, 1975.

**Patte Daniel**, "Ethics of Biblical Interpretation: A re-evaluation", Westminster John Knox Press Louisville, Kentucky, 1995.

**Neuhau Richard John** (Edit.), "Biblical Interpretation in Crisis: The Ratzinger Conference on Bible and Church", William B. Eermans Publishing Co., Grand Rapids, Michigan, 1989.

Study Departement of the WCC, "From the Bible to the Modern World", Geneva, 1947.

**Stuhlmacher Peter**, "Historical Criticism and Theological Interpretation of Scripture: Toward a Hermeneutics of Consent", Fortress Press, NY, 1977.

**Ruokkanen Miikka**, "Hermeneutics as an Ecumenical Method in the Theology of Gerhard Ebeling", Luther-Agricola Society B 13, Helsinki, 1982.

*ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆ*

# Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐԸ

*«Նըմանեալ Մովսէսի Տէր Վարդապետ,*
*Բերելով գգիր օրինաց ի Հայաստան աշխարհ,*
*Որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ»:*
(Վարդան Արևելցի, շարական)

Այսպես է երգել Սուրբ Մ. Մաշտոցին ու նրա հրաշալի գյուտը 14-րդ դարի նշանավոր շարականագիր Վարդան Արևելցին՝ Թարգմանչաց կանոնի մանկունքի շարականում:

Մովսես, Աստվածաշնչի մեծագույն մարգարեն, Սինա լեռան բարձունքներում Եհովայից ստացավ Տասնաբանյա պատվիրանների քարեղեն տախտակը, որը եղավ հրեա ժողովրդի մշտական ուղեկիցը՝ նրա բազմաղետ գերության տարիներին ու երկարատև թափառումների ճանապարհին: Մեսրոպ Մաշտոցը Հայաստան աշխարհ բերեց մեր Աստվածապարգև գիրը՝ հայոց անմահ նշանագրերը, որով ոչ միայն լուսավորվեցին Թորգոմա ազգի որդիները, այլ այն դարձավ նաև հայ ժողովրդի բազմադարյան գոյապայքարի հուսալի վահանն ու նրա անխորտակելի պատվարը:

Մաշտոցի այս հրաշագործությունը բավական էր, որ նա սրբացվեր ու նրա ճակատը զարդարվեր լուսապսակով: Մաշտոցին սրբացրեց մեր ժողովուրդը և ապա մեր Եկեղեցին: Բացի գրերի գյուտից, եկեղեցական ավանդությունն ու մատենագրական մի շարք աղբյուրներ Մաշտոցին են վերագրում մի քանի երկասիրություններ, ինչպես նաև հոգևոր երգերի մի շարք, որոնք հայտնի են «Ապաշխարության երգեր» անունով: Այս երգերը մեր գրավոր դպրության առաջին բանաստեղծություններն են և մեր հոգևոր երգասացության անդրանիկ գոհարները:

Այս մասին 1912 թվականին մեր գրականության անխոնջ մշակներից Մանուկ Աբեղյանը «Արարատ» ամսագրում հրատարակել է իր ընդարձակ ու խիստ արժեքավոր հոդվածաշարը, որը հետագայում տեղ է գտել նաև նրա «Հայ գրականության պատմություն» աշխատության մեջ «Հոգևոր Երգ» վերնագրով, որտեղ բազմավաստակ գիտնականը համակողմանիորեն քննում է մեր հոգևոր երգի սկզբնավորման ու նրա հետագա զարգացման հանգամանքները:

Ենեղեցական բանաստեղծությունը ամենից առաջ օրհներգություն է, գրում է Աբեղյանը, որ ընդհանուր Եկեղեցու մեջ ծնված և զարգացած է քրիստոնեական աստվածապաշտությանը հանդիսավորություն տալու համար:

Այս նոր երգերն իրենց նյութն առնում են Աստվածաշնչից, Սաղմոսներից ու Մարգարեական օրհնություններից: Քնարական տարրը որոշում է նրանց ոգին: Դրանք հորինվում են նույնիսկ Ս. Գրքի բառերով: Այդպես են եղել հոգևոր երգի ծագումն ու վիճակը ընդհանուր Եկեղեցու մեջ այն ժամանակ, երբ լինում է հայոց գրերի գյուտը, և հիմք է դրվում մեր գրականության, գրում է Աբեղյանը:

Ասենք նաև, որ սկսած 13-րդ դարից, մեզ են հասել մի քանի ցուցակներ, որոնք վերաբերում են շարականների հեղինակներին: Այդ ցուցակների հեղինակները խնդրո առարկա «Ապաշխարության երգերի» հորինման հարցում գրեթե համակարծիք են և այդ երգերը վերագրում են Մ. Մաշտոցին:

Ահա այդ ցուցակների նշումները

Սարգիս երեցի ցուցակ

«Ապաշխարութեան հարցերն եւ զՏէր յերկնիցներն Մաշտոց վարդապետն ասաց»:

Գրիգոր Տաթևացու ցուցակ՝ ըստ «Հարցմանց գրքի»

«Նախ մեծն Մեսրովբ՝ զկարգն Ապաշխարութեան»:

Ստեփանոս Ջիք Ջուղայեցու ցուցակ (չափածո է)

«Նախ Մեսրոպ Տարօնեցին՝ զկարգ Աղցիցն»:

Ըստ անանուն ցուցակի (18-19-րդ դար)

«Եւ Սուրբն Մեսրոպ զկարգն Ապաշխարութեան»:

Առաքել Սիւնեցու ցուցակ (չափածո է)

«Բաբունն այն քաջ եւ բաղձալին

Մեծն Մեսրոպ զարմանալին»:

Յակոբ Սսեցու ցուցակ (չափածո է)

«Կայ Աղցաց կարգն է Մեսրոպայ»:

Ինչպես տեսանք, ցուցակներից երեքն արձակ է, իսկ երեքը՝ չափածո, ըստ որում Առաքել Սյունեցին հիշատակում է միայն հեղինակների անունները:

Ապաշխարության երգերի աղբյուրը Ս. Գիրքն է:

Մեզ հասած գրաբար բնագրերի մեջ վերոհիշյալ երգերի լեզուն պարզ է ու մատչելի: Բանաստեղծը համարձակ ու վարպետորեն իր ասելիքները համեմատում է մարդկային կյանքի ու բնության պատկերների հետ:

Այս երգերն իրենց լեզվի մաքրությամբ, զգացումների անկեղծությամբ, պատկերների առատությամբ ու բազմազանությամբ հանդիսանում են մեր Ծարականցի ընտիր գոհարները:

Սրտաշարժ զգացումներով զեղուն են մաշտոցյան երգերը: Դրանք գեղեցկորեն արտացոլում են բարեպաշտ աստվածասեր սրտի կենդանի ու շնչող պատկերը:

Բանաստեղծը մերթ հուզվում է ու ալեկոծվում կենցաղի ծովի հորձանուտներում, մերթ սասանվում ու գոչում պաղատագին հառաչմամբ:

«Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ:
Տուր ինձ ձեռն, որպէս երբեմն Պետրոսի ի վերայ ալեացն...
Ձերծո՛ զիս յորոգայթէ որսողին,
Եւ յամենայն վտանգից ապրեցո եւ ողորմեա»:

Որքան մեծ է բանաստեղծի տագնապը, նույնքան մեծ են նրա հույսն ու հավատը փրկության հանդեպ:

«Մերձ եմ ընկղմիլ, օգնեա ինձ, Նաւապետ բարի,
Քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինք մեղաց:
Աստուած յօգնել ինձ փութա,
Քանզի խորք չարեաց ընկղմեն զիս յանդունդս,
Այլ դու Նաւապետ լեր եւ ինձ ձեռնտու:
Փրկեա ի վտանգէ զնաւաբեկս ի յալեաց ծովէ,
Քանզի կորնչիմ ի մեղաց անօրէնութեան իմոյ»:

Բանաստեղծի մեղքի գիտակցումը հաճախ միահյուսվում է թողություն և ներում ստանալու հույսին.

«Վտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց,
Աստուած խաղաղութեան, օգնեա ինձ:
Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ,
Թագաւոր խաղաղութեան, օգնեա ինձ:
Ի խորս մեղաց ծովու տարաբերեալ ծփիմ,
Նաւապետ բարի, փրկեա զիս»:

Բանաստեղծը հաճախ խոսում է Աստծո հետ, սակայն նա միշտ բնության մեջ է, բնության հետ, քանի որ նրա խոսքը միշտ համեմվում է բնության պատկերներով, և այս ամենը նա անում է մեծ վարպետությամբ:

«Ոստաքանդ եղէ ես որպէս զարմաւենի,
Պտղակորոյս որպէս ձիթենի...
Զցանկ հոգւոյ իմոյ քակտեցի եւ եղէ անբարունակ որթ,
Այլ առ քեզ միայն պաղատիմ, բարերար փրկիչ,
Խնայեա ի մեղուցեալ ծառայս»:

Մաշտոցյան երգերում նկատելի են նաև հայրենասիրական զգացումներ: Այս երևույթն իսպառ բացակայում է հինգերորդ դարի հոգևոր համաքրիստոնեական քնարերգության մեջ, իսկ հայ քնարերգության մեջ այն երևում է 7-8-րդ դարերից:

Մաշտոցյան երգերում հայրենասիրական զգացումները և Եկեղեցին ու ժողովուրդը նեղիչներից ազատելու գաղափարն իր արտացոլումն են գտել հատկապես «Երից մանկանց» երգաշարում: Սրանք հարցի շարականներ են, որոնց նյութը վերցվել է Հին Կտակարանից՝ Դանիելի մարգարեությունից: Այստեղ հիմնականում խոսվում է Գաղդեացի երեք մանուկների՝ Սեդրակի, Միսաքի և Աբեդնագովի մասին, որոնք Նաբուգոդոնոսոր թագավորի արքունիքում պատասխանատու պաշտոններ էին զբաղեցնում:

«Երից մանկանց» երգաշարքը բաղկացած է 45 հարցերից, որոնցից երկուսն ստեղի են և երգվում են տարին մեկ անգամ, իսկ 13-ը Աղցմի են կոչվում: Աղցմի նշանակում է Աղուհացին մի ասեք, այսինքն՝ Մեծ պահոց շրջանում այս հարցերը չպետք է երգվեն: Համաձայն Սիմոնյան տոնացույցի, դրանք պետք է երգվեն միայն շաբաթապահքերին և Ապայից կոչվող տոների միջոցին:

Մնացած երեսուն հարցերը երգվում են քառասնորդական պահոց կամ աղցից շրջանում, ինչպես նաև տարվա բոլոր չորեքշաբթի օրերին՝ բացի Ս. Զատկին հաջորդող հիսուն օրերին հանդիպող չորեքշաբթի օրերից: Հիշյալ հիսուն օրերի շրջանը կոչվում է Հինանց կամ Հինունք:

Այժմ մեջբերենք Ապաշխարության հարցերից մի քանի նմուշ:

«Երգէին մանկունքն ի հնոցին եւ ասէին՝ Տէր Աստուած հարցըն մերոց:

Մի՛ մատներ ըզմեզ իսպառ ըստ անօրէնութեանն մերում, Վասն Աբրահամու սիրելւոյ քո, օրհնեալ ես յաւիտեան:

Ընդ երանելի մանկանցն երգեսցուք, ի նեղչաց մերոց փըրկեան ըզմեզ, եւ մի իսպառ մատնէր, զի գինք արեան քո եմք»:

«Խոստումն Աբրահամու, զոր խոստացար, Աստուած, առաքեա եւ փրկեա զապաւինեալքս ի քեզ»:

Այս տողերով բանաստեղծը հիշեցնում է Աստծուն՝ Աբրահամին տված խոստումը և խնդրում, որ այդ խոստումը նա առաքի և իրագործի նաև մեզ՝ իրեն ապավինածներիս:

Ծննդոց գրքի ԺԲ գլխի 3-4 համարներում կարդում ենք. «Արարից զքեզ յազգդ մեծ... Անեցուցից զքեզ յոյժ, եւ օրհնեցից զքեզ եւ մեծացուցից զանուն քո...»: Այս տողերը խիստ համահնչյուն են մեր ժողովրդի այդ օրերի ճակատագրին:

Մաշտոցյան երգերի կարևոր արժանիքներից մեկն էլ այդ երգերի մեղեդային կառուցվածքն է: Դրանք հորինվել են մեր հոգևոր երգասացության հիմքը հանդիսացող ութ ձայնեղանակներով ու նրանց ամենաբնորոշ տարբերակներով: Այս տե-

սակետից Մաշտոցյան երգերում առաջին անգամ օգտագործված են վերոհիշյալ ութ ձայնեղանակները:

Ավելորդ չենք համարում այստեղ նշելու, որ հիշյալ ութ ձայնեղանակների համակարգի ստեղծումը ևս պատկանում է Ս. Սահակին ու Ս. Մեսրոպին: «Նախ Սուրբն Սահակ եւ Սուրբ Մեսրոպ ասացին զութ եղանակատր ձայնս եւ երկու ձայն ստեղիս» (Շարակնոց, 1888, Վաղարշապատ):

Մաշտոցյան երգերը, բացի Շարակնոցից, տեղ են գտել նաև մեր Ժիսարանի և Ժամագրքի մեջ: Այս երգերը երգվում են տարին բոլոր, քանի որ Հայաստանյայց Եկեղեցին տարվա ընթացքում ունի 180 պահոց և նույնքան ուտիքի օրեր: Մաշտոցյան երգերը թեև հիմնականում արձակ բանաստեղծություններ են, սակայն նրանց մեջ կան նաև չափածո եռատուն պատկերներ, որոնք հորինվել են չորս կամ հինգ վանկանի տաղաչափությամբ: Մեջբերենք մի նմուշ.

«Ալիք յանցանաց զիս ալեկոծեն,
Եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեն:
Արդ զինչ արարից մեղուցեալ անձամբս,
Որ չեմ ապրելոց յահագին հրոյն:
Մեղայ քեզ, Քրիստոս որդի Աստուծոյ,
Շնորհեա զթողութիւն բազում յանցանաց իմոց»:

Ահա և մաշտոցյան Ապաշխարության երգերի ընդհանուր միավորների թիվը.

| | |
|---|---|
| Հարցի շարականներ՝ | 43 միավոր |
| Ողորմեա շարականներ՝ | 48 պատկեր |
| Տէր երկնից շարականներ՝ | 46 պատկեր |
| Մակուռքներ՝ | 10 պատկեր |
| Համբարձիներ՝ | 11 պատկեր |
| Այս ամենը միասին կազմում է | 158 միավոր: |

Բացի նշված միավորներից, եկեղեցական ավանդությունը և Գրիգոր Տաթևացին Մաշտոցին են ընծայում Ապաշխարության կամ Պահոց «Թագաւոր յաւիտենան» կոչված երգերը: Սրանք հորինվել են շաբաթվա հինգ օրերի համար միայն, երկուշաբթիից մինչև ուրբաթ, քանի որ շաբաթ և կիրակի օրերին տոներ են լինում:

Պահոց «Թագաւոր յաւիտենանները» բաղկացած են իննական տներից: Այսպես՝ երեք տուն թագաւոր Թ, երեք տուն Սաղմոս Աղ, և երեք տուն փոխ. Փ:

Մեր Եկեղեցին ունի նաև «Մարտիրոսաց կամ Սրբոց թագաւոր յաւիտենաններ»: Սակայն սրանց մեջ ավելի հները համարվում են Պահոց «Թագաւոր յաւիտենանները», քանի որ հնում Եկեղեցին նախ ապաշխարության և հանգստյան կարգերն էր կատարում: Այս երգերի հնության մասին վկայում են նաև նրանց լեզվի և ոճի վսե-

մությունը: Ավելացնենք նաև, որ այս շարքը հորինվածքով, բառապաշարով շատ նման է մաշտոցյան Ապաշխարության ողորմյաններին:

Պահոց «Թագաւոր յաւիտենականներն» աչքի են ընկնում անկեղծ զղջումի և անձնական մեղքի խորը գիտակցումով: Սրանք օժտված են ինքնատիպ մեղեդային հոգեպարար ու սրտահույզ եղանակներով:

Առանձնապես գեղեցիկ են երեքշաբթի և հինգշաբթի օրերի երգերի խոսքերն ու մեղեդիները: Ահա հինգշաբթի օրվա Թ. յաւիտենաnից մի քանի նմուշ.

թ. «Ապաշխարութեան արտասուս աւազան լինի
Եւ լուանայ զբազմութիւն մեղաց, սովաւ շնորհեա
Ծառայս քան զքաւութիւն եւ զմեծ քո զողորմութիւն:
Ող. Ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած հզօր և կենդանի,
Երբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ.
Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ եւ ի գիշերի
Եւ այնք զի ասէին ցիս զօրհանապազ, թէ ո՞ւր է
Աստուած քո, սովաւ շնորհեա...»:
թ. «Զիս որ ի նաւի աշխարհի ալեկոծեն մեղք իմ,
Նաւահանգիստ ապաշխարութեան շնորհեա ինձ բազումողորմ եւ կեցո:

Բ երեքշաբթի Մեղայ քեզ Տէր, մեղայ քէզ Տէր, մեղայ եւ քան զաւազ ծովու բազում են յանցանք իմ:

Պատրանք աշխարհիս խաբեցին զիս, եւ եղէ, անպտուղ ի կենաց յուսոյդ, այլ դու անոխակալ և անյիշաչար փրկիչ, խնայեա ի մեղուցեալ ծառայս եւ կեցո»:

«Պահոց թագաւոր յաւիտեան» երգերը լեցուն են այս եւ նման հոգեկան աքանչելի պատկերներով, որոնք նախ և առաջ վկայում են հեղինակի անսահման սերն ու հավատը և հոգեկան մաքրությամբ Աստվածային Կատարելության հասնելու ձըգտումը:

Եզրափակելով մեր զրույցը Ս. Մեսրոպ Մաշտոցին վերագրվող ապաշխարության կարգի երգերի մասին, ասենք, որ այս երգերը նախ և առաջ մեր առաջին գրավոր բանաստեղծությունները և մեր առաջին հոգևոր ինքնուրույն երգերն ու շարականներն են՝ հորինված Ս. Սահակի ու Ս. Մեսրոպի կողմից և հաստատված մեր ութ ձայնեղանակային համակարգի վրա:

Այս համակարգի վրա վեր բարձրացավ հայ հոգևոր Երգի շարակնոց գոհարատուփը, և շուրջ 1000 տարիների ընթացքում, շնորհիվ մեր երանաշնորհ շարականագիրների, ստեղծվեցին մոտ 2000 շարականներ և բազմաթիվ հոգևոր երգեր, որոնք տեղ են գտել մեր Ժամագրքում և այլ ծիսական ժողովածուներում:

Այսօր մենք կարող ենք հպարտանալ մեր հոգևոր երաժշտությամբ նրա բոլոր դրսևորումներով, երաժշտություն, որ հիացնում է ինչպես հայ ունկնդրին, այնպես էլ օտարներին:

# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ



ՎՐԵԺ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ 450-451 ԹԹ. ԺՈՂՈՎՐԴԱ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՆԵՐՈՒՄ

Վարդան Մամիկոնյանի գլխավորած ազատագրական պատերազմում Հայ Եկեղեցու առաջնորդները դարբնեցին ժողովրդի հոգևոր հաղթանակը և, ըստ ամենայնի, գաղափարական լիցք հաղորդեցին շարժմանը: Դեռևս Սասանյան Վռամ Ե արքան (421-439 թթ.) Պարսկաստանի քրիստոնեական Եկեղեցուն հարկադրեց խզել Բյուզանդական Եկեղեցու հետ ունեցած ծիսադավանական առնչությունները[1]: Սակայն նա ի զորու չեղավ նույնը թելադրել Հայոց Եկեղեցուն, որի դեմ հետզհետե նյութվեցին կրոնական հալածանքների անլուր ձեռնարկումներ: Դրանք ահագնացան հատկապես Հազկերտ Բ-ի (439-457) օրոք, որը քաղաքական ազդու գործոն դարձրեց զրադաշտական կրոնը՝ ծայրահեղորեն ուժեղացնելով հալածանքները քրիստոնյաների նկատմամբ[2]: 447 թ. Շահապիվանում կայացած Հայոց երկրորդ եկեղեցաժողովը միտում էր հոգևոր և իրավական պատնեշ ստեղծել զրադաշտականության և նրանով սնուցվող սասանյան օրենքների սպառնալից փոր-

[1] The Cambridge History of Iran, vol. 3(1). The Seleucid, parthian and Sasanian periods Cambridge, 1983, p. 485-486.

[2] J. Labourt, Le Christianisme dans l'Empire Perse sous la dinastie Sassanide, Paris, 1904, p. 128.

ձանքի դեմ և ամրակայացնել Հայ Առաքելական Եկեղեցու պետա-իրավական գործառույթները: Ժողովի ընդունած ազգային-եկեղեցական օրինադրությունը, պետականության բացակայության պայմաններում, Հայաստանի ներքին ինքնավարության կայուն գրավականն էր:

440-ական թվականներին Սասանյան արքունիքը Հայոց Եկեղեցու նկատմամբ դիմեց անլուր բռնությունների՝ նպատակ ունենալով նյութապես, իրավականորեն և հոգեպես զինաթափել նրան, կրոնափոխել հայ ժողովրդին: Եղիշեի և Ղազար Փարպեցու հավաստմամբ, հայերի դեմ Հազկերտ Բ-ի հարուցած բռնությունները սկսվել են նրա թագավորելու 12-րդ տարում (իմա՝ 449 թ.): Բռնությունների առաջին ալիքն սկսվեց այն պահից, երբ Հայոց, Վրաց և Աղվանից պյուռնիները տարվեցին Պարսկաստան և արգելվեցին Պահ դուռ անունով կիրճում[3]: 449 թ. Հազկերտի կողմից Հայաստան առաքված Դենշապուհը սահմանափակեց Հայ Եկեղեցու իրավունքները՝ նրան զրկելով ապահարկության արտոնությունից, դատաստանական իրավազորությունից: Հազկերտի այս արքանյակը հույս ուներ, որ «Զուխտն Եկեղեցւոյն ցրուեսցէ եւ զմիայնակեացսն փախուսցէ»[4]: Սակայն նա չկարողացավ կտրել Հայաստանի հոգևոր երակը: Այնուհետև սասանյան բռնակալ Միհրներսեհի միջոցով փորձեց հայերին պարտադրել զրադաշտական մոգերի նվիրագործած բանաձևը. «ինչ հավատ որ ունի ձեր տիրակալը, նույնն ընդունեք նաև դուք, մանավանդ որ Աստծու առաջ ձեզ համար նա հաշիվ ենք տալու»[5]: Արյաց արքայի հրովարտակի ուժ ունեցող այս պահանջին հայ հոգևորականները, Հովսեփ Կաթողիկոսի գլխավորությամբ, ժողով գումարեցին Արտաշատում՝ մասնակցությամբ 18 եպիսկոպոսների, նաև մի քանի երիցագույն կարգ ունեցողների, ինչպես և 18 նախարարների: Եղիշեն և Ղազար Փարպեցին, սակավ բացառությամբ, ժողովի մասնակիցներ են հիշում միևնույն եպիսկոպոսներին: Այսպես, Փարպեցին հիշում է Մանանաղի գավառի եպիսկոպոս Ջավենին, որը չի նշված Եղիշեի մոտ, իսկ վերջինս հիշատակում է Մարդաղի գավառի եպիսկոպոս Եվղաղին, որը չկա Փարպեցու բերած ցանկում: Քանի որ Մարդաղին Հայաստանի 387 թ. բաժանումից հետո անցել էր Հռոմեական կայսրությանը, ուստի պետք է կարծել, որ Արտաշատի ժողովին հրավիրված էին նաև բյուզանդական բաժնի որոշ հայ հոգևորականներ (անշուշտ, դրան չէին խոչընդոտի բյուզանդական իշխանությունները): Հազկերտ Բ-ին ժողովի հղած պատասխանում վճռապես մերժվեց հավատափոխության առաջարկը: Այդուհանդերձ, հայ հոգևորականների ու նախարարների նմանօրինակ դիրքորոշումը բնավ չսթափեցրեց սասանյան բռնակալին, որը դիմեց ավելի արմատա-

---

[3] Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, աշխ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957, էջ 19:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 21-22:

[5] Նույն տեղում, էջ 26:

կան միջոցների՝ առաջին հերթին Տիզբոն հրավիրելով հայ, վրացի և աղվանացի նախարարներին, որոնց արված հավատափոխության առաջարկը բացահայտ մարտահրավեր էր երեք բախտակից և նույնադավան ժողովուրդներին: Պարսից տիրակալը հույս ուներ, որ հավատուրաց նախարարներին կհետևի ժողովուրդը, ի հետևանս որի, Եկեղեցին կհայտնվի կղզիացած վիճակում և կկորցնի իր ոտքի տակի հողը: Բայց նախարարները համոզված էին, որ անհնար է ժողովրդին կրոնափոխ անել, ուստի, առերես ուրանալով քրիստոնեական հավատը, սպասեցին դեպքերի հանգուցալուծմանը:

Հայոց Եկեղեցու գլխին մահացու սպառնալիք կախվեց: Հազկերտ Բ-ն հոխորտում էր՝ «Եկեղեցիս եւ զոր անուանէք վկայարանս՝ քակեցից, քանդեցից եւ յապականութիւն դարձուցից»[6]: Կեղծուրաց հայ նախարարները 700 մոգերի և զորքի հետ ուղարկեցին Հայաստան՝ ժողովրդին կրոնափոխելու առաջադրանքով: Խավարակուռ բռնակալի կամքով մեկամյա ժամկետում, «մինչեւ ի նաւասարդէ ի նաւասարդ», իրագործելու էր հայերի հավատափոխությունը, ամենուրեք փակվելու էին եկեղեցիները, վանքերը, հարքունիս էին գրավվելու նրանց ունեցվածքը, հողատիրույթները: Եկեղեցիներում հաստատվելու էին կրակապաշտական ատրուշաններ[7]:

Հայաստան ժամանած մոգերին և նախարարներին ուղեկցում էր նաև հայկական մի զորագունդ, որը ծառայության մեջ էր Պարսկաստանում: Այդ զորաբաժնում հովվող քահանաները, անտեղյակ լինելով նախարարների ուրացության կեղծ լինելուն, նրանց հավատափոխության լուրը գուժեցին Հայաստան՝ հոգևորականներին, որոնք իսկույն ոտքի հանեցին ժողովրդին՝ մարտասնույց կոչերով նրան մղելով զինված դիմակայության: Բոլորի համար ուղենշող նշանաբան դարցավ ուրացողների հանդեպ անխնա վերաբերմունքը: Ժողովուրդը, Ղևոնդ երեցի ու նրա ուխտակիցների մարտաշունչ խարոզների ազդեցությամբ, ուսանելի դաս տվեց մոգերին Այրարատի Ծաղկոտն գավառի Անգղ գյուղաքաղաքում: Ապստամբության ալիքները հետզհետե տարածվեցին Հայաստանի գրեթե բոլոր գավառներում: Ատելավառ ժողովուրդը գրավեց Արտաշատը, Գառնին, Վանը և ուրիշ քաղաքներ ու ամրոցներ՝ դուրս վանելով այնտեղ հաստատված պարսիկներին և հիմնահատակ ավերելով վերջիններիս պաշտամունքի տեղերը, որոնք հենակետեր էին ծառայում մոգերի քարոզչության համար:

Եկեղեցական դասը հակված էր այն կարծիքին, որ ժողովրդական շարժումը հաջող ընթացք կարող է ունենալ, եթե նրա գլուխ կանգնի Սահակ Պարթևի շնորհասուն թոռը՝ Վարդան Մամիկոնյանը, քրիստոնեական հավատի աննկուն պաշտպանը: Վասակ մարզպանը Վարդանի մոտ՝ Բարգևանդի Արամանա գյուղ ուղար-

[6] Եղիշէ, էջ 48:

[7] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904. II, ԻԹ, էջ 56. Եղիշէ, էջ 52-53:

կեց Ղևոնդ երեցին և ուրիշ հոգևորականների. որոնց անսալով, Վարդանը ժամանեց Վաղարշապատ՝ տենչալով իր արյունը հեղել «ի վերայ շինութեան ուխտի եկեղեցւոյ»[8]:

Ազատագրական պատերազմի բոցերի մեջ նետված հոգևորականները հրաժարվեցին խաղաղավետ կյանքից՝ հովվապետական կարգը զուգորդելով մարտական անհեղ առօրյայի հետ: Վարդանը ժողովեց նշանավոր եկեղեցականներին ու նախարարներին և հայտարարեց, որ միանում է ապստամբ ժողովրդին: Վասակ մարզպանը տեղի տալով հոգևորականների ու ժողովրդի պահանջին, «ոչ կամաւ» հանձն առավ միանալ շարժմանը, երդվեց հավատարիմ մնալ «հաւատոյ ուխտին»: Նրա երդումը գրի առնվեց Ավետարանում հոգևորականների կողմից, և ի պահ տրվեց Եկեղեցուն[9]:

Վասակը, Վարդանը, Հովսեփ կաթողիկոսն օգնության խնդրանքով դիմեցին հավատակից Բյուզանդիայի կայսր Թեոդոս Բ-ին, որը խոստացավ զորակցել հայերին, բայց վերահաս մահը ի դերև հանեց կայսեր ցանկությունը: Նրան հաջորդած Մարկիանոսը հրաժարվեց հայերին աջակցելուց, քանի որ հյուսիսից կայսրությանն սպառնում էին հոները՝ ահեղազոր Աթիլլայի գլխավորությամբ: Կայսրը Արևելքում երկրորդ ճակատ չբացելու կանխահոգությամբ Հազկերտ Բ-ին խոստացավ օժանդակություն ցույց չտալ հայ ապստամբներին[10]: Սակայն հայ եկեղեցականները չհուսալքվեցին և անշեջ եռանդով ժողովրդի մեջ հուզեցին հայրենի հավատն ու անկախությունը պահպանելու վճռականություն: Հոները ևս չկարողացան օգնել հայերին, քանի որ Հազկերտը փակել տվեց Ճորա լեռնանցքը, որտեղից նրանք պետք է անցնեին Աղվանք և Հայաստան: Ուստի հայերն ապավինեցին սեփական ուժերին: Նրանց համար հանուն հավատի նահատակվելը հավասարազոր էր սրբանալուն: Հետևաբար ժողովրդական ընդվզումը տոգորվեց մարտիրոսագրության շնչով:

Ուխտազանց Վասակ մարզպանին հաջողվեց պառակտել շարժումը: Հոգևոր դասը եռանդուն պայքար ծավալեց Վասակի ու նրա կուսակիցների դեմ: Հոգևորականները խաչով ու Ավետարանով շրջում էին ժողովրդի մեջ՝ բարձրացնելով նրա մարտական կորովը: Եկեղեցու միջոցով Աղվանքի համադավան ժողովուրդն ուխտակից եղավ հայերին և նրանց օգնությամբ ապստամբության դրոշ պարզեց (վրացիները չեզոք մնացին): Վարդան Մամիկոնյանը, ինչպես հավաստում են Եղիշեն և Փարպեցին, Հայոց Եկեղեցուց բացի ուրիշ հեղինակություն չէր ճանաչում[11]: Հարկ

[8] Ղազար Փարպեցի, II, ԼԱ, էջ 59-60:

[9] Նույն տեղում, II, ԼԲ, էջ 61-62:

[10] C. Sanspeur, La neutralite de Byzance face a l'insurrection Arménienne contre la Perse (450). "Revue des Etudes Arméniennes", t. 16 (1982), p. 152-153.

[11] Հ. Գ. Արմենի կարծիքով, Վարդանը Եկեղեցու հլու և անխոս կամակատարն էր (Հ. Գ. Արմեն,

է նշել, որ Վարդանը և նրա զորականները առաջին հերթին հոգևոր մարտիկներ էին, որոնց համար հավատը և քաղաքական ազատությունը համանշանակ իրողություններ էին: Այս հանգամանքը մեծապես մերձեցնում էր Վարդանին ու հոգևոր դասին՝ առաջին հերթին, իհարկե, գաղափարական զինակցությամբ:

Վասակ մարզպանին հաջողվեց իր կողմը գրավել որոշ հոգևորականների, որոնց միջոցով նա փորձեց ժողովրդին ետ պահել ապստամբությունից: Սակայն նրա ջանքերը չտվեցին սպասված արդյունքները. ժողովուրդը, հանուն քրիստոնեական հավատի, առանց երկմտելու, նետվեց պայքարի դաշտ՝ վաստակելով անմահության դափնին:

Հայ ժողովրդի վճռականությունը սթափեցրեց պարսիկներին: Անգամ հայերին կրոնափոխելու առաքելությամբ Հայաստան ժամանած պարսիկ մոգպետը, ականատես լինելով հայերի անզիջում դիրքավորմանը, հասկացավ, որ հնարավոր չէ բռնանալ նրանց կամքին: Եղիշեի վկայությամբ, նա նույնը հաղորդեց նաև Հազկերտ թագավորին՝ ի մասնավորի շեշտելով, որ «չէ հնար օրինացս մոգութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն»[12]:

Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորները Ավարայրի ճակատամարտի նախօրեին եռանդուն ու նպատակասլաց ջանքերով շարունակեցին նվիրագործել ժողովրդի հերոսական պոռթկումը՝ նպատակի սրբասուրբ նշանաբան դարձնելով մարտիրոսական մահվամբ հաղթանակը քրիստոնեական կրոնի խավարածին ախոյանի դեմ: Հայրենի հավատի համար նահատակվելը դարձավ ազատագրական ոգորումների գաղափարական զորեղ խթանը՝ ժողովրդին ոգեկոչելով անձնազոհության:

Համաձայն Եղիշեի վկայության, Ավարայրի ճակատամարտից առաջ ուխտապահների զորքը պատկառելի քանակ ուներ (66 հազար)[13]: Ըստ էության Վարդանի զորքը զինավառված ժողովուրդն էր, որը, թողած խաղաղավետ զբաղմունքը, զենք էր վերցրել իր պատիվն ու հավատը պաշտպանելու համար: Վասակի կողմնակիցների թիվն անհամեմատ քիչ էր: Համաձայն Ղազար Փարպեցու վկայության, Ավարայրի ճակատամարտի ժամանակ պարսիկներին զորակցում էին «ղակիշ գնդին Սիւնի զօրուն եւ այլ զօրաւոր արանց», որոնց դեմ Վարդանն ուղղեց իր գլխավորած ձախ զորաթևի գրոհը[14]:

---

Մարզպանը և սպարապետը, Լոս Անճելըս, 1952, էջ 43): Սակայն Վարդանի և Եկեղեցու համադաշն գործելակերպը վկայությունն է սրբազան պատերազմում Եկեղեցուն զորակցելու Վարդանի ուխտադվեր նպատակադրման, որը բխում էր զորավարի քաղաքական և հոգևոր հավատամքից:

[12] Եղիշե, էջ 59:

[13] Համոզիչ չէ Հ. Ք. Արմենի կարծիքը, ըստ որի Ավարայրում ուխտապահների զորքի թիվը հազիվ հասնում էր ինը հազարի (տե՛ս Հ. Ք. Արմեն, նշվ. աշխ., էջ 242):

[14] Ղազար Փարպեցի. II, ԼԹ, էջ 72:

Հոգևորականները հարաժամյա քարոզչությամբ հայ ռամիկներին խրախուսում, մղում էին քրիստոնեական հավատի համար սրբազան պատերազմի դաշտ՝ ազատագրական ոգորումին հաղորդելով նաև բռնության, ապօրինության և կեղեքումների դեմ մղվող պայքարի բնույթ: Բնորոշ են այն խոսքերը, որ Եղիշեն դնում է Ղևոնդ երեցի շուրթերին: Վերջինս, Հովսեփ Կաթողիկոսի և ուրիշ հոգևոր հայրերի հրամանով, Ավարայրի դյուցազնամարտին նախորդած գիշերը զորականների առաջ ելույթ ունենալով ասաց, որ Քրիստոս «մահվամբ իր անձը զոհաբերեց մեր մեղքերի համար և մեզ արդարացրեց հույժ ծանր դատապարտությունից: Ուստի մենք պետք է մահվամբ մեր անձերը զոհենք հանուն նրա անմահ զորության...»:

Այնուհետև Ղևոնդը կոչ արեց՝ վեր կանգնել երկրային ախտածին գայթակղություններից: «Եթե,- ասաց նա,- նայելու լինենք դեպի ցած՝ երկիր, այն կտեսնենք լի ամեն տեսակ ապականություններով, սրբապղծություններով: Քանզի ի՞նչ աղտոտալի գործեր ասես, որ չեն կատարվում այս ախտավոր երկրաբնակների մեջ. աղքատների թշվառություններ և նրանց բազում տառապանքներ, հարկահանների գործած ծանր նեղություններ, բռնարկու ընկերների կողմից զրկանք ու խոշտանգում... տարաժամ հիվանդություններ և մահառիթ ցավեր շարունակ տանջում են մարդկանց. անդադար վրա են հասնում երկյուղ օտարներից և արհավիրք ներսից. ժամանակից վաղ մահ են տենչում, բայց չեն գտնում... Այս անցավոր կյանքը փափկանկյաց ուրախությամբ անցկացնող և հարստության հասածները մեծամտաբար հպարտանում են այս աշխարհի սնամեջ գործերով: Հենց նրանք են, որ կուրացած լինելով չեն տեսնում ճշմարիտ կյանքը»[15]:

Անարդարությունների դեմ պայքարելու վճռականությամբ, շարունակեց արիական երեցը, այսօր «եպիսկոպոսք եւ երիցունք եւ սարկաւագունք, սաղմոսերգողք եւ գրակարդացք իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ՝ իբրեւ վառեալք զինու եւ պատրաստեալք ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամիսն ճշմարտութեան»[16]: Հոգևոր դասը համակված էր անհուն ատելությամբ քրիստոնեական հավատի մոլեկրոն ախոյանների նկատմամբ: Հանուն սրբասուրբ ուխտի, նրանք պատրաստ էին նահատակության ու ամեն տեսակ զրկանքների, խոշտանգումների: Ղազար Փարպեցին գրում է, որ Ավարայրի դաշտում Հովսեփ Կաթողիկոսն ու Ղևոնդ երեցը հայոց ազատամարտիկներին, նախարարներին խրախուսում, խրատում, զորացնում էին «հոգևոր բանիւք»[17]: Մարտից առաջ Վարդան զորավարը նույնպես հոգևոր խրախույսներով ոգեպնդեց զորքին՝ խոսքերը համեմելով սուրբ-

---

[15] Եղիշե, էջ 111-112:

[16] Նույն տեղում, էջ 113:

[17] Ղազար Փարպեցի, II, ԼԸ, էջ 71:

գրական իմաստահեն դարձվածներով: Ընդսմին նա իրենց զորառաջնորդ համարեց Աստծուն[18]:

Ավարայրի ճակատամարտին մասնակցում էր հայ եկեղեցականների մի մասը: Սակայն դա հիմք չի տալիս կարծելու, թե հոգևորականների մնացած մասն անխտիր հավատ է ընծայել Վասակի այն պնդմանը, որ Հազկերտը ներման հրովարտակ է արձակել հայ ապստամբների նկատմամբ[19]: Հարկ է նկատի առնել այն ծանրակշիռ հանգամանքը, որ հայ ժողովրդի համար բախտորոշ այդ պահին թիկունքում մնացած հոգևորականները ուխտանվեր առաքելություն էին կատարում բնակչության մեջ: Ժողովուրդը, ավելի քան երբևէ, կարոտ էր հուսադրող ու սփոփիչ խոսքի, որը նրան էին մատուցում եկեղեցականները: Ի դեմս նրանց, նա տեսնում էր իր հույսի ու հավատքի ավետաբերներին: Հոգևորականների հոգեշահ խոսքը լիցքավորում էր ժողովրդին, օգնում նրան՝ վերստանալու իր կորովը, դիմակայելու սպասվող արհավիրքներին:

Հոգևորականներն իրենց գործունեությունը շարունակեցին նաև Ավարայրի ճակատամարտից հետո, երբ Հայոց աշխարհում մոլեգնում էին սասանյան զորայիններն ու նրանց գործակցող վասակյանները: Ուխտապահ զորքն ստիպված էր ցրվել երկրում և, ամրանալով անմատույց տեղերում, շարունակել դիմադրությունը: Խաղտիք աշխարհում, Ճորոխի հովտում ամրացած հայ զորայիններն ու նրանց ապավինած փախստականները, Հմայակ Մամիկոնյանի (Վարդանի եղբոր) առաջնորդությամբ, ենթարկվեցին պարսից զորքի հարձակմանը և ստիպված անցան մոտակա Տայք նահանգ, որտեղ թշնամին այրեց մի քանի եկեղեցի: Այդ վայրագությունը խիստ խոցեց հայ ռազմիկներին, որոնք խոյացան ոսոխի վրա՝ ջախջախելով նրան: Այդ մարտում նահատակվեց նաև Հմայակ Մամիկոնյանը[20]: Պարսիկներին համառ դիմադրություն ցույց տվեցին նաև Հայոց Միջնաշխարհում ամրացած մարտիկները, որոնք, համաձայն Եղիշեի վկայության, «միայն մի բան էին խնդրում Աստծուց, որ չտեսնեն սուրբ եկեղեցիների ավերվելը»: Նրանք ամրացան Բարձր Հայքի Կապույտ լեռների ամրոցներում և պարտության մատնեցին պարսիկներին: Արշեն քահանան փորձեց համոզել Վասակին ու պարսիկ զորապետին՝ վերջ տալու կռիվներին, բայց վերջիններս չանսացին նրան և, կապանքների մեջ դնելով Արշենին, տարան գերության[21]: Թշնամիներին դիմակայողների մեջ էին նաև Հովսեփ

[18] Եղիշե, էջ 103:

[19] Նման կարծիքի է Խ. Վեհյանը (տե՛ս Խ. Վեհյան, Վասակ Սյունիի պատմական գնահատության շուրջը («Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ /հաս. գիտութ.»/), 1965, №. 1, էջ 52):

[20] Ղազար Փարպեցի, II, ԽԱ, էջ 73-74, Եղիշե, էջ 127:

[21] Եղիշե, էջ 126-127:

կաթողիկոսն ու Ղևոնդ երեցը, որոնք բռնվեցին, ապա պարսիկ զորապետի հրամանով գանահարվեցին և բանտարկվեցին[22]:

Սակայն Հազկերտ Բ-ն ստիպված էր տեղի տալ: Նա Հայաստանի մարզպանի պաշտոնից ազատեց Վասակին՝ փոխարենը նշանակելով Ատրորմիզդին, որին Ղազար Փարպեցին հիշում է իբրև հայաստանցի՝ Արշական տոհմանունով, ըստ երևույթին նկատի առնելով նրա Արշակունի ծագումը[23]: Արյաց արքան նորընծա մարզպանին պատվիրեց հանդուրժող լինել հայերի հանդեպ, «սիրով նուաճել, եւ զպաշտօն քրիստոնէութեանն համարձակապէս ունել ամենեցուն»: Հայաստանից հանվեցին պարսկական զորագնդերը: Նոր մարզպանը «բազում թուղթս խաղաղութեան» ուղարկեց Հայոց աշխարհի զանազան կողմեր՝ խոստանալով «շնորհել ամենեցուն զկարգ քրիստոնէութեան»[24]: Սակայն ազատագրական պատերազմին գործուն մասնակցություն ցուցաբերած հոգևորականները չխուսափեցին անագորույն մահավճռից: Ըստ Եղիշեի, Ատրորմիզդ մարզպանը փութապես իր մոտ բերել տվեց Հովսեփ կաթողիկոսին, Ղևոնդ երեցին և ուրիշ եկեղեցական այրերի, քննության ենթարկեց նրանց, ապա ուղարկեց սասանյանների ձմեռային գահանիստ՝ Տիզբոն քաղաք[25]: Մինչդեռ Ղազար Փարպեցին գրում է, որ շնորհազրկված Վասակ Սյունեցին էր կալանել եկեղեցականներին և հանձնել պարսիկ զորապետներին՝ Խոզեստան նահանգի տաժանավայր տանելու համար[26]: Գուցե այդ կերպ նա կամենում էր սիրաշահել արյաց արքային: Եղիշեն գրում է, որ Արտաշատում պարսիկ մոգերի հիմնած կրակատունն ավերող Սամուել և Աբրահամ երեցները կալանվեցին դեռևս սնախորհուրդ հույսերով օրորվող Վասակի կողմից, և ապա Ատրորմիզդ մարզպանը նրանց ուղարկեց Տիզբոն[27]:

Կալանակյաց հայ հոգևորականներին Տիզբոնում նախ ենթարկեցին դաժան տանջաքննության, ապա Հազկերտ արքայի հրամանով թագավորական ատյանում նրա ներկայությամբ կայացած դատաքննության ժամանակ վճիռ հանվեց տարաբախտ եկեղեցականների նկատմամբ: Մեծ ատյանում քննվեցին նաև մեղապարտ համարվող նախարարները, ինչպես և Վասակ Սյունեցին, որին մեղադրեցին Արշավիր Կամսարականը և պարսկերենի մեջ քաջագիտակ Ռշտունյաց Սահակ եպիսկոպոսը[28]: Արքունի դատարանը ապստամբության կազմակերպման մեջ մեղա-

[22] Նույն տեղում, էջ 123-124: Ըստ Ղազար Փարպեցու, նրանց կալանել էր Վասակ Սյունեցին (Ղազար Փարպեցի. II, ԽԱ, էջ 76):

[23] С. Т. Еремян, Народно-освободительная борьба армян против персов в 450-451 гг. ("Вестник Древней истории", 1951, № 4, с. 60).

[24] Ղազար Փարպեցի. II. Խ, էջ 73:

[25] Եղիշե, էջ 128-129:

[26] Ղազար Փարպեցի. II, ԽԱ, էջ 75-76:.

[27] Եղիշե, էջ 129-130:

[28] Ղազար Փարպեցի. II, ԽԵ, էջ 82-84. Եղիշե, էջ 134-135:

որ ճանաչեց վեց հոգևորականների՝ Հովսեփ Կաթողիկոսին, Ղևոնդ երեցին, Սահակ եպիսկոպոսին ու երեք այլ եկեղեցականների: Բոլորի նկատմամբ մահվան վճիռ կայացվեց, որն ի կատար ածվեց Ապար աշխարհում (Խորասան), Ռևան գյուղի մոտ, Հազկերտ Բ-ի գահակալման 16-րդ տարում (իմա՝ 454 թ. օգոստոսի 5-ին): Մահապատժից առաջ տաժանալլուն հոգևոր այրերին փորձեցին համոզել ուրանալու հավատը՝ արյաց տիրակալի անունից խոստանալով ներում շնորհել, սակայն նրանք արիաբար մերժեցին այդ առաջարկը՝ չերկնչելով մահաբեր սրից: Առաջինը սրատվեց Սահակ եպիսկոպոսը, ապա մյուս երանելիները[29]:

Հայ Առաքելական Եկեղեցին արժանին հատուցեց լուսահոգի այրերի սխրանքի դիմաց: Փառազուն հոգևորականների՝ Ղևոնդյանց նահատակների սուրբ հիշատակը նա տոնում է ամեն տարի, Բուն Բարեկենդանին նախորդող շաբաթվա երեքշաբթի օրը, որից երկու օր հետո (հինգշաբթի) Վարդանանց նահատակների հիշատակի օրն է:

450-451 թթ. հայ հոգևորականները ոգևորեցին և առաջնորդեցին ժողովրդին՝ հավատարիմ մնալով Սահակ-Մաշտոցյան ավանդներին: Նրանց շնորհիվ ազատագրական պատերազմում հայ ժողովուրդը տարավ հոգևոր, բարոյական հաղթանակ և, հակառակ քաղաքական հողմերին, պահպանեց իր մշակույթը, կրոնը, ազգային դիմագիծն ու ներքին ինքնավարությունը: Անհավասար պայքարում Հայ Եկեղեցին կոփեց Հայոց ոգու հաղթանակը խավարակուռ բռնության նկատմամբ:

[29] Եղիշե, էջ 169-171, Ղազար Փարպեցի, II, ԾԵ, էջ 97-98: Եղիշեն սպանվածների թվում հիշում է նաև երկու այլ այրերի, որոնք սրի քաշվեցին Վատցեն գավառում (Խորասանից արևելք), և Թաթիկ եպիսկոպոսին՝ նահատակված Միջագետքում (տե՛ս Եղիշե, էջ 171):

*ԵՐԱՆՈՒՀԻ ՄԵԼԻՔ-ՄՈՒՐԱԴՅԱՆ*

# ԱՍՏՂԻԿ ԴԻՑՈՒՀՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՎԱՅՐԵՐԸ

Հայոց հնագույն առասպելածիսական համակարգում Աստղիկը գլխավոր աստվածություններից մեկն է: Նրա անունը բազմիցս արձանագրվել է հայ պատմիչների և այլ մատենագիրների երկերում[1]: Հիշատակվել են մի շարք կարևոր հանգամանքներ, որոնք կապված են նրա պաշտամունքի և գործառնական հատկանիշների հետ:

Աստղիկի պաշտամունքը բավականին տարածում ուներ հին հեթանոսական Հայաստանում: Ճիշտ է, այն որոշ չափով սահմանափակված էր, քանի որ մեջտեղ էր եկել Աքեմենյան և Արշակունյաց շրջանների Անահիտը՝ պետական դիցարանի աստվածուհին, և Աստղիկի շատ գծեր, բնականաբար, պիտի փոխանցվեին նրան: Եվ, այդուհանդերձ, Աստղիկը սիրված էր ամենուր:

Աստղիկի անվան և պաշտամունքի հետքեր ենք գտնում պատմական Հայաստանի շատ կողմերում, բազմաթիվ տեղանունների մեջ: Տեղանուններից հատկապես մեծ կարևորություն են ստանում լեռները (Աստղաբերդ, Աստղունք, Աստղաբլուր), որոնց վրա տեղադրվել են մեհյանները, բագինները և բերդերը: Պաշտամունքային այդ սահմանափակ գոտիները տեղադրված են Վանա լճի արևմտյան և հյուսիս-արևմտյան (Տարոն, Հաշտյանք, Քղի), ինչպես նաև արևելյան ու հարավարևելյան ափերին (Տոսպ, Անձևացիք): Գլխավորապես այդ գավառներում են գտնվել Աստղիկի սրբավայրերը՝ համաձայն մատենագրական տեղեկությունների: Մնացած տեղանունները, որոնց հիմքում ընկած են Աստղ-Աստղիկ հիմքերը, թեև կրում են դիցուհու անունը, այնուամենայնիվ դրանց պաշտամունքային դերի մասին դատել անկարելի է:

Հայկական հեթանոսական բոլոր սրբավայրերից առանձնանում էր Տարոնն իր Աշտիշատ ավանով, որը տեղադրվում է Արևելյան Եփրատի կամ Արածանի գետի աջ ափին բարձրացող Քարքե լեռան վրա: Արշակունիների օրոք ավանը պատկանում էր Վահունի քրմական տոհմին: Տիգրան Բ-ի օրոք գավառը սրբավայրի հետ միասին խլվում է նրանցից և դրվում արքունիքի ուղղակի հպատակության տակ:

[1] Աստղիկը հիշատակվում է Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Թովմա Արծրունու, Հովհան Մամիկոնյանի, Միքայել Ասորու, Փիլոն Եբրայեցու, Գրիգոր Մագիստրոսի երկերում, ինչպես նաև «Յայսմավուրք» և «Տոնապատճառ» մատյաններում:

Ահա այստեղ՝ Անահիտի և Վահագնի (որի տարփածուն, հարսը և կինն է համարվել Աստղիկը) մեհյանների կողքին գտնվում էր նաև Աստղիկի գլխավոր մեհյանը. «...երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, Սենեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս»[2]:

Պատմիչը բացատրում է, որ պաշտոնապես մեհյանը կոչվում էր «Սենեակ Վահագնի», բայց ժողովուրդն այն ըստ ավանդույթի անվանում էր Աստղիկ դիցուհու անվամբ: Հենց թեկուզ այդ փաստը խոսում է Աստղիկի՝ սիրված աստվածուհի լինելու մասին: Գուցե պատճառներից մեկն էլ դա էր, որ Գրիգոր Լուսավորիչն այդ նույն տեղում հիմնեց առաջին սուրբ եկեղեցին՝ կործանելով Վահագնի (Հերակլեսի) մեհյանի բագինները[3]:

Պատմահայր Մ. Խորենացին նշում է, թե ինչպես Արտաշես Ա-ն և նրա որդի Տիգրան Բ-ն Հունաստանից և Փոքր Ասիայից Հայաստան են բերում անտիկ արվեստի մի քանի քանդակներ և հանձնում Վահունի քրմական տոհմի տնօրինությանը: Դրանց թվում. «...զՀերակլեայն զանդրիապատկերն... զՎահագն յիւրեանց վարկանելով նախնի, կանգնեցին ի Տարօն, յիւրեանց սեպհական գեւղն յԱշտիշատ»[4], իսկ Ափրոդիտեի արձանը իբրև Հերակլեսի տարփածուի՝ կանգնեցնում են հենց Հերակլեսի արձանի մոտ՝ «...Ափրոդիտայ զպատկերն իբրև Երակղեայ տարփաւորի՝ առ նորին պատկերին Երակղեայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն»[5]: Մ. Խորենացու այս վկայությունը գալիս էր լրացնելու Ագաթանգեղոսի տեղեկությունները:

1971 թ. Բ. Առաքելյանի ղեկավարած հնագիտական արշավախմբի ուժերով, Արտաշատի պեղումների ժամանակ հայտնաբերված կնոջ մարմարե արձանը, որն իր ոճական առանձնահատկություններով և արվեստի նրբագեղությամբ բնորոշ էր հելլենիստական դարաշրջանի Աֆրոդիտե դիցուհու պատկերաքանդակներին, հավանորեն պատկանում է Մ. Խորենացու վկայած Հայաստան բերված հունական աստվածների՝ Զևսի, Աթենասի, Արտեմիսի, Աֆրոդիտեի, Հերակլեսի, Հեփեստոսի արձանների թվին[6], որոնք հարմարեցվելով և համապատասխանեցնելով հայկական հեթանոսական պանթեոնի աստվածներին, տեղադրվեցին նրանց տաճարներում:

---

[2] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 411:

[3] Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Երևան, 1968, III, ԺԴ, էջ 95: Ագաթանգեղոսի վկայությամբ Գ. Լուսավորիչը Հունաստանից բերել էր Ս. Հովհաննեսի և Աթանագինես նախավկայի մասունքները և ցանկանում էր գերեզմանել Վահնանյան մեհյանի տեղում, սակայն, Տիրոջ կամքով, մատուռ են կառուցում և թաղում մեհյանից ոչ հեռու. Քարքե լեռան լանջին և ապա «տերունական խաչի» ուժով տապալում բագինների ողջ շինությունները (տե՛ս Ագաթանգեղոս, էջ 411-412):

[4] Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւն. Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1865, էջ 84:

[5] Անդ, էջ 88:

[6] Բ. Առաքելյան, Արտաշատ, 1970-1971 թթ. հնագիտական պեղումների հիմնական արդյունքները (ռուսերեն), Երևան, էջ 42:

Արտաշատի այդ պեղումները արգասավորվել են նաև մանրաքանդակ արձանիկների հայտնաբերմամբ, որոնք կերպավորում են լոգանքի պատրաստվող մերկ և պատկերում են Աստղիկ դիցուհուն[7]: Այս և տերակոտի մի քանի արձանիկները՝ Աֆրոդիտե և Աստղիկ դիցուհիներին պատկերող, իրենց մշակմամբ և արվեստի նրբագեղությամբ նույնպես հիշեցնում էին Հունաստանի հելլենիստական դարաշրջանի քանդակագործությունը և համարվում էին Պրաքսիտելի ու նրա դպրոցին պատկանող ստեղծագործությունների ազդեցությամբ ստեղծված:

Մ. Խորենացու բերած մեկ այլ ավանդության համաձայն՝ Տարոնի տերերն են համարվել Նոյ-Քսիսութրոսի որդիները ու դուստրը՝ ջրհեղեղից հետո ծնված Աստղիկը[8]: Նա էր, որ պատմահոր վկայությամբ՝ հաշտեցնում է գժտված եղբայրներին՝ Սեմի դեմ ըմբոստացած Քամին և Հաբեթին: Նա էր, որ գավառի Մակունք գետի մոտ, ըստ ժողովրդական ավանդության կառուցել է տալիս Աստղաբերդը՝ իր եղբոր՝ Զրվանի (որ նույն Սեմն էր) «ապահովության» համար: Եվ, վերջապես, Աստղիկն էր նաև իր այդ եղբոր որդիների փրկիչը, որոնցից կրտսերագույնի՝ Տարբանի անունով էլ անվանակոչվել է Տարոնը[9]:

Աստղիկը Տարոնում այնքան մեծ ժողովրդականություն էր վայելում, որ բուն սրբավայրերից բացի նրա անունով են կոչվել բազմաթիվ բերդեր, լեռնագագաթներ, գետեր և շեներ: Դրանց մասին հիշատակություններ են պահպանվել ինչպես պատմիչների երկերում, այնպես էլ ժողովրդական բանավոր ավանդազրույցներում:

Գրավոր աղբյուրներում ավանդված վկայություններից բացի Աստղիկ դիցուհու մասին բանավոր մի գողտրիկ ավանդություն էր պահպանվել Տարոն աշխարհում, որը գրի է առել Գարեգին Վարդապետ Սրվանձտյանցը անցյալ դարավերջին. «Եփրատը երբ Մշո դաշտը կմտնե, կնճան սարերուն մեջ զարնվելով քարերուն նեղ կիրճով մը սղմվելով գու՜ռ գու՜ռ ձայն մը կարձակե. և այդ տեղը կկոչվի Գուռգուռա, ուր Աստղիկի լոգարանն է եղեր: Եվ քանզի գիշերները լվացվելու սովորություն ուներ Աստղիկը, Դաղոնաց սարին վրա մեծ կրակ կվառեին տարփավոր կտրիճները, որի լուսով կդիտեին Աստղիկի չքնաղ գեղեցկությունը, հնարած է Աստղիկ, որ մշուշ պատե այն ամբողջ միջավայրը, այսինքն՝ Մշո դաշտը ծագաց ի ծագս, թե ամառն, թե ձմեռն, մինչ ի ծունկս սարերուն, որով անհնարին կը լինի որնիցե կողմի լեռներեն տեսնվիլ: Եվ զուցե այս շարունակ և թանձր մշուշեն այդ երկիրը կոչված լինի Մուշ: Արդեն բնակիչք այս երկտող հանգները կերգեն.

---

[7] Ժ. Խաչատրյան, Անտիկ շրջանի կորոպլաստիկան, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 5:

[8] Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւն, Պատմութիւն Հայոց, էջ 16: Պատմիչը հենվում է Բերոսյան Սիբիլլայի հաղորդած տվյալների վրա:

[9] Անդ, էջ 16:

Մշու սարեր մշուշ է,
Իր հողն ու ջուր անուշ է»[10]։

Աստղիկ դիցուհու մասին անգնահատելի տեղեկություններ է հաղորդում պատմահայր Խորենացին, մասնավորապես, նկարագրելով նրա սրբատեղիներից մեկը, որ գտնվում էր Անձևացիք գավառի Պաղատ կոչված լեռան գագաթին. «...ի գլուխ լերինն Պաղատոյ, զոր ասէին սաստիկ յոյժ ի նմա լէալ դիւացն տուն Արամազդայ եւ Աստղկայ մեծարէին։ Եւ յաճախ պաշտամամբք տօն կարդային, որ է Պաղատ»[11]։ Պաղատ լեռան նշված տաճարներում հին ժամանակներում մեծ տոնախմբություններ են կատարվել և Աստղիկի հետ միասին երկրպագվել է Արամազդը։ Այսպիսով, Աստղիկն այդտեղ պաշտվել է հատուկ տոնակատարությամբ, որ կրել է *Պաղատ* անունը։ Դժբախտաբար, այդ տոնի մասին տեղեկություններ չեն պահպանվել։ Ըստ երևույթին, տոնի անունը կապված է հայերեն *պաղատիլ* բառի հետ, եթե մանավանդ նկատի առնենք, որ լեռնագագաթները (հմմտ. Թաբոր) հնուց ի վեր հայտնի են եղել որպես աղոթատեղիներ, քանի որ ըստ նախնիների հավատալիքի՝ Աստված այդտեղ, կարծես, ավելի «հասանելի» էր դառնում կամ մարդիկ ավելի էին մոտենում նրան՝ Բարձրյալին։

Այսպիսով, պարզվում է, որ Աշտիշատը և Պաղատ լեռն այն սրբավայրերն են, որտեղ հատուկ պաշտամունքի է արժանացել Աստղիկ դիցուհին հելլենիստական դարաշրջանում։

Դիցուհու մի քանի այլ սրբատեղիներ են հայտնի Տարոն գավառի սահմաններից դուրս։ Այդպիսի սրբատեղիների հետքեր են պահպանվել Քղի գետի վերին հոսանքի շրջանում, որտեղ ըստ ավանդության, Ս. Գևորգ եկեղեցու տեղում, հնագույն ժամանակներում, հիշատակվել է Աստղիկ դիցուհուն նվիրված մեհյան (այն հետագայում եկեղեցու էր վերածված առանց էական փոփոխությունների)։ Ի դեպ, Քղիի վտակը, որի ափին գտնվելիս է եղել սրբավայրը՝ հայտնի է Աստղաբերդ անվամբ, իսկ քիչ հեռվում գտնվել է նաև նույնանուն գյուղը և բերդը[12]։

Թերևս, մյուս նշանավոր սրբավայրը, որտեղ երկրպագել են Աստղիկին՝ Տոսպ գավառի Արտամետ դաստակերտն է։ Թովմա Արծրունին նկարագրում է Արտամետը՝ Արտաշեսի հիմնած քաղաքը, որի մերձակայքում՝ փոքր ու գոգաձև մի եռանկյուն հովտում, նա փորվածքի ձևով կառուցում է բարձրաբերձ մի աշտարակ և նրա վրա շինում Աստղիկի բագինը ու մի փոքր հեռվում նաև զանձատունը. «...ի մէջ երեքարմատեան գոգաձեւ հովտին փոքու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտա-

[10] Գ. Սրվանձտյանց, Գրոց ու Բրոց, Կոստանդնուպոլիս, 1874, էջ 97։

[11] Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւն, Պատմութիւն Սրբոյ Հռիփսիմեանց, Վենետիկ, 1865, էջ 301։

[12] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1986, հ.1, էջ 342-346։

րակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ. եւ ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն եւ մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կռոցն»[13]: Այդ վայրերն են եղել Արտաշես Բ-ի և մանավանդ նրա կնոջ՝ Սաթենիկի սիրված զբոսատեղիները: Սաթենիկի սիրո մասին՝ հանդեպ Աստղիկը, ասվում է, որ նա չկարողացավ ազատվել Աստղիկի պաշտամունքից անգամ քրիստոնեության ընդունումից հետո ու շարունակում էր երկրպագել մեր այս աստվածուհուն և զբոսատեղի էր ընտրել նրա արձանի ու մեհյանի ստորոտները[14]: Թովմա Արծրունու այս մանրազնին նկարագրությունը լրացնում է այլ աղբյուրներում հանդիպող Արտամետ քաղաքի մասին տեղեկությունները ևս և օգնում է պատկերացնել, թե ինչ էին իրենցից ներկայացնում հին մեհենատեղիները:

Ղ. Ալիշանի «Հին հավատքում...» բերվում է նաև XIII դարի մատենագիր Վանական Վարդապետի այն վկայությունը, ըստ որի Գրիգոր Լուսավորչի կողմից հեթանոսական տաճարների ավերման և աստվածների տոների խափանման ժամանակ խաթարվել է նաև Աստղիկին նվիրված Վարդավառի տոնը[15]:

Նույն գավառի տարածքում՝ Վարագա լեռան վրա գործել է նաև մի այլ կուռատուն, որին կից եղել է Աստղկան բերդը[16] (Աստղաբերդ): Այդտեղ, մինչև նոր ժամանակները նշմարվում էին քարակերտ պատերի հետքեր, որոնք, հավանաբար, վաղեմի մեհյանի մնացորդներն են:

«Պատմութիւն Տարօնոյ» գրքի հեղինակը՝ Հովհան Մամիկոնյանը, վկայում է դիցուհու սրբավայրերից ևս մեկի մասին: Նա պատմում է, թե ինչպես Խոսրովը քրոջ որդուն՝ Միհրանին ուղարկում է Տարոնի կողմերը երեսուն հազարանոց զորքով՝ տեղի մեհյանները կործանելու առաջադրանքով: Եվ երբ նրանք հասնում են Հաշտենից կողմերը և մոտենում են Արձան բնակավայրին, այնտեղ գտնում են մի բագին ու նրա վրա գրառված խոսքերը կարդալուց հետո, անմիջապես որոշում են կործանել այն[17]:

Աստղիկի սրբավայրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պաշտամունքային բուն կենտրոնը եղել է Տարոնը, մասնավորապես, Իննակնյան սրբատեղին, որտեղ քրիստոնեական շրջանում հիմնադրվեց Աշտիշատի Ս. Կարապետ վանական համալիրը: Այդտեղից պաշտամունքը տարածվել է դեպի հյուսիս՝ Քղի, արևմուտք՝ Հաշտյանք, արևելք ու հարավ-արևելք՝ Տոսպ և Անձևացիք:

[13] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն Արծրունեաց տան, Երևան, 1935, I, Ը, էջ 88:

[14] Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 280:

[15] Անդ, էջ 281-283:

[16] Նույն անունը կրող բերդերն այլուր հայտնի են նաև *Աստարբերդ* տարբերակով:

[17] Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832, էջ 28:

*ՔՆԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ*

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎԱԳ ԽՈՐԱՆԻ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան պատկերացումներով, մարդուն տրված հոգևոր իմաստները ըմբռնելու կարողությունը դրսևորվում է որոշակի զգայական պատկերների միջոցով: Դրանք, որպես Ամենակալին ձգտելու, Նրա հետ հաղորդակցվելու մղումի արտահայտություն, կերպավորվում են քրիստոնեական արվեստի տարբեր տեսակներում: Այն մի դեպքում եկեղեցու որմերը զարդարող տերունական տեսարան է, ձեռագիր մատյանի ծաղկանկար, մյուս դեպքում՝ սուրբ խորհուրդները կատարելու ժամանակ գործածվող դրվագազարդ առարկա, նրբահյուս հանդերձանք, վարագույր, ծածկոց կամ որևէ այլ առարկա: Հոգևոր միջավայրը ներկայացնող և հավատքով ներշնչված այդ ամենը մի ամբողջություն են կազմում, ուր հորինվածքը, ձևը, գույնը ծառայում են մի նպատակի՝ արտացոլելու աստվածային էությունը, ինչպես ներկայացվում է հոգևոր հայրերի քննախոսություններում[1]: Որպես բնորոշ օրինակ նշենք Գրիգոր Տաթևացու մեկնությունը, թե ինչու է քահանայապետի զգեստը շքեղ և գունազեղ: Քանի որ «Սուրբ գործին պետք է սուրբ զգեստ ... Մարմնի երևացող սրբությունը նշանակում է հոգու աներևույթ սրբություն»,- կարդում ենք «Գիրք հարցմանցում»[2]: Այնուհետև, շարունակելով միտքը, հեղինակը բացատրում է, թե սպիտակ շապիկը, կարմիր գոտին, խաչաձև ապարոշը, ոսկեգույն խույրը՝ հանդերձանքի յուրաքանչյուր մանրամասնը, խորհրդաբանական իմաստով ինչպես են կապվում Աստծո և աստվածայինի հետ:

Խորհրդաբանական և գեղագիտական ընկալումների այս ընդհանրությամբ է պայմանավորվում միջնադարյան արվեստի տարբեր տեսակների սերտ կապը: Այս երևույթի արդյունքում տեսնում ենք, որ մանրանկարչության, քանդակագործության և որմնանկարչության մեջ տարածված տերունական տեսարանները, ինչպես նաև

[1] Խորանների մեկնություններ. աշխատասիրեց՝ Վիգեն Ղազարյանը, Եր., 1995 թ., էջ 11:

[2] Գիրք հարցմանց երիցս երանեալ Սրբոյն Հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն ... ի Կ. Պոլիս, ՌՃՀԸ (1729 թ.), էջ 347:

Հայ Եկեղեցու պատմության ավանդական հորինվածքները հանդիպում են Ավետարանի կազմերի, աջերի ու մասնատուփերի, հայրապետական հանդերձանքի (շուրջառ, վակաս, փորուրար, կոնքեռ, խույր), ծածկոցների ու վարագույրների վրա՝ վկայելով նաև հայ ոսկերիչների, ասեղնագործության և դաջարվեստի վարպետների հմտությունը, ճաշակն ու վառ երևակայությունը:

Ձեռագործ հյուսվածքների մեջ առանձնակի ուշադրություն են գրավում Ավագ խորանի վարագույրները, որոնց նկարազարդումները մեծ հետաքրքրություն են ներկայացնում միջնադարյան արվեստի ուսումնասիրության համար:

Հայոց Եկեղեցու ծեսի համաձայն, Ավագ խորանն ամբողջությամբ ծածկվում է կերպասից կամ կտավից պատրաստված ճաղկանկար վարագույրով: Պատարագի ժամանակ, ըստ անհրաժեշտության, այն բացվում և փակվում է, իսկ արարողությունից դուրս՝ «փակ պահելը հարգանքի նշան է, և շատ եկեղեցիներում սովորություն է»,- ինչպես գրում է Մաղաքիա արքեպս. Օրմանյանը «Ծիսական բառարանում»[3]:

Կաթողիկոսական դիվանի վավերագրերում հանդիպում են բազմաթիվ օրինակներ, ուր եկեղեցուն պատկանող արժեքների շարքում թվարկվում են նաև վարագույրները: Հայ մատենագրության մեջ նույնպես պահպանվել են առանձին տեղեկություններ եկեղեցիներին նվիրաբերված վարագույրների մասին: Դրանցից մեկն է 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու այն հիշատակումը՝ «Սա (Արզու խաթուն կին Վախթանկայ Հաթերքեցւոյ) բազում ինչ օժանդակ եղեւ (եկեղեցւոյն Գետկայ), արար եւ վարագոյր գեղեցիկ՝ դստերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողացն, ի մազոյ այծից կակղագունաց՝ ներկեալ պէսպէս եւ զանազան, գործ քանդակակերպ եւ նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք՝ տնօրինականօք Փրկչին եւ այլ սրբոց, որ հիացուցանէր տեսողսն: Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային Աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն ուստայնանկութեան եւ հանճար նկարակերտութեան... Եւ ոչ միայն այս եկեղեցւոյս արար ծածկոյթ, այլ եւ այլոց եկեղեցեաց՝ Հաղբատայ եւ Մակարայ եւ Դադի վանից, քանզի յոյժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ կինն»[4]:

Մեր երկրում պարբերաբար կրկնվող արհավիրքների և ինքնին, ձեռագործ հյուսվածքների նուրբ ու դյուրամաշ լինելու պատճառով, վաղ շրջանից ասեղնագործության նմուշներ չեն պահպանվել: Ինչպես նկատում է հայ մշակույթի երախտավոր Գարեգին Հովսեփյանը, «Ասեղնագործ հյուսվածքները ԺԵ դարից առաջ

[3] Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ծիսական բառարան, Եր., 1992 թ., էջ 120:
[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961 թ., էջ 215-216:

չեն հասել մեր ձեռքը»[5]: Պահպանված գործերի մեջ վարագույրներն ավելի ուշ շրջանից են՝ հիմնականում ստեղծված 17-18-րդ դարերում: Տեղին է նշել, որ դրանց շարքում ասեղնագործ օրինակներն ավելի շատ 17-րդ դարից են, իսկ դաջելու տեխնիկայով արվածները հասնում են մինչև 19-րդ դարի սկիզբը:

Տարբեր վայրերում ստեղծված վարագույրների ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ թե՛ ասեղնագործ, և թե՛ դաջե գործերն ունեն նկարազարդման միևնույն սկզբունքները: Բավականին մեծ չափի (ինչպիսին որ տվյալ եկեղեցու Ավագ խորանի չափն է) կտորի ծաղկանկար եզրագոտու ներսում արվում են թեմատիկ տեսարաններ, որոնք երբեմն դասավորված են մի քանի շարքերով: Միջնադարյան արվեստում ընդունված ձևով, վարագույրների վրա նույնպես արվել են պատկերի բովանդակությունը լուսաբանող և հիշատակային բազմաթիվ գրություններ, որոնցից հատկապես վերջիններս արժեքավոր տեղեկություններ են պարունակում տվյալ գործի ստեղծման ժամանակի, նվիրաբերված եկեղեցու և հեղինակի մասին: Այդ գրությունների մեջ հանդիպում ենք Էջմիածնի Մայր Տաճարի, Ս. Սարգիս, Ս. Աստվածածին, Ս. Թովմայի, Ս. Թադեի եկեղեցիների, Երուսաղեմի վանքի անունները:

Նշենք մի ուշագրավ առանձնահատկություն ևս: Վարագույրների եզրագոտիներն իրենց ներսում ամփոփված հորինվածքի համար ասես նախադուռ են հանդիսանում, և որոնց ձևավորումները հիշեցնում են մանրանկարչության մեջ կանոնակարգված խորանների և անվանաթերթերի նկարազարդումները: Տարբեր վարագույրների վրա մեկ կամ երկու շարքով ձգվող ծաղկանկար եզրագոտիների մեջ որոշակի ռիթմով դասավորված են թռչնաթևերի մեջ առնված հրեշտակների գլուխներ, ինչպես նաև առանձին շրջանակներում արված առաքյալների և չորս անկյուններում չորս ավետարանիչների խորհրդանշական պատկերներ: Թվենք մի քանի բնորոշ օրինակներ: Հայաստանի Ազգային Պատկերասրահում պահպանվող 17-րդ դարի վարագույրի կենտրոնում ասեղնագործված եկեղեցու շուրջը՝ յոթ շրջանակների մեջ, թեմատիկ տեսարաններ են, եզրագոտու վրա՝ տասներկու առաքյալների պատկերները, անկյուններում չորս ավետարանիչները՝ իրենց խորհրդանշաններով, յուրաքանչյուրի ձեռքին՝ բացված գիրք՝ Ավետարանի առաջին տողերը գրված: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գանձատանը ցուցադրվող Մայր Տաճարին նվիրաբերված երկու վարագույրների վրա (1705-14 և 1741 թթ.) ասեղնագործված են «Էջմիածնի հիմնադրումը» անունով հայտնի հորինվածքի տարբերակները: Առաջինի եզրագոտու ծաղկաշղթայի մեջ իրար են հաջորդում թռչնաթևերով հրեշտակի գլխի

[5] Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության. Հ. Բ., Եր., 1987 թ., էջ 252:

և խաչի. ուղղահայաց եզրերին՝ տասներկու առաքյալների պատկերները: Հաջորդի՝ նրբահյուս մեխակներից կազմված զարդագոտու անկյուններում պատկերված են չորս ավետարանիչները՝ իրենց խորհրդանշաններով: Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի 1737 թվականի ասեղնագործ վարագույրի եզրագոտու հիմնական մոտիվը նույնպես կազմված է մեխակներից և մարգարտածաղիկներից, իսկ Համբարձման տեսարանով վարագույրի անկյուններում, բոլորակների մեջ, չորս ավետարանիչների պատկերներն են: 1805 թվականի դաջե վարագույրի եզրագոտու հիմնական մոտիվը թռչնաթևերով հրեշտակների գլուխների պատկերներն են, որոնք տարածվում են ամբողջ ֆոնով մեկ՝ ասես համապատասխան միջավայր ստեղծելով տերունական տեսարանների համար:

Վարագույրների հարդարանքում առանձնահատուկ տեղ են գրավում թեմատիկ հորինվածքները, որոնց ընդգրկման սահմանները բավականին լայն են՝ ներառելով Հին ու Նոր Կտակարանների ավանդական տեսարանների առանձին պատկերները: Եվ մեծամասամբ տերունական պատկերաշարը ներկայացվում է հետաքրքիր խմբավորումներով՝ երբեմն համադրվելով Հայոց Եկեղեցու պատմությանը նվիրված հորինվածքների հետ: Սակավաթիվ են միայն մեկ թեմատիկ հորինվածքով վարագույրները, որոնց վրա տեղ են գտել Ավետման, Համբարձման, Ս. Սարգսի. Ս. Գրիգոր Լուսավորչի, Հայոց Հայրապետերի պատկերները: Ավելի հաճախ հանդիպում են միջնադարյան մանրանկարչության և որմնանկարչության մեջ ընդունված ձևով, երկու շարքով դասավորված կամ կենտրոնում՝ մեծ չափերով հորինվածքի շուրջը տեղավորված տեսարաններից կազմված պատկերաշարերը:

Վարագույրների թեմատիկ պատկերների ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ դրանց ընտրության և դասավորության վրա իր որոշակի ազդեցությունն է թողել եկեղեցու ներսի հարդարանքը: Նշենք, որ, ընդունված կարգի համաձայն, Հայոց Եկեղեցու Ավագ խորանը զարդարում է մանուկ Հիսուսը՝ գրկին Աստվածամոր, խորանի կողային պատերը՝ տասներկու առաքյալների, մարգարեների և մեր Եկեղեցու Հայրապետերի ու վարդապետների պատկերները, Քրիստոսի տնօրինության տեսարանները: Հատկանշական է, որ թեմատիկ պատկերներով վարագույրները, եկեղեցու ներսի հարդարանքի մի մասը կազմելով, լրացնում և ամբողջացնում են այն:

Ավագ խորանի վարագույրների պատկերագրության առանձնահատկությունները ներկայացնենք մի քանի ուշագրավ նմուշներով: Առաջինն անդրադառնանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գանձատանը պահվող գործերին:

1663 թվականի դաջված վարագույրի բաց հողագույն կտավի վրա տաք աղյուսագույն, դարչնագույն և շագանակագույն ներկերով արված տերունական պատկերները հորիզոնական երկու շարքով են դասավորված: Ներքևի լայն հատվածի

կենտրոնում «Խաչելություն», աջից՝ «Աստվածամայրը մանկան հետ», ձախից՝ «Աստվածամոր վերափոխումը» ավանդական պատկերագրությամբ տեսարաններն են: Վերևի նեղ հատվածում, կամարաձև վերնամասով ուղղանկյունների մեջ, տեղ են գտել Քրիստոսի տնօրինության հետևյալ պատկերները՝ «Ավետում», «Մոգերի երկրպագություն», «Տյառնընդառաջ», «Մկրտություն», «Պայծառակերպություն», «Մուտք Երուսաղեմ», «Ոտնլվա», «Համբարձում», «Հարություն» և «Աստվածամայրը մանկան հետ»: Իսկ երկու կողքերին՝ առանձին շրջանակներում, Ս. Սարգսի, Ս. Գևորգի, հրեշտակների ու սրբերի պատկերներ են: Վարագույրի ներքևում հետևյալ հիշատակային գրությունն է. «Յիշատակ է վարագուրս փոքշանցի Աղեքսանդրի որդիոցն մահտեսի Վարդանին եւ մահտեսի Աւետիսին. ի դուռն Ս. Աստուածածնի: Թվին ՌՄՂ. ի Թօխատ. Ձեռամբ Յակոբ դըպրի»: Արձանագրության մեջ հիշատակվում է պատմական Փոքր Հայքի Սեբաստիայի նահանգի Թոխաթ քաղաքը, որը միջնադարում եղել է գրչության կենտրոն, ուր տարածված էին տարբեր արհեստներ, այդ թվում՝ ոստայնանկությունը, զործագործությունը, ջուլհակությունը: Տեղի հայկական իրը եկեղեցիներից կենտրոնականը Ս. Աստվածածնի անունն է կրել, որին էլ նվիրաբերվել է այս վարագույրը: Հեղինակ Հակոբ դպրի՝ ավանդական տեսարանները մեկնաբանելու յուրահատկություններին ծանոթանանք միայն մեկ՝ «Աստվածամայրը մանկան հետ» պատկերի քննությամբ: Հասակով մեկ կանգնած Աստվածամոր աջ թևին մանուկ Հիսուսն է, ձախ ձեռքին՝ խաչանիշ գավազան, ոտքերի տակ՝ լուսնի մահիկ՝ մեծ գլխով օձ փաթաթված: Դիմահայաց պատկերված Աստվածամոր և մանկան դիրքերը մեզ հիշեցնում են հնագույն օրինակները, իսկ մանուկ Հիսուսին տիրագունդով պատկերելու ձևը հայ արվեստում տարածված է 17-18-րդ դարերի գեղանկարչության մեջ: Ավանդական հորինվածք ներմուծված մանրամասներով (գավազան, լուսնի մահիկ, օձ) հեղինակը Ս. Կույսի կերպարում ցանկացել է առանձնացնել նրա՝ Աստծո մայր և տիրուհի լինելու հատկանիշերը: Ժողովրդական ընկալումները ու ժամանակաշրջանի գեղագիտական չափանիշերը դրսևորվում են Աստվածամոր դիմապատկերում: Նա պատկերված է ուսերին թափվող երկար մազերով, ավանդական շապիկին փոխարինող ծաղկանկար փեշով, առանց գլխաշորի և թիկնոցի, սակայն թագով և լուսապսակով, ինչպես ընդունված է միջնադարյան արվեստում:

18-րդ դարի դաջված մի գունազեղ վարագույրի կապույտ ֆոնին երկու շարքով, առանձին կամարների ներսում, դասավորված են հետևյալ տեսարանները՝ «Պայծառակերպություն», «Խաչելություն», «Խաչից իջեցում», «Քրիստոսի չարչարանքները», «Համբարձում», «Յուդաբեր կանայք գերեզմանի մոտ» և Հին Կտակարանից՝ «Ադամը և Եվան դրախտում» և «Արտաքսում դրախտից»:

Ս. Թովմայի եկեղեցուն նվիրաբերված 17-րդ դարի վարագույրի վրա՝ երկգլխանի արծիվների շարքից կազմված եզրագոտու ներսում, պատկերված են հասակով մեկ կանգնած չորս ավետարանիչները՝ իրենց խորհրդանշաններով և Սուրբ Գրքով: Հիշատակված օրինակներից արդեն երևում է, որ վարագույրների հարդարանքում բավականին տարածված են ավետարանիչների պատկերները: Դրանք հիմնականում տեղավորվում են չորս անկյուններում, իսկ այստեղ միակ թեմատիկ տեսարանն է:

Առաքյալների պատկերները՝ որպես մեր եկեղեցական հավատքի խորհրդանշան, հայ արվեստում հայտնի են դեռևս 7-րդ դարից: Հնագույն օրինակը Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցու գմբեթի քիվի տակ, չորս անկյուններում տեղավորված պատկերաքանդակներն են[6]: Տեղին է հիշատակել նաև Մոմիկ վարպետի կառուցած Արենիի Ս. Աստվածածին եկեղեցու (1321 թ.) առագաստների վրայի բարձրարվեստ քանդակները:

1805 թվականի վերոհիշյալ վարագույրի կենտրոնական, իր մեծ չափերով առանձնացող պատկերը «Աստվածամայրը մանկան, Ս. Ստեփանոսի և Ս. Հովհաննես Մկրտչի հետ» ավանդական հորինվածքի մի հետաքրքիր խմբագրումն է: Աստվածամոր գլխավերևում՝ պլաքաձև կամարի տակ, նրա գլխին թագ բռնած հրեշտակներ են պատկերված, իսկ Ստեփանոս Նախավկայի ոտքերի մոտ՝ մի ցառ՝ հետևյալ բացատրագրով. «Գառն Աստուածոյ որ բառնայ զմեղս աշխարհի»: Կենտրոնական հորինվածքի շուրջը, տասներեք առանձին կամարների տակ, արված են առաքյալների և Հայ Եկեղեցու սրբերի պատկերները, այդ թվում՝ Սահակ, Ներսես, Հակոբ Մծբնա Հայրապետները, Գրիգոր Նարեկացին, Ս. Գայանեն և Ս. Շողակաթը, Մարիամ Մագդաղենացին, Պողոս, Պետրոս, Հակոբ և Թադեոս առաքյալները:

Հայ միջնադարյան արվեստի արժեքավոր հավաքածուներից մեկի՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի վարագույրներին ծանոթացանք վերատպությունների միջոցով[7]: 1619 թվականին Կ. Պոլսում ասեղնագործված վարագույրի կենտրոնական տեսարանը ներկայացնում է գահակալ Աստվածամորը, որին հրեշտակը մատուցում է Ս. Հակոբի գլուխը, կողքին, հասակով մեկ, կանգնած են Ս. Հովհաննես Մկրտիչը և Ս. Հակոբ Տյառնեղբայրը՝ համապատասխան մակագրություններով, շուրջն ավետարանական տեսարաններ են: Այն կախվել է Պողոս և Պետրոս առաքյալների տոնի ժամանակ: 1620 թվականի ասեղնագործ վարագույրի կենտրոնա-

---

[6] **Дурново Л. А.**, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979 г., стр. 53.

[7] "Armenian Art treasures of Jerusalem", Massada Press, 1979, №№ 179-182.

կան տեսարանն ավանդական պատկերագրությունով «Խորհրդավոր ընթրիքն» է, շուրջը՝ Քրիստոսի տնօրինության տեսարանները, ներքևում հետևյալ մակագրությունը. «Յիշատակ է զոցնոցս ի դուռն Ս. Նիկողայոս եկ[եղեցւոյ]. թվին ՌԿԸ»:

Առավել ամբողջական պատկերագրությունով և գեղարվեստական ձևավորումով հայտնի է Երուսաղեմի տաճարի Ավագ խորանի մեծ վարագույրը, որն, ինչպես նշում է Գ. Հովսեփյանը, «կախվում է Զատկի տոներին»[8]: Հատկանշական է, որ կենտրոնական՝ «Աստվածամայրը մանկան հետ» պատկերի շուրջը դասավորված տեսարանների շարքում տեղ են գտել նաև վարագույրների հարդարանքում սակավ հանդիպող կամ միակ օրինակը հանդիսացող պատկերները («Փախուստ դեպի Եգիպտոս», «Անդամալույծի բժշկությունը», «Դավիթ, Մովսես, Եզեկիել, Հովել մարգարեներ» և այլն)[9]:

Առանձնակի ուշադրության է արժանի Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանում պահպանվող 1850 թվականի դաջված վարագույրը: Այն ժամանակին զարդարել է Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու Ավագ խորանը: Կտավի մեծ մասը զբաղեցնում է հետաքրքիր խմբագրումով «Ահեղ դատաստան» տեսարանը, որի շուրջը 18 բոլորաձև շրջանակներում ամփոփված է Քրիստոսի տնօրինության առավել ամբողջական պատկերաշարը: Պատկերներն ունեն բովանդակությունը մեկնաբանող բացատրագրեր, առանց որոնց էլ ճանաչելի են կանոնիկ պատկերագրությամբ ստեղծված տեսարանները («Ավետում», «Տյառնընդառաջ», «Մուտք Երուսաղեմ», «Ոտնլվա», «Խաչի ճանապարհ» և այլն): Ներքևի մասում տեղ է գտել հետևյալ մակագրությունը. «Նկարիչ վարագուրիս Պողոս պատկերահան տր մու օզ (?) ի նոր Բայ խազցի (?) ամի 1850»: Կտավի մաշվածության պատճառով նկարչի ազգանունն ու բնակավայրը հնարավոր չէ վերծանել: Հատկանշական է այն, որ վարագույրի կենտրոնական հորինվածքը ներկայացնում է միջնադարյան հայ արվեստում սակավ հանդիպող թեմաներից մեկը: Այն ավելի տարածված է ձեռագիր մատյանների նկարազարդումներում[10]: Վարագույրի հորինվածքը որոշ ընդհանրություններ ունի Մեղրիի Ս. Աստվածածին եկեղեցու Ավագ խորանի 1848 թվականին արված որմնանկարի հետ: Երկու գործերում էլ «չորեքկերպեան» գահին բազմած Աստծո, առաքյալների դասի, շեփորահար հրեշտակի, դժոխքը խորհրդանշող կետ ձկան պատկերման ձևերը նման են իրար: Սակայն վարագույրի հեղինակը, պահ-

---

[8] Գ. Հովսեփյան, նշված աշխատ., էջ 258:

[9] Տերունական տեսարանների թվարկումը, դասավորությունը և հիշատակային գրությունները տես՝ Գ. Հովսեփյանի նշված աշխատ., էջ 259-260:

[10] Գէորգեան Աստղիկ. Հայ մանրանկարիչներ. Մատենագիտութիւն 9-19-րդ դդ., Գահիրէ, 1998 թ., էջ 751:

պանելով պատկերագրական ավանդական մոտեցումները, որոշ փոփոխություններ է կատարել: Այսպես, օրինակ՝ հորինվածքի վերևում արված «Բարեխոսությունը» ներկայացված է Քրիստոսից աջ, խնդրարկուի դիրքով, ծնկաչոք Մարիամ Աստվածածնի պատկերով, որի գլխավերևում «Աստուածածին աղերսեր վասըն մեղսագործութեան» մակագրությունն է, իսկ Հովհաննես Մկրտչին հատկացվող տեղում վեր է խոյանում մեծ չափերով խաչը: Այդ շարքում են տեղավորված նաև բոլորակներում ամփոփված չորս ավետարանիչների և դիմահայաց նստած առաքյալների դասը: Քրիստոսից ներքև արևի և լուսնի մարդադեմ պատկերներն են, ավելի ցած՝ մեղքի և արդարության կշեռքը, ձախից՝ շեփորահար հրեշտակի ծնկաչոք ֆիգուրը՝ «Գաբրիել փող հնչեալ» մակագրությունով:

Ինչպես նկատում է Հրավարդ Հակոբյանը, «Սրնգի, եղջերափողի կամ շեփորի մոտիվը կանոնիկ պատկերագրության մեջ մուտք է գործել ժողովրդական-կենցաղային պատկերացումներից, մունետիկները կարևոր լուրն ազդարարում էին շեփորով»[11]: Այս մոտիվը հանդիպում է միջնադարյան արվեստի տարբեր տեսակներում: Մեղրիի որմնանկարում Քրիստոսից ներքև պատկերված խաչի երկու կողքերին, եղջերափող նվագող հրեշտակներ են ճախրում: Երկու սրնգահարների ֆիգուրներ քանդակված են Սողքի 16-17-րդ դարերի հայտնի խաչքարի վրա, Աստվածամոր կողքերին[12]: Վարագույրի հորինվածքի ներքևում մուգ ֆոնով առանձնացված ուղղանկյունի հատվածում, դեպի ձկան բացված երախը շարժվող մերկանդամ մարդկանց ֆիգուրներ են և հրեղեն սուրը ձեռքին՝ «Անողորմ հրեշտակ տանեալ մեղաւորս ի դըժող» մակագրությունով հրեշտակը: Հորինվածքը են ներմուծված հայոց հովվապետերի պատկերները՝ «դասն հայրապետաց» մակագրությունով: Հայրապետական հանդերձանքով, ձեռքերը կրծքին աղոթքի դիրքով բռնած, հայացքները վեր՝ Աստծուն ուղղված նրանց կերպարները նույնպես արտահայտում են մեղքերի թողության համար բարեխոսության գաղափարը:

Մի շարք վարագույրների հորինվածքները նվիրված են Հայոց Եկեղեցու պատմությանը: Դրանցից հնագույնը 1613 թվականին Կաֆինում ասեղնագործված մի բարձրարվեստ գործ է: Կարմիր ատլասի վրա ափռված ոսկեգույն ծաղիկների ֆոնին պատկերված է Գրիգոր Լուսավորիչը՝ հովվապետի հանդերձանքով, աջը օրհնելու դիրքում, ձախ ձեռքով կրծքին սեղմած գրքով, այնպես, ինչպես ընդունված է միջնադարյան արվեստում:

---

[11] Հրավարդ Հակոբյան, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ., Եր., 1985 թ., էջ 85:

[12] Քնարիկ Ավետիսյան, Սողքի 16-17-րդ դդ. խաչքարի պատկերագրությունը, «Ավարայր» ամսագիր, Եր., 1999 թ., թիվ 2., էջ 7-12:

Ոսկի, արծաթ թելերի բարդ ասեղնագործությամբ վարպետը մանրանկարչության բնորոշ ճշտությամբ վերարտադրել է ոչ միայն հովվապետի հանդերձանքի մանրամասները, այլև սրբի՝ ծերունազարդ, պատկառազդու, համաչափ դիմագծերով դեմքի արտահայտչականությունը:

Հայոց դարձի պատմությանը նվիրված և միջնադարյան արվեստում տարածված «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը» կամ «Էջմիածնի հիմնադրումը» անվանումով հայտնի հորինվածքը գրավել է նաև ոստայնանկ վարպետների ուշադրությունը: Էջմիածնի Մայր Տաճարին նվիրաբերված, գեղարվեստական փայլուն կատարումով առանձնացող, այս թեմայով երկու վարագույրները հիշատակեցինք վերևում: Դրանցից առաջինի հեղինակը, ինչպես նշում է Մանյա Ղազարյանը, «Կ. Պոլսի անվանի հրատարակիչ և նկարիչ Գրիգոր Մարզվանեցին է, որի նախանկարով այն ասեղնագործվել է»[13]: Էջմիածնի վանքի գանձերից մեկը համարվող այս վարագույրի կենտրոնական մեծ հատվածի վերևում՝ ամպերի շղթայի ներսում ճառագայթվող լուսապսակի մեջ, Հայր Աստծո պատկերն է, հորինվածքի ուղղահայաց առանցքին՝ ոսկերից բոլորակում, աղավնակերպ Սուրբ Հոգու, որից ներքև, նույնպիսի բոլորակում՝ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի «հրեղեն այրը», ավելի ցած՝ կամարի տակ, մեր «աղոթքի ու խնդրանքի տան և քահանայապետության Աթոռի»[14], այն է՝ Էջմիածնի Մայր Տաճարի պատկերներն են: Տաճարի կողքին տեղ են գտել Գրիգոր Լուսավորչի և հրեշտակի, մյուս կողմում՝ երկու այլ հայրապետերի պատկերները: 1741 թվականին ասեղնագործված վարագույրի վրա Գրիգոր Լուսավորչի կողքին պատկերված է աղոթքի ձևով՝ ձեռքերը կրծքին չոքած, արքայական հանդերձանքով և խոզի գլխով Տրդատ թագավորը: Եթե նկատի ունենանք այն իրողությունը, որ խոզագլուխ թագավորի պատկերները տարածված են եղել 4-7-րդ դարերի քանդակազարդ կոթողների վրա, ապա հասկանալի կդառնա ազգային արվեստի ակունքների հետ սերտ կապի այս դրսևորումը:

Դանձատանը պահպանվող 1790 թվականին դաջված մի վարագույրի վրա պատկերված են հայոց հովվապետերը և պետական գործիչները: Հորինվածքի վերևում, ավանդական ձևով, ամպերի շղթայի ներսում Սուրբ Երրորդության պատկերն է, որից ներքև՝ կենտրոնում, կանգնած է Գրիգոր Լուսավորիչը, իսկ նրա շուրջը տարբեր դիրքերով նստած են Հայրապետերը: Գեղարվեստական արժեքից բացի, վարագույրը պատմական և ճանաչողական մեծ նշանակություն է ձեռք բերում շնորհիվ այն բանի, որ թվերով նշված յուրաքանչյուր անձի անունը հերթականու-

---

[13] «Գանձատուն Ալեք և Մարի Մանուկեան» (Ալբոմ), Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

[14] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն (քննական բնագիր և աշխարհաբար թարգմանություն), Եր., 1983 թ., էջ 421:

թյամբ գրված է ներքնի մակագրության մեջ: Այսպես. Ս. Գրիգոր Լուսավորիչ. Ս. Սահակ Պարթև. Ս. քաջն Վարդան և դուստրն Շուշանիկ. Գրիգոր Մագիստրոս. Գրիգոր Պահլավունի, Ներսես Շնորհալի և այլք:

Հայաստանում և հայաշատ գաղթօջախներում ստեղծված Ավագ խորանի վարագույրների ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ ժամանակի ընթացքում մշակվել և կանոնակարգվել է դրանց ձևավորումը: Բերված օրինակները արդեն հավաստում են տերունական տոնարանների թեմատիկ բազմազանությունը և ավանդական պատկերների մեկնաբանման այն յուրահատկությունները, որոնք հատկանշական են ժողովրդական արվեստին: Հարկ է նշել այն իրողությունը, որ եթե դաջված գործերի նկարազարդումների վրա տեսնում ենք նաև եվրոպական երկրներում տպագրված փորագրությունների որոշ ազդեցություններ, ապա ասեղնագործ վարագույրների հարդարանքում դրսևորվում են միջնադարյան կերպարվեստից սնունդ առած ազգային ավանդական ձևերը: Ավագ խորանի վարագույրները եկեղեցու ծիսարարողություններում գործածվող հյուսված առարկաների մի փոքր մասն են կազմում, որոնք իրենց գեղարվեստական բարձրարվեստ ձևավորումներով հարստացնում են դարավոր ճանապարհ անցած հայ դեկորատիվ-կիրառական արվեստի գանձարանը:

# ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

*ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ*

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԸ ԵՎ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Ժամանակակից էկումենիկ շարժումը ծնվել է Արևմտյան քրիստոնեության ընդերքում XIX դարի վերջում և օբյեկտիվորեն մի նոր երևույթ է, որի հետ Եկեղեցին մինչև այդ դեռ չէր առնչվել: XX դարում այն զարգացավ՝ իր մեջ ներգրավելով քրիստոնեության համարյա բոլոր թևերը ու մեծ թափ ստացավ: Կարծում եմ, որ հաջորդ դարը կդառնա էկումենիկ շարժման զարգացման մի նոր փուլ, և որ ընկերային ոլորտում միջեկեղեցական համագործակցությունը կլինի այդ շարժման հիմնաքարերից մեկը:

2000 թվականը սկսվեց էկումենիկ աննախադեպ արարողությամբ՝ Կաթողիկե Եկեղեցու քահանայապետ Հովհաննես Պողոս Բ-ն, Անգլիկան Եկեղեցու առաջնորդ, Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերիի և օրթոդոքս միտրոպոլիտ Աֆանասիի հետ բացեց Վատիկանի Պետրոս և Պողոս առաքյալների տաճարի դռները: Այդ իրադարձության էկումենիկ բնույթը խանդավառ կերպով ընկալեց հատկապես երիտասարդությունը: Արդի ժամանակաշրջանում՝ ինֆորմատիկայի, գլոբալ տնտեսական, գիտական, մշակութային կապերի, միևնույն ժամանակ ահաբեկչության, տեղային բնույթ ունեցող պատերազմական հակամարտությունների, հեգեմոնիզմի, անջատողականության և ազգամիջյան բախումների դարում, էկումենիկ գաղափարները, միջեկեղեցական կապերը, երկխոսությունը Եկեղեցիների գործունեության կարևորագույն տարրերից մեկն են:

Հայաստանը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մեծ կարիք ունեն այդպիսի կապերի ընդհանրապես և ընկերային ոլորտում՝ մասնավորապես: Նախ այն պատճառով, որ խորհրդային տարիների ընթացքում, զրկված լինելով հասարակության ընկերային կյանքին ակտիվորեն մասնակցելու իրավունքից, կորցրել էր նախկինում գոյություն ունեցող ավանդույթները ու հարուստ փորձը: Բացի դրանից, Հայ Եկեղեցին չունի անհրաժեշտ նյութական միջոցներ այսօրվա Հայաստանի ընկերային հսկայական կարիքների նույնիսկ մի մասը դարմանելու համար: Պետական համապատասխան համակարգը նույնպես շատ թույլ է, որն իր հերթին բացատրվում է տնտեսության ընդհանուր թուլությամբ: Մեր կարծիքով որևէ միտում չի նկատվում, որ մոտ ապագայում այդ իրավիճակը արմատական փոփոխությունների կենթարկվի, և մեր պետությունը իր վրա կվերցնի ընկերային ծառայության լիակատար և համարժեք ֆինանսավորումը, կստեղծի համապարփակ համակարգ: Ուրեմն, Հայ Եկեղեցին, արտասահմանյան քույր Եկեղեցիների օգնությամբ, կարող է լրացնել այդ բացը, իսկ հետագայում իր վրա վերցնել ընկերային ծառայությունների մի մասի պատասխանատվությունը:

Մյուս կողմից, արևմտյան միջեկեղեցական օգնության զրասենյակները, ինչպես նաև այլ կազմակերպություններ, Հայաստանում աշխատելիս ձգտում ունեն համագործակցել այնպիսի հեղինակավոր գործընկերոջ հետ, ինչպիսին Հայ Եկեղեցին է: Եթե Արևմուտքը շահագրգռված է հետխորհրդային տարածքում իսկապես քաղաքացիական, ժողովրդավարական հասարակարգի ստեղծմանը նպաստելու, այն պիտի աշխատի Հայաստանում, պիտի համագործակցի երկրում գոյություն ունեցող հասարակական կազմակերպությունների, Եկեղեցու հետ: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, համաձայն վերջին տարիների գործընթացների, ընթանում է հավասարության և փոխադարձ հարգանքի ոգու վրա կառուցված համագործակցության ուղիով: Այն ակտիվորեն ձգտում է եղբայրական սերտ հարաբերություններ հաստատել քրիստոնյա այլ Եկեղեցիների, մարդասիրական միջազգային կազմակերպությունների հետ: Այդ կապերը նկատելիորեն ամրացան, բազմազան դարձան վերջին տասնամյակում: Դրա վկայությունն են համատեղ տարբեր ծրագրերը, որոնք կատարվել են կամ կատարվելու են այլ Եկեղեցիների մասնակցությամբ: Դրա վկայությունն են նաև էկումենիկ տարբեր խորհուրդներին, կազմակերպություններին, համաժողովներին մասնակցությունը, Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների և աշխարհական ներկայացուցիչների ելույթները տարբեր էկումենիկ ու միջեկեղեցական հանդիպումների ժամանակ: Այստեղ մշտապես ընդգծվում է մեր Եկեղեցու ազատ, հավասար, փոխհարգանքի ու փոխճանաչման դիրքորոշումը այլ քրիստոնյա Եկեղեցիների նկատմամբ: Դրա լավագույն ապացույցներից է Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ և Կաթոլիկ Եկեղեցու հովվապետ Հովհաննես Պողոս Բ-ի հանդիպումը Վատիկանում և դրա ընթացքում ընդունված համատեղ հայտարարությունը, որտեղից տեղեկանում ենք, որ «Մենք հաստատում ենք, որ Կաթոլիկե և Հայաստանյայց Առաքելական Եկեղե-

ցիները ունեն ճշմարիտ խորհուրդ, եպիսկոպոսների առաքելական հաջորդականություն, քահանայություն և հաղորդություն: Մենք շարունակում ենք աղոթել հանուն մեր միջև տեսանելի ու լիակատար միության հաստատման: Պատարագը, որը մենք համատեղ մատուցեցինք, խաղաղության կոչերը, որոնք մենք փոխանակեցինք, և օրհնությունը, որ մենք հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի համատեղ տվեցինք, վկայում է այն մասին, որ մենք եղբայրներ ենք եպիսկոպոսության մեջ»: Այս համատեղ հայտարարությունը կարևորում ենք նաև այն պատճառով, որ նույնիսկ այժմ որոշ մեծ Եկեղեցիների ներկայացուցիչներ հակված են մեր Եկեղեցին դիտել որպես անցյալի մի արևելյան Եկեղեցի, որը պահպանել է «դարավոր ու հազարամյա ավանդույթը, սահմանափակվել է միայն իր ծիսական կյանքով և դարձել, այսպես ասած, հնացույն մի երանելի ժամանակաշրջանի բեկոր»: Ակտիվորեն մասնակցելով մեր երկրի հասարակական կյանքի բազում, հատկապես ընկերային ոլորտներին, ինչպես նաև էկումենիկ շարժմանն արտասահմանում, լայնածավալ միջեկեղեցական կապեր հաստատելով, մենք կապացուցենք այդ պատկերի թյուր լինելը:

«Էկումենիզմ» բառն ունի մի քանի իմաստներ: Այսօր այն մեկնաբանվում է որպես միջեկեղեցական ասոցիացիաների ստեղծում, համատեղ աղոթքներ, աստվածաբանական քննարկումներ, քրիստոնեական Եկեղեցիների միջև գործնական համագործակցություն: Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդն այսօր էկումենիկ շարժման ճանաչված կենտրոնն է: Այն միավորում է ավելի քան 100 երկրների 330 քրիստոնեական Եկեղեցիներ, որոնց անդամների ընդհանուր թիվը գերազանցում է 400 միլիոնը:

ԵՀԽ նպատակ չունի միավորել անդամ Եկեղեցիները և ստեղծել մի «գերեկեղեցի», ոչ էլ պաշտամունքի ձևերը նույնացնել, ինչպես երբեմն կարծում են պարզունակ բացատրությունների կողմնակիցները: Նրա նպատակն է՝ խորացնել քրիստոնեական Եկեղեցիների համագործակցությունը: Համաձայն ԵՀԽ կողմից ընդունված փաստաթղթերից մեկի՝ քրիստոնյա Եկեղեցիների էկումենիկ համագործակցությունը ամփոփվում է «միություն բազմազանության մեջ» բանաձևով: Այդ սկզբունքին հետևելը Եկեղեցիների ինքնությանը և անկախությանը չի սպառնում: Միշտ չէ սակայն, որ ԵՀԽ միավորված ու համերաշխ է գործում: Քանբերայում ու Հարարեում կայացած ԵՀԽ VII, VIII ասամբլեաների ժամանակ ու դրանից հետո բացահայտվեցին մի շարք Օրթոդոքս Եկեղեցիների ներկայացուցիչների մտահոգությունները ԵՀԽ դիրքորոշումների վերաբերյալ: Խոսքը ծիսակատարությունների ընթացքում ժամանակակից լեզվի կիրառության, կանանց ձեռնադրման, սեռական փոքրամասնությունների և մի քանի այլ խնդիրներին ԵՀԽ վերաբերմունքի մասին է: Ներքին խժդժությունների ու անհամաձայնությունների պատճառով ԵՀԽ-ից դուրս եկան Վրացական և Բուլղարական Եկեղեցիները: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որն ավանդորեն դասվում է հին ուղղափառ Արևելյան Եկեղեցիների թվին, այդ պարագայում ունի հստակ դիրքորոշում. մենք, պահպանելով մեր

Եկեղեցում բնորոշ ավանդույթները և յուրօրինակությունը, ակտիվորեն մասնակցում ենք ԵՀԽ աշխատանքներին ու նախաձեռնություններին:

Միջեկեղեցական օգնության ժամանակակից հասկացությունը սկսել է ձևավորվել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այդ կոնցեպցիան սկզբում սահմանափակվում էր օգնությամբ միևնույն Եկեղեցու տարբեր մասերի միջև, ասենք՝ Կանադայի Մեթոդիստ Եկեղեցին օգնում է Գանայի մեթոդիստներին: Մեզանում այդ տիպի կապեր գոյություն են ունեցել շատ ավելի վաղ ժամանակներից: Հետագայում օգնությունը, աջակցությունը հատեցին ոչ միայն աշխարհագրական, այլ նաև դավանաբանական սահմանները, ասենք՝ Արևմտյան Եկեղեցիները օգնում էին Հնդկական կամ Աֆրիկյան տարբեր Եկեղեցիներին: ԵՀԽ ստեղծումը մեծապես խթանեց այդպիսի օգնության տարածմանը: 1948 թ. միջեկեղեցական օգնության գաղափարը դարձավ այդ կազմակերպության գործունեության հիմնաքարերից մեկը: Այդ օրերից ի վեր միջեկեղեցական օգնության բաժինը ամենակարևորներից մեկն է ԵՀԽ համակարգում: 1961 թ. այդ բաժինը նոր մանդատ ստացավ՝ «Եկեղեցիներին էկումենիկ համերաշխություն արտահայտել համատեղ օգնության միջոցով՝ դրանց կյանքը, առաքելությունը և ծառայությունը ուժեղացնելու նպատակով»: Հենց այդ ժամանակաշրջանում սկսեցին զարգանալ նաև կապերը Միավորված ազգերի կազմակերպության հետ: ՄԱԿ-ի երկու մեծածավալ զարգացման ծրագրերի շրջանակում սկսվեց համագործակցությունը ԵՀԽ և նրա անդամ երկրների միջեկեղեցական օգնության գրասենյակների հետ: Այդ ժամանակահատվածը բնորոշվում է հարավային կիսագնդում մի շարք գյուղատնտեսական, բժշկական, կրթական և սոցիալական ծրագրերի իրականացմամբ: Ծրագրերի կատարման ընթացքի հետ զուգահեռ՝ սկսեցին զարգանալ ու մասնագիտանալ միջեկեղացական օգնության գրասենյակներն ու կազմակերպությունները Արևմուտքում, փոխվեցին միջեկեղեցական օգնության գրասենյակների աշխատանքների շրջանակները, քանի որ շատերը ֆինանսավորվում էին պետական աղբյուրներից և արդեն չէին կարող սահմանափակվել միայն քրիստոնյաների համար կատարվող ծրագրերով: Ավելի մեծ տեղ հատկացվեց ոչ միայն զուտ ֆինանսական օգնությանը, այլ նաև զարգացման, խորհրդատվական և տեղեկատվական ծրագրերին: Այդ աշխատանքներում փորձ արվեց շեշտը դնել ոչ թե դոնորի տեսակետից ամենաշահեկան ծրագրերի վրա, այլ նրանց վրա, որոնք ամենից կարևոր են առաջարկողների, շահառուների համար: Այստեղ էլ, սակայն, նկատվում է հստակ միտում համակարգել ու ընդհանուր հայտարարի բերել տարբեր երկրներում կուտակված փորձը ու դրա հիման վրա մի պատրաստի ունիվերսալ «դեղատոմս» առաջարկել: Օրինակ, գրեթե բոլոր միջազգային դոնոր կազմակերպությունների համար, այսպես կոչված, «կանանց ծրագրերը» առաջնահերթ կարևորություն ունեն: Գրան անմասն չմնացին նաև ԵՀԽ շրջանակներում գործող միջեկեղեցական օգնության զանազան գրասենյակները: Հանրահայտ «Էկումենիկ վարկային հիմնադրամ» կազմակերպության կանոնադրության մեջ կա, օրինակ, այդ կազմակերպությանն ան-

դամակցելու մի այսպիսի նախապայման. «նախագահության անդամների կեսից ավելին կանայք պետք է լինեն»: Մենք պատրաստ ենք անկեղծորեն քաջալերել կանանց մասնակցությունը նման ծրագրերում, սակայն սեռական խտրականությունը, մեր կարծիքով, նսեմացնում է հենց կանանց՝ անտեսում մոտիվացիան ու կոնկրետ երկրի առանձնահատկությունները:

Միջեկեղեցական օգնության գրասենյակների ու ԵՀԽ աշխատանքների վրա մեծապես ազդում են աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները: Վերջին տասնամյակի ամենանշանակալիցն, անշուշտ, այն փոփոխություններն էին, որոնք տեղի ունեցան Արևելյան Եվրոպայի ու նախկին Խորհրդային Միության տարածքներում: Կոմունիստական համակարգի փլուզումը հսկայական մի նոր դաշտ բացեց միջեկեղեցական օգնության գրասենյակների գործունեության համար, թեև Արևելյան Եվրոպայի ու նախկին Խորհրդային Միության երկրները չի կարելի թույլ զարգացած երկրների շարքին դասել. անցման գործընթացները ցավոտ ու դժվարին են բոլորի համար: Այս տարածաշրջանում սկսեցին կազմավորվել ԵՀԽ Կլոր սեղաններ, ու սկիզբ առան երկրների զարգացմանն աջակցող ծրագրեր: Հետագայում Եվրոպայում ստեղծվեց Արևմտյան էկումենիկ գրասենյակների ու Արևելյան Կլոր սեղանների գործունեությունը համակարգող մի խորհուրդ, որի նախագահության անդամ է նաև Հայաստանի ներկայացուցիչը:

Միջեկեղեցական փոխօգնության և համագործակցության էկումենիկ սկզբունքների վրա է կառուցված դեռ 1992 թ. հիմնադրված ԵՀԽ Հայաստանի Կլոր սեղանը (ԿՍ): Այսօր Հայաստանի ԿՍ անդամներ են Հայաստանյայց Առաքելական, ինչպես նաև Կաթոլիկե և Ավետարանական Եկեղեցիները, Հայաստանում գործող մի շարք հասարակական, բարեգործական կազմակերպություններ: Դրանց թվին են պատկանում «Շեն», «Առաքելություն Հայաստան», «Ս. Սանդուխտ», «Նուարդ» և այլ կազմակերպություններ: ԿՍ դրամական միջոցներ է ստանում բրիտանական Քրիստոնեական օգնության, ամերիկյան միացյալ մեթոդիստների, գերմանական բողոքական Եկեղեցու զարգացման ծրագրերի, Նիդերլանդների կաթոլիկ և բողոքական, շվեյցարական բողոքականների, դանիական եկեղեցական օգնության գրասենյակներից, «Դանիական հայկական առաքելություն», «Հայաստան հիմնադրամ» շվեյցարական և այլ կազմակերպություններից, ինչպես նաև անհատ, հիմնականում հայազգի, բարերարներից:

Մարդասիրական, ինչպես նաև զարգացման տարբեր ծրագրեր իրագործելու համար 1997 թ. ստեղծվում է էկումենիկ գործընկերների կողմից ֆինանսավորվող ԿՍ գրասենյակը, որը տեղակայված է Ս. Էջմիածնում: Գրասենյակի հիմնական նպատակներն են այդ ծրագրերի միջոցով նպաստել Հայաստանի ծանր տնտեսական վիճակի բարելավմանը, ամրապնդել Եկեղեցու ու ժողովրդի կապը, ստեղծել բարենպաստ պայմաններ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Հայաստանում գործող այլ Եկեղեցիների միջև եղբայրական համագործակցության մթնոլորտի համար: Գաղտնիք չէ, որ Հայաստանում Եկեղեցին իր գործունեությունն ապա-

հովելու համար չի ստանում ո՛չ պետական նյութական օժանդակություն, ո՛չ էլ էական ու հաստատուն եկամուտի աղբյուրներ ունի: Խորհրդային կարգերի փլուզումից հետո սեփականաշնորհման ընթացքում անտեսվեց Եկեղեցու իրավունքը՝ ետ ստանալու 70 տարի առաջ բռնագրավված սեփականության մեծ մասը: Այս պայմաններում եկամուտի աղբյուրներ ստեղծելու հնարավորություններից մեկն էլ Եկեղեցու համար կարող են դառնալ զարգացման ինքնաբավ ծրագրերը, որոնք, աշխատատեղեր ստեղծելուց բացի, կնպաստեն Եկեղեցու ֆինանսական որոշակի ինքնուրույնությանը:

ԿՍ գործունեությունը նպաստում է միջեկեղեցական համագործակցությանը ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Հատկանշական է, որ ԿՍ ծրագրի ստեղծումից ու հաջող զարգացումից հետո հնարավորություն ընձեռվեց Հայաստանում հիմնել այլ էկումենիկ կազմակերպություններ: Դրանցից առաջին հերթին նշեմ Էկումենիկ եկեղեցական վարկային հիմնադրամի (ԷԵՎՀ) Հայաստանի մասնաճյուղը, որի ստեղծումը ԿՍ վարկային ծրագրի տրամաբանական զարգացումն էր: Ի դեպ, Հայաստանը առաջինն էր ետխորհրդային հանրապետություններից, որտեղ ստեղծվեց ԷԵՎՀ մասնաճյուղ: Այժմ մեր օրինակին են փորձում հետևել Ռուսաստանը և Վրաստանը: Էկումենիկ եկեղեցական վարկային հիմնադրամը հիմնադրվել է որպես շվեյցարական շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն՝ նպատակ ունենալով օգնել եվրոպական երկրների քրիստոնյաներին ետպատերազմյան դժվարին տարիներին: Պատերազմի ընթացքում քանդված բազմաթիվ եկեղեցիների վերականգնման անհրաժեշտությունը դրդապատճառ հանդիսացավ հատուկ վարկային հիմնադրամ ստեղծելու համար: 1948 թ. ԷԵՎՀ մտավ ԵՀԽ կազմի մեջ որպես միջեկեղեցակամ օգնության բաժնի մի մաս: 1970 թ. ԷԵՎՀ սկսեց վարկավորել ոչ միայն զուտ եկեղեցաշինական ու Եկեղեցու հետ անմիջականորեն կապված, այլ նաև ընդհանուր զարգացման ծրագրեր: ԷԵՎՀ գործունեության շրջանակների այս ընդլայնումը ծնեց այն հասկացությունը, որ ԷԵՎՀ միայն ֆինանսական հիմնադրամ չէ: Այն կարող է և պետք է ձևավորի նաև նոր վերաբերմունք դեպի Եկեղեցին, իսկ տեխնիկական ու խորհրդատվական ծառայությունները պիտի նվազեցնեն դրսից անվերջ օգնություն ակնկալելու մտայնությունը: ԷԵՎՀ-ի համընդհանուր քաղաքականությունն է լրացնել բանկային համակարգում գոյություն ունեցող բացերը, վարկեր տրամադրել շուկայականից ցածր տոկոսադրույքներով, վարել ճկուն վարկային քաղաքականություն, որը հաշվի կառնի վարկավորվող ծրագրի բնույթը: Այս վարկերը նախատեսված են առաջին հերթին այն մարդկանց խմբերի համար, ովքեր չեն կարող դիմել բանկերին՝ վարկ ստանալու նպատակով: Պատճառները մի քանիսն են. ներկայացվող ծրագրի պարզունակ ու փոքր լինելը, լիարժեք բիզնես ծրագիր ներկայացնելու անկարողությունը, բանկային տոկոսադրույքը, բանկի համար առաջարկվող գրավի անընդունելի լինելը և այլն: Թվում է, թե այդ պայմանները պիտի նկատելիորեն նվազացնեն ետ վճարվող վարկերի տոկոսը: Սակայն, կուտակված փորձը ցուց է

տալիս, որ դա այդպես չէ, և հասարակական վարկային կազմակերպությունների այդ ցուցանիշը նույնիսկ գերազանցում է բանկերինը:

ԿՍ մյուս կարևոր նախաձեռնությունն է Էկումենիկ տեղեկատվական կենտրոնի կազմակերպումը Երևանի պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետում: Այս նորաստեղծ հասարակական կազմակերպության նպատակն է հիմնականում ուսանող երիտասարդության շրջանում տեղեկատվություն սփռել Էկումենիկ շարժման պատմության և արդի փուլի մասին, դասախոսություններ, հանդիպումներ, այլ միջոցառումներ կազմակերպել քրիստոնեության զարգացման, տարածման մասին, քննարկումներ կազմակերպել Հայ Եկեղեցու փոխհարաբերությունների մասին քույր Եկեղեցիների հետ, տարբեր մասնագետներ, հոգևորականներ հրավիրել զրույցների՝ երիտասարդների հետ հանդիպումների համար: Ինչպես հայտնի է, խորհրդային 70 տարիների ընթացքում կրոնը, Եկեղեցին անտեսված են եղել, և սերունդներ են մեծացել՝ զուրկ տարրական տեղեկություններից կրոնի պատմության, նրա դերի ու նշանակության մասին մարդկային հասարակության զարգացման տարբեր փուլերում: Մեր ժողովուրդը, մի հոգևորականի խոսքերով, կարիք ունի նորից մկրտվելու: Այս պայմաններում քրիստոնեական կրթության, կիրակնօրյա դպրոցների դերը անչափ կարևոր է: ԿՍ իր կրթական ծրագրերում անդրադարձավ այդ իրավիճակին՝ միջոցներ տրամադրելով հանրակրթական և կիրակնօրյա դպրոցների կրոնի դասագրքեր տպագրելու համար: ԿՍ աջակցությամբ Երևանի պետական համալսարանի, հոգևոր ճեմարանների մի քանի ուսանողներ և շրջանավարտներ մեկնեցին վերապատրաստման ու կատարելագործման Եվրոպայի առաջնակարգ համալսարաններում, կամ մասնակցեցին ԵՀԽ կողմից կազմակերպված դասընթացների:

Ընկերային ծառայությունները, որոնք նախկինում գտնվում էին պատշաճ բարձրության վրա, Խորհրդային Միության փլուզումից հետո նույնպես խիստ անկում ապրեցին: Մեծագույնս տուժեց հանրակրթական դպրոցների համակարգը: Վիճակը հատկապես դժվարին է գյուղական դպրոցներում, հեռավոր շրջաններում: Եկեղեցին այստեղ էլ փորձում է իր օգնությունը հասցնել: Գերմանական և շվեյցարական էկումենիկ կազմակերպությունների աջակցությամբ Սյունյաց թեմում կազմակերպվեց Վայոց Ձորի հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման կենտրոն, որտեղ պարբերաբար դասընթացներ են կազմակերպվում: Կազմավորման փուլում են գտնվում Գորիսի և Սիսիանի նմանատիպ կենտրոնները:

Արդի ժամանակաշրջանն իրավամբ համարվում է համակարգչային դար, համակարգչին տիրապետելը ձեռք է բերում նույն նշանակությունը, ինչ որ գրագիտությունը դարասկզբում: Մյուս կողմից, անգլերեն լեզուն դարձել է և՛ համակարգչի հետ աշխատելու, և՛ ազգամիջյան շփման ունիվերսալ միջոց: Հաշվի առնելով այդ, Էջմիածնում և Երևանում կազմակերպվել են անգլերեն լեզվի և համակարգչային ծրագրերին տիրապետելուն նպատակաուղղված դասընթացներ, որոնց կարիքա-

վոր ընտանիքների երեխաները մասնակցում են անվճար: Նման դասընթացներ կկազմակերպվեն Կոտայքի, Արագածոտնի և Շիրակի թեմերում:

Հայաստանի կույրերի միության և ծրագրավորողների մի խմբի հետ ձեռնամուխ ենք եղել հայերեն և ռուսերեն ծրագրերի ու հատուկ էլեկտրոնային սարքերի պատրաստմանը, որոնք հնարավորություն կտան կույրերին օգտագործել համակարգիչը, տեքստեր գրել և կարդալ:

ԿՍ ծրագրերի թվում են Գուգարաց և Սյունյաց թեմերում անապահով ընտանիքների երեխաների համար ամառային ճամբարների կազմակերպումը:

«Շեն» բարեգործական կազմակերպությունը՝ ԿՍ և Հայ Եկեղեցու վաղեմի գործընկերը, Սյունիքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի տասը գյուղերում կազմակերպել է չոր մրգի պատրաստման արտադրություն: Ծրագրի գաղափարը ծնվեց այն մտահոգությունից, որ հեռավոր գյուղերում նույնիսկ լավ բերքի պայմաններում գյուղացիները շատ ցածր եկամուտ են ստանում ճանապարհների վատ վիճակի, տեղական շուկայի գերհագեցվածության, բնակչության ցածր գնողունակության պատճառով: Շուկայական տնտեսություն կազմակերպելու համար ցանկացած տնտեսավարող սուբյեկտ պիտի կարողանա իր արտադրանքի համար բարենպաստ շուկա գտնել: Եթե մենք ցանկանում ենք մեր գյուղատնտեսական ապրանքներով միջազգային շուկա դուրս գալ, ապա պետք է բավարարենք շուկայի բոլոր պահանջները, լինենք մրցունակ և առաջարկենք ձեռնտու գներ: Ուրեմն, նույնիսկ մանր տնտեսություններում ստեղծած արտադրանքը պետք է լինի ստանդարտիզացված, համապատասխանի որակի արևմտյան խիստ չափանիշներին: Մենք պետք է ի վիճակի լինենք միանգամից և պատվիրատուի համար հարմար ժամանակ պահանջվող ապրանքի մեծ քանակություններ առաքել: «Շեն» միության մասնագետների կողմից մշակված ուրույն տիպի արևային չորանոցները կառուցվեցին վերը նշված շրջաններում, և պատրաստված ծիրանի չրի հենց առաջին նմուշները ապացուցեցին ընտրված տեխնոլոգիայի ճիշտ լինելը: Այսօր Հայաստանի և Կանադայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի շուկաներում կարելի է տեսնել «Շեն» միության «Չիր» դուստր ձեռնարկության գեղեցիկ փաթեթավորված չորացրած բարձրորակ ծիրանի և լոլիկի չիրի: Չորացման տեխնոլոգիան էկոլոգիապես մաքսիմալ մաքուր է, ծծումբի քանակը չի գերազանցում ամենախստապահանջ երկրների մաքսիմալ թույլատրելի քանակները: Երբ մենք խորհրդակցեցինք շվեյցարական ԷՊԵՐ կազմակերպության մեր էկումենիկ գործընկերների հետ, նրանք հայտնեցին իրենց մտահոգությունը, որ կոնսերվանտի քանակը չնայած չի գերազանցում առավելագույն թույլատրվածից, սակայն բավականաչափ մոտ է դրան, իսկ այդպիսի սննդամթերքը, չնայած թույլատրվում է վաճառել Շվեյցարիայում, լավ գնահատական չի կարող արժանանալ սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների կողմից: Նշվեց նաև, որ եթե մենք ցանկանում ենք օժանդակություն ստանալ ԷՊԵՐ կազմակերպությունից՝ Շվեյցարիայից պատվերներ ստանալու գործում, պետք է անպայման փորձենք, որակը չգցելով, իջեցնել կոնսեր-

վանտի քանակը. հակառակ պարագայում ԷՊԵՐ եկեղեցական կազմակերպության համար դժվար կլինի այդպիսի արտադրանքի իրացման շուկա գտնել: Այժմ այդ նպատակին հասնելու համար մեր երկու գործընկեր կազմակերպությունները՝ «Ծենը» և «Բիոէկոմեդ» գիտնականների միությունը, մի հատուկ ծրագիր են պատրաստել: Համոզված եմ, որ խնդիրը կլուծվի ըստ պատշաճի, և մենք ի վիճակի կլինենք համարձակ դուրս գալ եվրոպական շուկա: Այս ծրագրի կարևոր տարրերից է լինելու նրա արդյունքների հետ Հայաստանում մյուս չիր արտադրողներին ծանոթացնելը: Ընդհանրապես, մենք մեր տեխնոլոգիական նորամուծությունների, աշխատանքի ընթացքում կուտակված փորձի, գործած սխալների վերլուծության գաղտնիքները չենք պահում: Լայն տեղեկատվությունը միշտ էլ եղել է մեր ծրագրերի հիմնաքարերից մեկը: Ի՞նչ ստացան գյուղացիները «Ծեն» միության հետ այս ծրագրի կատարման ընթացքում: Պրակտիկ աշխատանքի փորձ ձեռք բերելուց բացի, նրանք համոզվեցին, որ հնարավոր է բարձր որակի, մրցունակ արտադրանք ստանալ նույնիսկ համեմատաբար փոքր ներդրումներ անելով, հասկացան, որ համատեղ, կոոպերատիվ աշխատանքը՝ ճիշտ կազմակերպման դեպքում, ավելի շահավետ է, նոր հավատով լցվեցին դեպի Եկեղեցին, որը պատրաստ ու կարող է իրենց օգնության ձեռք մեկնելու:

Մեկ այլ օրինակ, թե ինչպես է հնարավոր համատեղել ընկերային և շահութաբեր ծրագրերը Եկեղեցու աշխատանքում: Բրիտանական Քրիստոնեական օգնության և գերմանական բողոքական եկեղեցիների զարգացման ծրագրերի գրասենյակների ֆինանսական աջակցությամբ Արտաշատի շրջանի Մրգավան գյուղում գործող եկեղեցու հարևանությամբ հիմնադրվեց ալրաղաց: Իրավաբանորեն այն պատկանում է Եկեղեցուն, այսինքն՝ Արարատյան Հայրապետական թեմին, սակայն ալրաղացի եկամուտները կտնօրինվեն համատեղ՝ թեմի և գյուղի համայնքի կողմից մի հասարակական խորհրդի միջոցով, որի կազմում կընդգրկվեն ինչպես թեմի, այնպես էլ գյուղի ներկայացուցիչները:

Իհարկե, մենք քաջ գիտակցում ենք, որ թեմերի այդպիսի նորաստեղծ ծրագրերը, հատկապես սկզբնական շրջանում, կարիք ունեն մեթոդական օգնության և աջակցության, ուստի մենք կանենք հնարավոր ամեն ինչ, որ օգնենք թեմերին: Դա հատկապես էական է ստացված արտադրանքի համար սպառման շուկա գտնելու գործում:

Հայտնի է, որ 2000 թ. Հայաստանի գյուղատնտեսության համար չափազանց անբարենպաստ էր երաշտի պատճառով: Տուժել են կարտոֆիլաբուծությունը, հացահատիկային և կերային կուլտուրաները հատկապես անջրդի հողերում: Հաշվի առնելով այդ, մենք դիմել ենք ԵՀԽ հատուկ իրավիճակների գրասենյակ (ԱԿՏ)՝ տուժած գյուղերին օգնություն ցույց տալու խնդրանքով: Իհարկե, այս դիմումը կատարվել է Հայաստանում գործող մյուս պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ բազմակողմանի քննարկումներից և մեր հնարավորությունները կշռադատելուց հետո միայն: Կան ոեալ նախադրյալներ, որ դիմումը կբավարարվի,

և մենք հնարավորություն կունենանք տուժած շրջանների ամենակարիքավոր ընտանիքներին անվճար ալյուր բաժանել: Այդ կկատարվի թեմերի ակտիվ մասնակցությամբ, ինչը, մեր կարծիքով, կնպաստի օգնությունը հասցեատիրոջը անկորուստ հասցնելուն և կբարձրացնի Եկեղեցու հեղինակությունը: Կարծում ենք, ճիշտ կլինի, եթե ալյուրի գոնե մի մասը գնվի Արարատյան թեմին պատկանող ալրաղացից: Դրանով մենք գործնական օգնություն ցույց կտանք մեր նորաստեղծ ծրագրին, ինչ-որ ժամանակ կապահովենք այն աշխատանքով և հնարավորություն կստեղծենք ստացած եկամուտի մի մասը ուղղել գյուղի ընկերային կարիքների բավարարմանը:

Ակնհայտ է, որ հումանիտար օգնությունը անվերջ շարունակվել չի կարող, անզեն աչքով էլ երևում է դրա ծավալների նվազումը: Բարեգործական ճաշարանները, մանկատները, այլ նմանատիպ հաստատությունները վաղ թե ուշ պետք է անցնեն պետության հովանու տակ կամ Եկեղեցու միջոցով հովանավորվեն պետության կողմից, ինչպես դա արվում է, օրինակ, Գերմանիայում: Այժմ մեզանից, մեր ակտիվությունից է կախված, թե հետագայում պետությունը ինչ տեղ կհատկացնի Եկեղեցուն ընկերային աշխատանքների ոլորտում: Այդ իմաստով Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Հայաստանի Կլոր սեղանի գործունեությունը, ընդգծելով միջեկեղեցական կապերի կարևորությունը և փոխշահավետությունը, Հայ Եկեղեցու դերը քույր Եկեղեցիների ընտանիքում ամրապնդելու գործից բացի, ծրագրերի կատարման միջոցով Հայաստանի ընկերային վիճակը բարելավելուց բացի, կարող է կարևոր նախադրյալ ստեղծել, որ ապագայում, լայնորեն համագործակցելով պետական ծառայությունների հետ, Եկեղեցին իր ուրույն տեղը գրավի համապետական ընկերային կառուցվածքում: Դրա համար, կարծում եմ, այսօր մենք պետք է զբաղվենք ոչ միայն ակտիվ ու ամենօրյա պրակտիկ աշխատանքով, այլ նաև օգնենք, որ պատրաստվեն ու մշակվեն Հայ Եկեղեցու ընդհանուր սկզբունքներն ու մոտեցումները ընկերային ոլորտի աշխատանքների նկատմամբ:

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## «ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԼՈՒՅՍ ՆՇԽԱՐՆԵՐԸ»

*«Ի վերայ Աջին եւ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»:*
(Առաքել Դավրիժեցի)

Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը հայ ընթերցողին հայտնի է իր եկեղեցական, աստվածաբանական, բանասիրական ուսումնասիրություններով, հուշագրություններով, ճանապարհորդական նոթերով: Այդ աշխատանքները գրված են հավատավոր ու անկեղծ հեղինակի գրչով և ունեն բարոյադաստիարակչական մեծ արժեք: Հայ Եկեղեցու նվիրյալ հոգևորականի վերջին՝ «Լուսավորչի լույս նշխարները» ժողովածուն երևան եկավ պատշաճ պահին, երբ հայրենադարձվում էին մեր հավատի հոր՝ Գրիգոր Լուսավորչի լույս նշխարները: Կենդանաթաղ մարտիրոսի անունն ու գործը հայ ժողովրդի մշտական ուղեկիցն է արդեն 1700 տարի: Եվ հայ ժողովրդի համար նվիրական ու ոգեկոչող այդ տարելիցը արժանավորվեց Մեծ Սրբին նվիրված այս ժողովածուով ևս:

Այս հրատարակությունը նշանավորվում է նաև այն հանգամանքով, որ առաջնեկն է «Մուղնի» հրատարակչության: Մուղնիի Սուրբ Գևորգ վերաբացված վանքը և վանական համալիրը այսուհետև կշնչի ոչ միայն եկեղեցական արարողություններով, այլև գրական-հրատարակչական գործունեությամբ ևս:

Հեղինակի սույն ժողովածուն ունի ուրույն կառուցվածքային առանձնահատկություն, որով և պայմանավորվում է գրքի հանդեպ ցուցաբերված առկա հետաքրքրությունը: Գրքի առաջաբանում Սրբազան Հայրը ըստ արժանվույն կարևորում է քրիստոնեության մուտքը Հայաստան և համապատասխան մեծարանքի արժանացնում Սուրբ Գրիգոր Լուսավորչին, որը «մեր պատմության հորիզոնին է բարձրանում արարատանման վեհությամբ»: Եվ հեղինակի՝ որպես լուսավորչահաստատ

Հայոց Եկեղեցու խոնարհ սպասավորի նպատակն է այս գրքի միջոցով առավել մանրամասնորեն ծանոթացնել Հայոց Մեծ Սրբի կյանքի դրվագներին և ճանաչել տալ նրա սրբակենցաղ վարքը, որպեսզի հայը դեպի երկինք քայլելու ճանապարհ ունենա: Առաջաբանում հեղինակը խոսում է իր ուխտի մասին, որով փափագել էր Լուսավորչի վերադարձը մայր հայրենիք: Վերջերս ի կատար ածվեց Սրբազան Հոր ուխտը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետը հայրենիք վերադարձրեց Լուսավորչի լույս նշխարներից մի մասունք ևս:

Շատ տեղին է «Առաջաբանին» հաջորդող «Լումա» հանդեսից կատարված արտատպությունը: Այդ հատվածում ընթերցողին հանգամանալից կերպով ներկայացվում է հայոց դարձը, Լուսավորչով հիմնված քրիստոնեական Եկեղեցու պատմությունը: Այդ հատվածը, կարելի է ասել, Հայ Եկեղեցու պատմության մի համապարփակ դրվագ է: Այս դրվագին հաջորդող բաժիններում, որոնք նվիրված են Լուսավորչի չարչարանքներին և նշխարների տարագրությանը, հմուտ վերլուծաբանի գրչով կատարված է պատմահամեմատական վերլուծություն՝ հիմք ընդունելով հայ դասական մատենագրության համապատասխան հատվածները:

Դեպի Նեապոլ ուխտագնացություն կատարած Սրբազան Հայրը հանգամանորեն հիշատակում է այն հոգևոր և տեսանելի ազդեցությունները, որոնք կատարվել են Լուսավորչի նշխարների միջոցով: Ակամայից հարգանքով ու ակնածանքով ես լցվում այն օտարազգիների նկատմամբ, որոնք առանձնակի հավատքով ու երկյուղածությամբ են համակված եղել հայազգի սրբի մասունքների հանդեպ: Հավատացած ենք, որ այս գրքի ցանկացած ընթերցողի մեջ ևս նախանձախնդրություն կառաջանա օտարներից առավելապես պաշտելու ու սիրելու կենդանաթաղ սրբին ու հարգելու նրա հիշատակը:

Գրքում ամփոփված լուսանկարները ավելի դիտողական և ազդեցիկ են դարձնում շարադրանքը:

